ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարություն 20 փետրվարի, 2024 թ.

ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացի վավերացում

ԱՃԹՆ-ի Ստանդարտի իրականացման վերջնական գնահատում

ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարություն

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

Բովանդակություն

Հապավումներ....3

Ամփոփագիր....4

Վավերացման գնահատման քարտ....8

ԱՃԹՆ-ի Վավերացման գնահատման քարտի բացատրությունը....9

1. Արդյունավետության և կայունության ցուցանիշները....12

2. Արդյունքները և ազդեցությունը....16

3. Շահառուների ներգրավվածությունը....26

4. Թափանցիկությունը....37

Արդյունահանող ճյուղերի մոնիթորինգը (Պահանջներ 3.1, 6.3)....37

Իրավական շրջանակը և ֆիսկալ ռեժիմը (2.1, 2.4, 6.4 Պահանջներ)....40

Լիցենզիաները և սեփականության իրավունքները (2.2, 2.3 Պահանջներ)....45

Իրական սեփականությունը (Պահանջ 2.5)....49

Պետության մասնակցությունը (2.6, 4.2, 4.5, 6.2 Պահանջներ)....57

Արդյունահանումը և արտահանումը (3.2, 3.3 Պահանջներ)....59

Եկամուտների հավաքագրումը (4.1, 4.3, 4.4, 4.7, 4.8, 4.9 Պահանջներ)....63

Եկամուտների կառավարում (5.1, 5.3 Պահանջներ)....71

Տեղական ինքնակառավարման մարմիններին կատարվող վճարումները (4.6, 5.2, 6.1 Պահանջներ)....74

Նախապատմություն....81

Նյութեր....82

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

Հապավումներ

ՀՀԴ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՏՀ	Տարեկան հաշվետվություն
ԻՍ	Իրական սեփականատեր
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ԱՃԹՆ	Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ԱԱ	Անկախ ադմինիստրատոր
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ՓՀ	Փոխըմբռնման հուշագիր
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ԲԲԸ	Բաց բաժնետիրական ընկերություն
ՊՁ	Պետական ձեռնարկություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ԱԿ	Աշխատակարգ
Դոլար	ԱՄՆ դոլար

Ամփոփագիր

Վավերացման սույն հաշվեվտության մեջ ներկայացվում են Միջազգային քարտուղարության կողմից՝ ԱՃԹՆ-ի հայաստանյան գործընթացի վավերացման արդյունքները: Վավերացման գործընթացը մեկնարկել է 2023 թվականի հուլիսի 1-ին: Հաշվետվության աշխատանքային տարբերակը վերջնական տեսքի է բերվել՝ 2024 թվականի հունվարի 15-ին այն Բազմաշահառու խմբի (ԲՇԽ) դիտարկմանը ներկայացնելու նպատակով: Հիմնվելով ԲՇԽ-ի կողմից 2024 թվականի փետրվարի 12-ին արված մեկնաբանությունների վրա՝ Վավերացման հաշվետվությունը վերջնական տեսքի է բերվել՝ ներկայացվելով ԱՃԹՆ-ի խորհրդի դիտարկմանը: Համաձայն գնահատման՝ Հայաստանը գերազանցել է ԱՃԹՆ-ի մեկ պահանջը, լիովին բավարարել 24-ը, և գրեթե բավարարել երկու, ընդ որում, ԱՃԹՆ-ի վեց պահանջ գնահատվել է՝ որպես Հայաստանի համար ոչ կիրառելի:

Հիմնական ձեռքբերումները

- Չնայած աշխարհաքաղաքական լայն մարտահրավերներին և ԿՈՎԻԴ-19 համաճարակի ունեցած ազդեցությանը՝ Հայաստանը հավատարիմ է մնացել ԱՃԹՆ-ի նկատմամբ իր հանձնառությանը և ակտիվ աշխատանք է տարվել՝ ապահովելու Հայաստանի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի հիմնական գործողությունների իրականացումը: Քննարկումներին մասնակցած շահառուները նշել են, որ նախորդ վավերացումից ի վեր՝ սույն ժամանակահատվածը հատկապես խնդրահարույց էր՝ կապված Լեռնային Ղարաբաղի (Արցախի) տարածքային հակամարտության և ԿՈՎԻԴ-19 համաճարակով պայմանավորված սահմանափակումների հետ, ինչն էլ իր ազդեցությունն է ունեցել ազգային առաջնահերթությունների, ԱՃԹՆ-ի իրականացման շրջանակի և ԱՃԹՆ-ի գործընթացում ներգրավված շահառուների կարողությունների վրա: Չնայած այս մարտահրավերներին՝ պլանավորված գործողությունների մեծ մասն իրականացվել է, իսկ շահառուների հանձնառությունը՝ պահպանվել:
- Հայաստանը շարունակել է հետևողական առաջընթաց գրանցել մետաղական հանքարդյունաբերության ոլորտի ֆինանսական և ոչ ֆինանսական տվյալների բացահայտման հարցում և շարունակական ջանքեր գործադրել՝ ամրապնդելու համապատասխան տվյալների համակարգված բացահայտումը: Որոշ տեղեկություններ, ինչպիսիք են հանքարդյունաբերության թույլտվությունները և իրական սեփականության տվյալները, արդեն իսկ համակարգված կերպով բացահայտվում են պետական պորտալների միջոցով: Ավելին, Հայաստանի ԱՃԹՆ-ի տվյալների պորտալը տրամադրում է ֆինանսական տվյալներ և ոլորտային հիմնական ցուցանիշները: Շահառուների հետ խորհրդակցությունները վկայում են

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

պետական համակարգերի միջոցով տվյալների բացահայտման ամրապնդման և մետաղական հանքարդյունաբերության ոլորտի տվյալների՝ տարբեր պորտալների միջև ավելի լավ փոխգործունակության ապահովման շարունակական ջանքերի մասին:

- Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդման նպատակով համապատասխան օրենսդրության փոփոխման ուղղությամբ շարունակական առաջընթաց է արձանագրվել: Հասանելի փաստաթղթերում և շահառուների հետ խորհրդատվությունների արդյունքում վեր է հանվել նման բարեփոխումների մի քանի օրինակ, մասնավորապես՝ կապված իրական շահառուների թափանցիկության, բնապահպանական հարկերի և ռոյալթիների բաշխման հետ:

Բարելավման ենթակա ոլորտներ

- Թեև առկա փաստաթղթերում նշվում է իրազեկման, ինչպես նաև իրազեկման բարձրացման զգալի ջանքերի մասին, շահառուների հետ խորհրդակցությունները ցույց են տվել, որ հանրային կարողությունները և մետաղական հանքարդյունաբերության ոլորտի, ինչպես նաև ԱՃԹՆ-ի տվյալների հնարավոր կիրառման վերաբերյալ ըմբռնումը կարող է ավելի ամրապնդվել: Դրան կարելի է հասնել, օրինակ, քննարկելով ԱՃԹՆ-ի Ստանդարտից դուրս այնպիսի թեմաներ, որոնք բխում են հանրային և ազգային շահերից, ինչպիսին է պատասխանատու հանքարդյունաբերությունը:
- Խորհրդակցություններին մասակցած շահառուները նշել են տվյալների բացահայտման և տվյալների հասանելիության առումով շարունակական առաջընթացի մասին: Այնուամենայնիվ, ընդգծվել են նաև տվյալների օգտագործման հետագա բարելավման հնարավորությունները՝ նպատակ ունենալով խթանելու հետագա հանրային քննարկումները և աջակցելու մետաղական հանքարդյունաբերության ոլորտում բարեփոխումներին:
- Միջազգային վարկանիշները և շահառուների հետ խորհրդատվությունները հաստատում են քաղաքացիական հասարակության մասնակցության համար նպաստավոր միջավայրի առկայությունը՝ կապված համապատասխան կանոնակարգերի, ինչպես նաև ԱՃԹՆ-ի իրականացման փաստացի պրակտիկայի հետ: Այնուամենայնիվ, որոշ շահառուներ մտահոգություններ են հայտնել վերջին օրենսդրական բարեփոխումների՝ ապագայում հնարավոր կիրառման վերաբերյալ՝ ընդգծելով Հայաստանի ԱՃԹՆ-ի Բազմաշահառու խմբի՝ քաղաքացիական հատվածի հետ կապված զարգացումները մշտադիտարկելու անհրաժեշտությունը: Շահառուների հետ խորհրդակցությունները և առկա փաստաթղթերը վկայում են, որ այս բարեփոխումները չեն սահմանափակել քաղաքացիական հասարակության՝

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկայա 26 • www.eiti.org

հանքարդյունաբերության ոլորտի կառավարման վերաբերյալ իր տեսակետները արտահայտելու և դիտարկվող ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի գործընթացներին ներգրավվելու կարողությունը: Խրախուսվում է, որ ԲՇԽ-ն շարունակական մշտադիտարկում իրականացնի՝ ապահովելով քաղաքացիական հասարակության անխոչընդոտ մասնակցությունը ԱՃԹՆ-ի իրականացմանը և բնական ռեսուրսների կառավարման գործընթացին:

Առաջընթացի արձանագրում

ԱՃԹՆ-ի վավերացման համատեքստում երկրները գնահատվում են՝ ըստ երեք բաղադրիչների՝ «Շահառուների ներգրավվածություն», «Թափանցիկություն» և «Արդյունքներ և ազդեցություն»:

Շահառուների ներգրավվածություն

Չնայած մի շարք ազգային մարտահրավերներին՝ նախորդ վավերացումից ի վեր բոլոր խմբակցությունները լիովին, ակտիվ և արդյունավետ կերպով ներգրավված են եղել ԱՃԹՆ-ի գործընթացին: Խմբակցությունների՝ խորհրդակցություններին մասնակցած շահառուները ընդգծել են, որ ԱՃԹՆ-ն շարունակում է հանդիսանալ Հայաստանում մետաղական հանքարդյունաբերության ոլորտին առնչվող հարցերի քննարկման և թափանցիկության օրակարգը խթանելու օգտակար հարթակ: Միևնույն ժամանակ, շահառուները նշել են, որ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) տարածքային հակամարտությունը, ներառյալ 2020 թվականին ռազմական դրության հայտարարումը, և ԿՈՎԻԴ-19 համաճարակը նշանակալի ազդեցություն են ունեցել պետական առաջնահերթությունների, շահառուների կարողությունների, ԱՃԹՆ-ի իրականացման շրջանակի և տետատետ հանդիպումների հնարավորությունների վրա: Շահառուների հետ խորհրդակցությունները և առկա փաստաթղթերը վկայում են, որ ԲՇԽ-ի հաղորդակցման և որոշումների կայացման գործընթացների մեծ մասը իրականացվել է հեռավար քննարկումների և էլեկտրոնային հաղորդակցության միջոցով: Համաձայն «Շահառուների ներգրավվածություն» հարցաթերթի՝ ԲՇԽ-ն ընդունել է, որ ԲՇԽ-ի վերահսկողության նման մոտեցումներն ապահովում են ԱՃԹՆ-ի Ստանդարտի հիմնական գործողությունների իրականացումը և Ստանդարտի իրականացման գործում առաջընթացը, սակայն ընդունում է, որ տետատետ հանդիպումների թիվը բավարար չէ խնդիրների ամբողջական շրջանակին անդրադառնալու համար՝ կապված թափանցիկության և հաշվետվողականության օրակարգի ամրապնդման հետ: Քննարկումներին մասնակցած շահառուները նշել են, որ այս հարցը քննարկվել է ԲՇԽ-ի շրջանում՝ պայմանավորվածություն ձեռք բերելով առաջիկա տարիներին ավելացնել հանդիպումների թիվը:

Թափանցիկություն

Հայաստանը պահպանել և ամրապնդել է ԱՃԹՆ-ի բացահայտումների գործընթացը՝ անցնելով համադրման ավելի ռիսկահեն մոտեցման: ԱՃԹՆ-ի տվյալների մեծ մասը բացահայտվում է Հայաստանի ԱՃԹՆ-ի տվյալների պորտալի, ինչպես նաև համապատասխան պետական և ընկերությունների պորտալների միջոցով: Շահառուների հետ խորհրդակցությունները վկայում են բացահայտված ԱՃԹՆ տվյալների առկայության և համապարփակության առումով ընդհանուր բավարարվածության մասին, այդ թվում՝ տվյալների հավաքագրման և ներկայացման համատեքստում շարունակական բարելավումների մասին: Կան նաև վկայություններ օրենսդրական բարեփոխումների մասին, որոնք ուղղված են կարգավորումների ամրապնդմանը և տվյալների բացահայտման հետևանքով վերհանված որոշ խնդիրների լուծմանը: Քննարկումներին մասնակցած շահառուները նաև ընդգծել են թվայնացման ջանքերին հատկացված մեծ ուշադրության մասին՝ ներառյալ տարբեր պորտալներում տվյալների համակարգված բացահայտմանը և մետաղական հանքարդյունաբերության ոլորտին առնչվող տեղեկատվության փոխգործունակության ամրապնդման առումով: ԲՇԽ-ն կարող է դիտարկել ԱՃԹՆ-ի հաշվետվության միջոցով բացահայտված, հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության որակի և հավաստիության ստուգման ուղղությամբ հետագա աշխատանքը: Զուգահեռաբար, քննարկումներին մասնակցած շահառուները նշել են, որ ԿՈՎԻԴ-19 համաճարակը և ազգային մակարդակով այլ մարտահրավերներն իրենց ազդեցությունն են ունեցել բացահայտումների և տվյալների վերլուծության վրա, մասնավորապես՝ կապված այն ասպեկտների հետ, որոնք դուրս են ԱՃԹՆ-ի Ստանդարտից: Խրախուսվում է, որ ԲՇԽ-ն դիտարկի այնպիսի գործողություններ, որոնք կարող են նպաստել հանրային հետաքրքրություն ներկայացնող, նոր քաղաքականությունների ոլորտների քննարկումներին:

Արդյունքներ և ազդեցություն

Հայաստանը շարունակական առաջընթաց է գրանցել իրազեկ հանրային քննարկումների ապահովման, ԱՃԹՆ-ի իրականացման առաջարկություններին անդրադառնալու և ԱՃԹՆ-ի իրականացման արդյունքների վերանայման գործում: Դիտարկվող ժամանակահատվածում Հայաստանի ԱՃԹՆ-ն իրականացրել է իրազեկման և տեղեկատվության տարածման մի շարք միջոցառումներ՝ ներգրավելով տարբեր խմբակցությունների, այդ թվում՝ տեղական համայնքների ներկայացուցիչների: ԱՃԹՆ-ի հաշվետվությունը ներկայացված է հստակ և համակողմանի կերպով, ինչը լավ հիմքեր է տրամադրում տվյալների օգտագործման և վերլուծության համար: Խորհրդակցություններին մասնակցած շահառուները կարևորել են տվյալների հասանելիության ապահովման գործընթացում առաջընթացը՝ նշելով կարողությունների զարգացման ջանքերի հետագա ամրապնդման հնարավորությունների մասին՝ ապահովելու տվյալների ավելի կայուն օգտագործումը և ամրապնդելու մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ փաստահեն հանրային բանավեճը:

Հայաստանի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրերում սահմանված նպատակներին հասնելու առաջընթացը փաստաթղթավորվում և պարբերաբար վերանայվում է առաջընթացի եռամսյակային կամ կիսամյակային հաշվետվությունների միջոցով:

Վավերացման գնահատման քարտ

Բաղադրիչ և մոդուլ	ԱՃԹՆ-ի պահանջները	Առաջընթացի աստիճանը	Գնահատական	
Արդյունքներ և ազդեցություն		**Բարձր**	**92/100**	
Հավելյալ միավորներ	Արդյունավետության և կայունության ցուցանիշներ		2	
Արդյունքները և ազդեցությունը	Աշխատանքային ծրագիրը (#1.5)	Լիովին բավարարված	90	↓
	Հանրային բանավեճը (#7.1)	Լիովին բավարարված	90	=
	Տվյալների հասանելիությունը և բաց տվյալներ (#7.2)	Լիովին բավարարված	90	-
	ԱՃԹՆ-ի առաջարկությունները (#7.3)	Լիովին բավարարված	90	=
	Արդյունքներն ու ազդեցությունը (#7.4)	Լիովին բավարարված	90	=
Շահառուների ներգրավվածությունը		**Բարձր**	**90/100**	
ԲՇԽ-ի կողմից իրականացվող վերահսկողությունը	Կառավարության ներգրավվածությունը (#1.1)	Լիովին բավարարված	90	=
	Գործարար ոլորտի ներգրավվածությունը (#1.2)	Լիովին բավարարված	90	=
	Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը (#1.3)	Լիովին բավարարված	90	=
	ԲՇԽ-ի կառավարումը (#1.4)	Լիովին բավարարված	90	=
Թափանցիկությունը		**Բարձր**	**87/100**	
Արդյունահանող ճյուղերի մոնիթորինգը	Հետախուզման աշխատանքների մասին տեղեկությունները (#3.1)	Լիովին բավարարված	90	=
	Տնտեսական ներդրում (#6.3)	Լիովին բավարարված	90	↓
Իրավական և ֆիսկալ շրջանակը	Իրավական դաշտը (#2.1)	Լիովին բավարարված	90	↓
	Պայմանագրեր (#2.4)	Լիովին բավարարված	90	=
	Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը (#6.4)	Լիովին բավարարված	90	=
Լիցենզիաներ	Պայմանագրերի և լիցենզիաների տրամադրումը (#2.2)	Լիովին բավարարված	90	=

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

	Լիցենզիաների գրանցումը (#2.3)	Լիովին բավարարված	90	=
Սեփականություն	Իրական սեփականությունը (#2.5)	Գերազանցված	100	-
Պետության մասնակցությունը	Պետության մասնակցությունը (#2.6)	Ոչ կիրառելի	-	-
	Բնաիրային տեսքով եկամուտները (#4.2)	Ոչ կիրառելի	-	-
	ՊՁ-ի գործարքները (#4.5)	Ոչ կիրառելի	-	-
	ՊՁ-ի քվազի-ֆիսկալ ծախսերը (#6.2)	Ոչ կիրառելի	-	-
Արդյունահանումը և արտահանումը	Արդյունահանման մասին տվյալները (#3.2)	Լիովին բավարարված	90	=
	Արտահանման մասին տվյալները (#3.3)	Լիովին բավարարված	90	=
Եկամուտների հավաքագրումը	Համակողմանիությունը (#4.1)	Լիովին բավարարված	90	↓
	Ապրանքափոխանակության կարգավորումները (#4.3)	Ոչ կիրառելի	-	-
	Փոխադրումներից ստացվող եկամուտները (#4.4)	Ոչ կիրառելի	-	-
	Ապաագրեգացման աստիճանը (#4.7)	Լիովին բավարարված	90	=
	Տվյալների արդիականությունը (#4.8)	Լիովին բավարարված	90	=
	Տվյալների որակը (#4.9)	Գրեթե բավարարված	60	↓
Եկամուտների կառավարումը	Եկամուտների բաշխումը (#5.1)	Լիովին բավարարված	90	=
	Եկամուտների կառավարումը և ծախսերը (#5.3)	Չգնահատվող	-	-
Տեղական ինքնակառավարման մարմիններին կատարվող վճարումները	Տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղակիորեն կատարվող վճարումները (#4.6)	Լիովին բավարարված	90	=
	Տեղական ինքնակառավարման մարմիններ կատարվող փոխանցումները (#5.2)	Լիովին բավարարված	90	=
	Սոցիալական և բնապահպանական ծախսերը (#6.1)	Գրեթե բավարարված	60	↓
Ընդհանուր գնահատականը՝		**Բարձր**	**89.5/100**	

ԱՃԹՆ-ի Վավերացման գնահատման քարտի բացատրությունը

Բաղադրիչը և ընդհանուր գնահատականը

ԱՃԹՆ-ի վավերացման երեք բաղադրիչներն են՝ «Թափանցիկությունը», «Շահառուների ներգրավվածությունը» և «Արդյունքները և ազդեցությունը». յուրաքանչյուր բաղադրիչ գնահատվում է 100 միավորանոց համակարգով: Ընդհանուր գնահատականը բաղադրիչի միավորների միջին գնահատականն է:

Ցածր	Բավականին ցածր	Միջին	Բարձր	Շատ բարձր

ԱՃԹՆ-ի պահանջների գնահատում

Վավերացման գործընթացի միջոցով գնահատվում է, թե որքանով է բավարարված ԱՃԹՆ-ի յուրաքանչյուր Պահանջ՝ օգտագործելով հինգ կատեգորիա: Բաղադրիչի գնահատականը յուրաքանչյուր պահանջի համար տրված գնահատականների միջին միավորն է:

Չբավարարված	Մասամբ բավարարված	Գրեթե բավարարված	Լիովին բավարարված	Գերազանցված

- **Գերազանցված** (100 միավոր)՝ Պահանջի բոլոր, ներառյալ «ակնկալվող», «խրախուսվող» և «առաջարկվող» ասպեկտները, իրականացվել են, և պահանջի ավելի լայն նպատակն իրականացվել է պետական և ընկերությունների համակարգերում համակարգված բացահայտումների միջոցով:
- **Լիովին բավարարված** (90 միավոր)՝ կատարվել է տվյալ պահանջի ավելի լայն նպատակը, և իրականացվել են պահանջի բոլոր ասպեկտները:
- **Գրեթե բավարարված** (60 միավոր)՝ տվյալ պահանջի կարևորագույն ասպեկտները իրականացվել են և պահանջի ավելի լայն նպատակը գրեթե իրագործվել է:
- **Մասամբ բավարարված** (30 միավոր)՝ տվյալ պահանջի կարևորագույն ասպեկտները չեն իրականացվել և պահանջի ավելի լայն նպատակը իրագործված չէ:
- **Չբավարարված** (0 միավոր)՝ տվյալ պահանջի բոլոր կամ գրեթե բոլոր ասպեկտները դեռևս չեն իրականացվել և պահանջի ավելի լայն նպատակը շատ հեռու է կատարված լինելուց:
- **Չգնահատվող**՝ Բացահայտումները խրախուսվում են, սակայն չեն պահանջվում, ուստի և չպետք է հաշվի առնվեն համապատասխանությունը գնահատելիս:
- **Ոչ կիրառելի**՝ ԲՇԽ-ն ցույց է տվել, որ տվյալ պահանջը իրենց երկրում կիրառական չէ:

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

Այն դեպքում, երբ ապացույցները հստակորեն չեն հուշում որևէ գնահատականի մասին, շահառուների տեսակետները միևնույն հարցի շուրջ տարբերվում են, կամ Բազմաշահառու խումբը համաձայն չէ Քարտուղարության գնահատականի հետ, իրավիճակը նկարագրվում է գնահատման մեջ:

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

1. Արդյունավետության և կայունության ցուցանիշները

Երկրին շնորհվում է 0, 0.5 կամ 1 միավոր հինգ ցուցանիշներից յուրաքանչյուրի համար: Միավորներն ավելացվում են Արդյունքների և ազդեցության վերաբերյալ բաղադրիչի միավորին:

1.1 ԱՃԹՆ-ի իրականացման ազգային արդիականությունը

Սույն ցուցանիշով դիտարկվում է, թե որքանով է ԱՃԹՆ-ի իրականացումը Հայաստանում անդրադառնում արդյունահանման ոլորտի արդի ազգային մարտահրավերներին և ռիսկերին:

2023-2035 թվականների Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության գործողությունների պլանը ցույց է տալիս, որ ԱՃԹՆ-ն Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ուժեղ կողմերից մեկն է, որը նպաստում է ոլորտի թափանցիկությանը և հաշվետվողականությանը: ԱՃԹՆ-ի հաշվետվությունների պատրաստումը ներառված է կառավարության հնգամյա գործողությունների ծրագրերում: ԱՃԹՆ-ի իրականացման նպատակները հստակորեն փաստաթղթավորված են Հայաստանի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրերում և կապված են ազգային առաջնահերթությունների հետ (տես Պահանջ 1.5): ԱՃԹՆ-ն, ըստ երևույթին, լուծում է մետաղական հանքարդյունաբերության ոլորտի համապատասխան մարտահրավերները՝ ներառյալ ինստիտուցիոնալ կարողությունների հզորացումը և մետաղական հանքարդյունաբերության ոլորտի տվյալների համակարգված բացահայտումը: Արդյունքների և ազդեցության հարցաթերթը և շահառուների հետ խորհրդակցությունները մատնանշել են իրական շահառուների թափանցիկության առումով առաջընթացը, երբ մետաղական հանքարդյունաբերության ոլորտն առաջինն էր, որ ձեռնարկեց պիլոտային բացահայտումներ, ինչը հանգեցրեց բարեփոխումների ընդլայնմանը տնտեսության այլ ոլորտներում:

Նախորդ վավերացումը վկայում էր հանրային հետաքրքրության և պատասխանատու հանքարդյունաբերության մեջ ԱՃԹՆ-ի ներգրավվածության մասին: Շահառուների հետ խորհրդակցությունները հաստատել են թեմայի նկատմամբ հանրային շարունակական հետաքրքրությունը. այնուամենայնիվ, նշվել է, որ արտաքին այնպիսի գործոնների պատճառով, ինչպիսին է ԿՈՎԻԴ-19 համաճարակը, որն ազդել է շահառուների կարողությունների և գործողությունների առաջնահերթությունների վրա, գրանցվել է սահմանափակ առաջընթաց:

Խորհրդակցություններին մասնակցած շահառուները նշել են, որ ԱՃԹՆ-ին միանալուց ի վեր զգալի առաջընթաց է գրանցվել ԱՃԹՆ-ի իրականացումն ավելի լայն թափանցիկության օրակարգում ներառելու հարցում: Դիտարկվող ժամանակահատվածի գործողությունները մեծապես հիմնվում են նախորդ վավերացումից առաջ ձեռք բերված

առաջընթացի վրա, մասնավորապես՝ կապված բացահայտումների մոտեցումների և տվյալների որակի հետ: Օրինակ, խորհրդակցություններին մասնակցած շահառուները նշել են շարունակական աշխատանքի մասին՝ ուղղված տվյալների համակարգված բացահայտման և տվյալների փոխգործունակության ամրապնդմանը, ինչը համահունչ է երկրում ավելի լայն՝ թվայնացման օրակարգին:
Քարտուղարությունն առաջարկում է այս ցուցանիշի արդյունքների և ազդեցության գնահատականին ավելացնել 0,5 լրացուցիչ միավոր:

1.2 Արդյունահանող ոլորտի տվյալների համակարգված բացահայտում

Այս ցուցանիշով դիտարկվում է, թե որքանով են արդյունահանող ոլորտի տվյալները համակարգված կերպով բացահայտվում կառավարության և ընկերությունների հաշվետվությունների միջոցով:
ԱՃԹՆ-ի Ստանդարտի շրջանակում տվյալների զգալի մասը սովորաբար բացահայտվում է Հայաստանի ԱՃԹՆ-ի տվյալների պորտալի և համապատասխան պետական հարթակների միջոցով (օրինակ՝ ՏԿԵՆ և Վիճակագրական կոմիտե): Այնուամենայնիվ, տարանջատված ֆինանսական տվյալները, ըստ երևույթին, հիմնականում հիմնված են ԱՃԹՆ-ի տվյալների հավաքագրման տարեկան գործընթացի վրա և բացահայտվում են Հայաստանի ԱՃԹՆ-ի տվյալների պորտալի միջոցով: Շահառուների հետ քննարկումները ցույց են տվել, որ կան ԱՃԹՆ-ն կառավարության և ընկերությունների համակարգերում ինտեգրելու և տարբեր համապատասխան տվյալների բազաների փոխգործունակությունը ապահովելու պլաններ: ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտման ամրապնդումը Հայաստանի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրերի մասն է կազմում և ներառում է մի շարք համապատասխան գործողություններ, ինչպիսիք են բացահայտման համակարգված ուսումնասիրության նախապատրաստումը, համակարգված բացահայտման ծրագրային ապահովման մշակումը, համապատասխան պետական մարմինների կարողությունների զարգացումը և այլն: Քիչ են ապացույցներն այն մասին, որ ԱՃԹՆ-ի Ստանդարտում և ԲՇԽ-ի աշխատանքային ծրագրում ընդգրկված ոլորտներում բարեփոխումներ են նախատեսվում ԱՃԹՆ-ի բացահայտումները տարածելու (mainstreaming) հնարավորությունների առումով:
Քարտուղարությունն առաջարկում է այս ցուցանիշի արդյունքների և ազդեցության գնահատականին ավելացնել 0.5 լրացուցիչ միավոր:

1.3 Քաղաքացիների՝ արդյունահանող ոլորտի կառավարմանը մասնակցության միջավայրը

Սույն ցուցանիշով դիտաարկվում է, թե որքանով է քաղաքացիների, այդ թվում՝ ազդակիր համայնքների՝ արդյունահանման ոլորտի կառավարմանը մասնակցելու միջավայրը նպաստավոր:

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

Արդյունքների և ազդեցության հարցաթերթը և շահառուների հետ խորհրդակցությունները ցույց են տվել, որ արդյունահանող ոլորտի օրենսդրական և կարգավորող միջավայրը և դրա կիրառումը աջակցում են քաղաքացիների, ներառյալ ազդակիր համայնքների մասնակցությունը արդյունահանող ռեսուրսների կառավարման վերաբերյալ որոշումների կայացմանը: Կան նաև մի շարք մեխանիզմներ, օրինակ՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական համակարգը, որոնք աջակցում են քաղաքացիների մասնակցությանը քննարկումներին և համապատասխան օրենսդրության մշակմանը:
Վավերացման սեմինարներ, դասընթացներ և իրազեկման բարձրացման այլ միջոցառումներ, որոնք կազմակերպվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի կողմից՝ համայնքային կարողությունները զարգացնելու նպատակով (տես Պահանջ 7.1): Այնուամենայնիվ, առկա փաստաթղթերում և շահառուների հետ խորհրդակցությունների ընթացքում հստակ մանրամասներ չեն տրվել ԲՇԽ-ի մոտեցման մասին՝ ուղղված քաղաքացիների մասնակցության հետ կապված մարտահրավերներին, ինչպես նաև հանքարդյունաբերական շրջանների համայնքների վրա ԱՃԹՆ-ի իրականացման ազդեցության մասին:
Քարտուղարությունն առաջարկում է այս ցուցանիշի արդյունքների և ազդեցության գնահատականին ավելացնել 0 հավելյալ միավոր:

1.4 Արդյունահանող ոլորտի տվյալների հասանելիությունը և կիրառումը

Այս ցուցանիշով դիտարկվում է, թե որքանով են արդյունահանող ոլորտի տվյալները հասանելի և թե որքանով են դրանք օգտագործվում վերլուծության, հետազոտությունների և շահերի պաշտպանության համար:
Արդյունքների և ազդեցության հարցաթերթում նշվում է, որ ԱՃԹՆ-ի տվյալները օգտագործվել են 2023-2035 թվականների Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության գործողությունների պլանի մշակման ընթացքում: Բացի այդ, Արդյունքների և ազդեցության, ինչպես նաև Շահառուների ներգրավվածության հարցաթերթերում ներկայացված է տվյալների օգտագործման օրինակների և համապատասխան հղումների համապարփակ ցանկ: Խորհրդակցություններին մասնակցած շահառուներն ընդգծել են, որ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի տվյալները հասանելի են օգտվողների համար հարմար ձևաչափով, որը շահառուներին թույլ է տալիս մուտք գործել և վերլուծել դրանք, և նշել են տվյալների հասանելիության շարունակական բարելավման մասին:
Օրինակ, ֆինանսական տվյալները և հանքարդյունաբերության ոլորտի՝ տնտեսության մեջ ներդրման հետ կապված տվյալները ժամանակին և պարբերաբար բացահայտվում են Հայաստանի ԱՃԹՆ-Ի տվյալների պորտալի միջոցով: Իրական սեփականության, հանքարդյունաբերության թույլտվությունների, շրջակա միջավայրի հարկի և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) տվյալները համակարգված կերպով

բացահայտվում են համապատասխան պետական գերատեսչությունների միջոցով: Խորհրդակցություններին մասնակցած շահառուները նշել են տվյալների փոխգործունակության ամրապնդմանն ուղղված շարունակական ջանքերի մասին: Միևնույն ժամանակ, շահառուների հետ խորհրդակցությունները ցույց են տվել, որ թեև տվյալների օգտագործումը շարունակաբար բարելավվել է, հանքարդյունաբերության ոլորտի տվյալների օգտագործման և վերլուծության մեջ շահառուների ավելի լայն խմբի ներգրավման հետ կապված դեռևս մարտահրավերներ կան:
Քարտուղարությունն առաջարկում է այս ցուցանիշի արդյունքների և ազդեցության գնահատականին ավելացնել 0,5 լրացուցիչ միավոր:

1.5 ԱՃԹՆ-ին առնչվող փոփոխությունները արդյունահանող ոլորտի քաղաքականության և պրակտիկայի մեջ

Սույն ցուցանիշով դիտարկվում է, թե որքանով է ԱՃԹՆ-ն իրազեկել արդյունահանող ոլորտի քաղաքականության և պրակտիկայի փոփոխությունների մասին:
Արդյունքների և ազդեցության հարցաթերթում նշվում է, որ դիտարկվող ժամանակահատվածում բարելավվել են բնապահպանական հարկի վերաբերյալ օրենսդրությունը և պրակտիկան, ինչպես նաև ազդակիր համայնքներում բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացումը: Խորհրդակցություններին մասնակցած շահառուները նշել են, որ բնապահպանական հարկ վճարող ընկերությունների շրջանակը վերանայվել և ընդլայնվել է: «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկերի նպատակային օգտագործման մասին» օրենքում կատարված փոփոխությունները մանրամասն ներկայացված են Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019 թվականի զեկույցում: Բացի այդ, 2022 թվականին Հայաստանի կառավարությունը ընդունել է ռոյալթիների բաշխման նոր կանոնակարգ, ըստ որի՝ հանքարդյունաբերությունից ստացվող ռոյալթիների 2%-ից մասհանումներ կկատարվեն տուժած համայնքներին, ինչով, ակնկալվում է, որ աջակցություն կտրամադրվի համապատասխան սոցիալ-տնտեսական նախագծերի մշակմանը և իրականացմանը 2024 թվականից սկսած:
Ավելին, Արդյունքների և ազդեցության հարցաթերթը և շահառուների հետ խորհրդակցությունները վկայում են, որ իրական սեփականության թափանցիկության հետ կապված մի շարք օրենսդրական փոփոխություններ ընդունվել են մետաղական հանքարդյունաբերության ոլորտի բացահայտումների առաջին փուլերի հիման վրա:
Քարտուղարությունն առաջարկում է այս ցուցանիշի արդյունքների և ազդեցության գնահատականին ավելացնել 0,5 լրացուցիչ միավոր:

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

2. Արդյունքները և ազդեցությունը

Այս բաղադրիչով գնահատվում են ԱՃԹՆ-ի 7 և 1.5 պահանջները, որոնք վերաբերում են ազգային առաջնահերթություններին անդրադարձին և հանրային բանավեճին:

Պահանջի կատարման առաջընթացը և ուղղիչ գործողությունները

ԱՃԹՆ-ի յուրաքանչյուր Պահանջի կամ ուղղիչ գործողությունների իրականացման առաջընթացի մանրամասն գնահատումը հասանելի է սույն հաշվետվության հավելվածում առկա տվյալների հավաքագրման հարցաթերթերում:

ԱՃԹՆԻ-ի Պահանջը / նախկին ուղղիչ գործողությունը և գնահատումը	ԱՃԹՆ-ի պահանջի բավարարման հարցում առաջընթացի նկարագիրը
Աշխատանքային ծրագիրը (Պահանջ 1.5) *Լիովին բավարարված*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 1.5 Պահանջը լիովին բավարարված է: Սույն պահանջը նախորդ վավերացման ժամանակ գնահատվել էր որպես գերազանցված: Պահանջի նպատակն է ապահովել, որ տարեկան պլանավորումը նպաստի արդյունահանող ոլորտի ազգային առաջնահերթությունների իրականացմանը՝ միաժամանակ իրականացնելով իրատեսական գործողություններ, որոնք ավելի լայն կառավարության, ոլորտի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ խորհրդակցությունների արդյունք են: ԱՃԹՆ-ի տարեկան աշխատանքային ծրագիրը ԲՇԽ-ի համար պետք է հանդիսանա որպես հիմնական հաշվետվողականության փաստաթուղթ ավելի լայն խմբակցությունների առումով: Փաստաթղթերի վերլուծության և շահառուների հետ խորհրդակցությունների լույսի ներքո Քարտուղարության գնահատականն այն է, որ սույն նպատակն իրականացվել է: 2021-2022 թթ. աշխատանքային ծրագրի նպատակները՝ հաստատված 2021 թվականի ապրիլի 20-ին և վերանայված 2022 թվականի ապրիլի 27-ին, կապված են ԱՃԹՆ-ի սկզբունքների հետ և նպաստում են արդյունահանող ոլոտի ազգային առաջնահերթությունների իրականացմանը, նույնը կարելի է ասել նաև 2023-2024 թթ. աշխատանքային ծրագրի նպատակների մասին, որը հաստատվել է 2023 թվականի հունիսի 20-ին: ԱՃԹՆ-ի իրականացումը կապված է և ինտեգրված կառավարության կողմից 2023 թվականին ընդունված Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մեջ, իսկ աշխատանքային ծրագրով նախատեսված գործողությունները ներառվել են կառավարության Հնգամյա միջոցառումների ծրագրերում: Աշխատանքային ծրագրերը մշակվել են խորհրդակցական գործընթացի արդյունքում, որը ներգրավել է ընդգրկուն բոլոր խմբակցություններին: Խորհրդակցությունները հաստատել են, որ ԲՇԽ-ից դուրս շահառուների առաջարկությունները հաշվի են առնվել ԱՃԹՆ-ի աշխատանքային

ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարություն

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

	ծրագրերը պատրաստելիս: Քաղաքացիական հասարակության խմբակցությունը օգտագործել է իր հարթակը՝ ներառելու ավելի լայն խմբակցությունների, մասնավորապես գործընկեր կազմակերպությունների և ազդակիր համայնքների տեսակետները: Աշխատանքային բոլոր ծրագրերը, վերանայված տարբերակները և իրականացման հաշվետվությունները հանրությանը հասանելի են Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում, դրանք վերանայվել և թարմացվել են ամեն տարի: Աշխատանքային ծրագրերը ներառում են նպատակներ, չափելի և ժամանակային գործողություններ, պլանավորված ծախսեր, ֆինանսավորման աղբյուրներ և ռիսկի գնահատում յուրաքանչյուր գործողության համար: Գործողությունները ուղղված են կարողությունների և համակարգված բացահայտումների ամրապնդմանը, մետաղական հանքարդյունաբերության ոլորտում իրավական խոչընդոտների վերացմանը, նախորդ Վավերացման առաջարկությունների և ԱՃԹՆ-ի իրականացմանը, ինչպես նաև իրական սեփականության բացահայտմանը, և այլն: 2021-2022 թվականների աշխատանքային ծրագրի գործողությունները մշակվել են՝ ապահովելու, որ ԱՃԹՆ-ի գործընթացը նպաստում է տվյալների համակարգված բացահայտմանը և իրական սեփականության բացահայտմանը՝ ներառյալ իրական շահառուների առցանց ռեգիստրի գործարկումը, հայտարարագրեր ներկայացնելու կարողությունների զարգացումը, բացահայտումների գործընթացի բարելավման իրավական ակտերը և հրապարակված տվյալների մշտադիտարկումը: Այն նաև ներառում է ԱՃԹՆ-ի իրականացման շրջանակն ընդլայնելու նպատակ և գործողություններ, ինչպես նաև կարողությունների զարգացում և իրազեկման աշխատանքներ ԱՃԹՆ-ի գործընթացների և տվյալների, ինչպես նաև պատասխանատու հանքարդյունաբերության պրակտիկայի վերաբերյալ: 2023-2024 թվականների աշխատանքային ծրագրի նպատակները նախանշում են նմանատիպ առաջնահերթություններ և մեծ ուշադրություն է հատկացվում հիմնական շահառուների՝ ԱՃԹՆ-ի տվյալները օգտագործելու կարողությունների ամրապնդմանը: Սրանք համահունչ են խորհրդակցությունների ընթացքում շահառուների կողմից նշված առաջնահերթություններին: ԲՇԽ-ն անցկացրել է աշխատանքային ծրագրի իրականացման եռամսյակային, կիսամյակային և տարեկան վերանայումներ, որոնք զետեղված են ԱՃԹՆ-ի ներդրման հաշվետվություններում և հասանելի են հանրությանը: 2021-2022 թվականների աշխատանքային ծրագիրը նույնպես վերանայվել է իրականացման հաշվետվության միջոցով, որը ԲՇԽ-ի կողմից հաստատվել է 2023 թվականի հունիսի 29-ին, և ներառում է գործողության ավարտի կարգավիճակը մատնանշող գունային սխեմա: Համաձայն այս սխեմայի՝ 32 գործողություն ավարտվել էր, 16-ը շարունակվում էր, 12-ը չէր մեկնարկել, իսկ ինը չէր իրականացվել: Որոշ

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

	գործողությունների համար տրվել են տեքստային նշումներ իրականացման գործընթացում առաջընթացը մեկնաբանելու համար, մասնավորապես՝ բացատրելով չկատարված գործողությունների պատճառները: 2023-2024 թվականների աշխատանքային ծրագիրը հիմնվել է սույն աշխատանքի վրա և նաև ներառել նոր գործողություններ՝ վերը նշված նպատակներին համապատասխան:
Հանրային բանավեճը (Պահանջ 7.1) *Լիովին բավարարված*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 7.1 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ Վավերացման ժամանակ: Այս պահանջի նպատակն է արդյունահանող ոլորտի կառավարման վերաբերյալ փաստահեն հանրային բանավեճի հնարավորություն ընձեռել՝ հիմնական շահառուներին համապատասխան տվյալների ակտիվ փոխանցման միջոցով, որոնք հասանելի են և արտացոլում են շահառուների կարիքները: Հիմնվելով առկա ապացույցների և շահառուների հետ խորհրդակցությունների վրա՝ Քարտուղարության գնահատականն այն է, որ սույն նպատակը իրականացվել է: Հայաստանի ԱՃԹՆ-ն ակտիվորեն ձգտել է տարածել ԱՃԹՆ-ի հաշվետվությունների արդյունքները: Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020-2021 թթ. ազգային զեկույցը հանրությանը հասանելի է Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում՝ ինչպես հայերենով, այնպես էլ անգլերենով: ԱՃԹՆ-ի՝ նախորդ երեք ժամանակահատվածների հաշվետվությունները հասանելի են նաև առցանց երկու լեզուներով: Հայաստանի ԱՃԹՆ-ի առցանց հաշվետվության հարթակը պարունակում է նաև մետաղական հանքարդյունաբերության ընկերությունների և պետական կառույցների կողմից ներկայացված տեղեկատվություն: Հարթակից օգտվողը կարող է մուտք գործել ոլորտի եկամուտների տարանջատված ֆինանսական և տնտեսական տվյալներ հարթակի վրա զտման և գրաֆիկական գեներացման գործիքների միջոցով և համեմատել տարբեր ֆինանսական տարիների տվյալները: ԱՃԹՆ-ի իրականացման առաջընթացը և ԱՃԹՆ-ի ընթացիկ գործունեության վերաբերյալ թարմացումները ներառված են ներդրման եռամսյակային և կիսամյակային հաշվետվություններում, որոնք հրապարակվում են Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում: Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքը ծառայում է որպես հասանելի տեղեկատվության տարածման հարթակ: Կայքում առկա են իրավական ակտեր, փաստաթղթեր, ուսումնասիրություններ, նորություններ և վերլուծական ակնարկներ: Բացի ԱՃԹՆ-ի տարեկան հաշվետվություններից, հրապարակվում են նաև ԱՃԹՆ-ի ամփոփ հաշվետվությունները: Այս ամփոփ հաշվետվությունների տպագիր օրինակները դիտարկվող ժամանակահատվածում ամեն տարի տրամադրվել են տարբեր շահառուների: Հրապարակվել են նաև ԱՃԹՆ-ի գործունեությունը լուսաբանող կարճ տեսահոլովակներ (տես որոշ օրինակներ այստեղ, այստեղ և այստեղ): Հայաստանի ԱՃԹՆ-ի՝ «Facebook»-յան, «Youtube»-յան և «Twitter»-յան հաշիվները ծառայում են

	որպես ավելի լայն լսարաններին ներգրավելու հարթակներ և պարբերաբար թարմացվում են՝ հրապարակելով տեղեկատվություն ԱՃԹՆ-ի իրականացման և արդյունահանող ոլորտի վերաբերյալ, և ապահովելով հանրության հասանելիությունն ու տեղեկացվածությունը: Վավերացման ենթակա ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի բացահայտումները խթանելու նպատակով 14 համաժողովներ, ֆորումներ, աշխատաժողովներ, հանդիպումների և դասընթացներ են կազմակերպվել ՔՀԿ-ների, ԶԼՄ-ների, համայնքների և այլ շահառուների համար: Համաժողովներ են անցկացվել՝ ներկայացնելու 2019 և 2020-2021 թվականների Հայաստանի ԱՃԹՆ-ի հաշվետվությունները բոլոր խմբակցությունների՝ ավելի քան 100 ներկայացուցիչների լսարանին: Անցկացվել են կարողությունների զարգացման սեմինարներ այնպիսի թեմաներով, ինչպիսիք են՝ Հայաստանի հանքարդյունաբերության ֆիսկալ ռեժիմը, պատասխանատու հանքարդյունաբերությունը, իրական սեփականության ներկայացման հարթակը, արդյունահանման ոլորտում կոռուպցիոն ռիսկերը, իրական սեփականության տվյալների օգտագործումը, իրական սեփականության ստուգումը, համակարգված բացահայտումների տեխնիկական պահանջները և ռոյալթիների հատկացումները համայնքային բյուջեներին, ի թիվս այլ թեմաների: Այս սեմինարների արդյունքում վերապատրաստվել է ավելի քան 200 անհատ՝ կառավարությունից, քաղաքացիական հասարակությունից և մասնավոր հատվածից: Աշխատաժողովների, հանդիպումների և կոնֆերանսների ընթացքում շահառուներին տրամադրվել են ԱՃԹՆ-ի հաշվետվությունների և ամփոփ հաշվետվությունների տպագիր պատճենները, ինչպես նաև ԱՃԹՆ-ի գործունեության վերաբերյալ գրքույկներ: ԲՇԽ-ն համապատասխանեցրել է իր հաղորդակցման և իրազեկման ջանքերը՝ սպասարկելու օգտատերերի տարբեր ենթախմբերին, ինչպիսիք են հայաստանյան ԶԼՄ-ները, ՔՀԿ-ները, համայնքների ներկայացուցիչները և կանայք: Այս խմբերն ունեն տեղեկատվության հստակ պահանջներ և տարբեր մակարդակի հմտություններ՝ ԱՃԹՆ-ի հասանելի տվյալների օգտագործման հարցում: Կազմակերպվել են սեմինարներ՝ ուղղված հատուկ խմբերին, այդ թվում՝ ՔՀԿ-ներին, ԶԼՄ-ներին, կանանց և համայնքներին: Այս սեմինարները ներառել են տարբեր թեմաներ, ինչպիսիք են՝ իրական շահառուների մասին տվյալների օգտագործման համար լրագրողների կարողությունների զարգացումը, Ծաղկաձորում կազմակերպվել է համայնքների համար դասընթաց, անցկացվել է քաց գրույց իրական

	սեփականության բարեփոխումների իրականացմանը մասնակցող կանանց դերն ընդգծելու նպատակով: Վավերացման ենթակա ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի տվյալները օգտագործվել են հանրային բանավեճը խթանելու համար՝ «Հետք»-ի, «Ֆակտոր»-ի, «Էկոլուրի» և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»-ի հետաքննող լրագրողների կողմից 100-ից ավելի հոդվածների հրապարակմամբ: Այս հոդվածները փաստաթղթավորվել են Վավերացման հարցաթերթերում և վերաբերում են արդյունահանող ոլորտի տվյալներին՝ ձեռք բերված համակարգված բացահայտումների (տե՛ս օրինակը այստեղ) և իրական շահառուների բացահայտումների միջոցով (տե՛ս օրինակները այստեղ, այստեղ և այստեղ), կամ ակտիվորեն քննարկվել են արդյունահանող ոլորտում իրականացվող և վերջին բարեփոխումները (տես այստեղ և այստեղ): Հոդվածների ամբողջական ցանկը հասանելի է «Արդյունքներ և ազդեցություն» հարցաթերթում: ԱՃԹՆ-ի տվյալների օգտագործմամբ իրականացված հետաքննությունները նաև խթանել են հանրային բանավեճը մետաղ արդյունահանող ընկերությունների սոցիալ-տնտեսական պարտավորությունների վերաբերյալ համայնքների իրազեկվածության վերաբերյալ: Շահառուների հետ խորհրդակցությունները ցույց են տվել, որ ՔՀԿ-ները ակտիվորեն օգտագործում են հարկերի, ընդերքօգտագործման իրավունքների, իրական սեփականության և պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը և ակտիվորեն կիսում են այդ տեղեկատվությունը ավելի լայն խմբակցությունների հետ: Խորհրդակցություններին մասնակցած շահառուները նաև անդրադարձել են ԱՃԹՆ-ի Ազգային քարտուղարության ակտիվ դերակատարմանը քաղաքացիական հասարակության և լրագրողների ներգրավվածությունը խթանելու և նրանց պետական մարմինների հետ կապելու առումով՝ հետաքննության համար անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով: Խորհրդակցությանը մասնակցած շահառուները նաև ընդգծել են ԱՃԹՆ-ի գործընթացի կարևորությունը քաղաքականության բարելավման վերաբերյալ հանրային քննարկումների խթանման տեսանկյունից՝ ներառյալ ակտիվ քննարկումները և քաղաքացիական հասարակության և ավելի լայն խմբակցությունների ներգրավվածությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքի ընդունման գործում և դրա ազդեցությունը համայնքների վրա կամ իրավական բարեփոխումների գործընթացում՝ նպաստելու և նպաստավոր միջավայր ստեղծելու իրական սեփականության բացահայտման համար: Ակտիվ քննարկումներ են եղել նաև հանքարդյունաբերության ազգային

	ռազմավարության մշակման ուղղությամբ: Մինչ կառավարության և ընկերությունների խմբակցությունները ընդգծել են այս ռազմավարության շնորհիվ այնպիսի գործընթացների բարելավումը, ինչպիսիք են հանրային խորհրդակցությունները, քաղաքացիական հասարակության խմբակցությունը մտահոգություն է հայտնել այս նոր ռազմավարության շրջանակներում սպասվող ավելի քիչ խորհրդակցությունների վերաբերյալ: Շահառուները մտահոգություն են հայտնել արդյունահանող ոլորտին առնչվող հարցերին անդրադառնալու հետաքրքրության նվազման առնչությամբ հատկանշական իրադարձությունների, օրինակ՝ օրենքների ընդունման կամ խոշոր հետաքննությունների նվազմանը զուգահեռ՝ ընդգծելով Ազգային քարտուղարության կողմից հանրային քննարկումները խթանելու շարունակական հանձնառության մասին: Ավելին, մտահոգություններ են հնչել քաղաքացիների ավելի լայն շրջանակ ներգրավելու դժվարությունների վերաբերյալ, որոնք դուրս են արդյունահանող ոլորտի խնդիրներով զբաղվող և ներկայում արդեն իսկ ներգրավված շահառուների շրջանակից: Թեև ակադեմիական կառույցների և խորհրդարանի հետ ներգրավվածությունը չի կազմել հանրային քննարկումների խթանմանն ուղղված միջոցառումների հիմնական մասը, 2023-2024 թվականների աշխատանքային ծրագիրը ներառում է գործողություններ՝ այս շահառուների՝ ԱՃԹՆ-ի տվյալները օգտագործելու կարողությունը ուժեղացնելու համար:
Տվյալների հասանելիությունը և բաց տվյալներ (Պահանջ 7.2) *Լիովին բավարարված*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 7.2 պահանջը լիովին բավարարված է: Այս պահանջի նպատակն է բաց տվյալների և փոխգործունակ ձևաչափերով տեղեկատվության հրապարակման միջոցով ընձեռել արդյունահանող ոլորտի վերաբերյալ տեղեկատվության ավելի լայն օգտագործման և վերլուծության հնարավորություն: Քարտուղարությունը նպատակն ամբողջությամբ իրագործված է համարում: Հայաստանի ԲՇԽ-ն 2017 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունել է իր «Բաց տվյալների քաղաքականությունը»: Քաղաքականությունը վերաբերում է տվյալների ամբողջականությանը, չմշակված տվյալների և մետատվյալների հրապարակմանը, տվյալների աղբյուրներին, ժամանակին հրապարակմանը, մատչելիությանը և տվյալների ձևաչափերին, ներառականությանը, պահպանմանը, ազատ մուտքին և բաց լիցենզիային: Ընդհանուր առմամբ, թվայնացումը ազգային առաջնահերթություն է, ինչպես սահմանված է Հայաստանի թվայնացման 2021-2025 թվականների ռազմավարության մեջ: Մետաղարդյունահանող ընկերությունների և պետական մարմինների կողմից ներկայացված 2020-2021 թվականների ԱՃԹՆ հաշվետվությունները հասանելի են բաց տվյալների ձևաչափով Հայաստանի ԱՃԹՆ-ի առցանց հաշվետվության

	հարթակում: Հարթակն ընդգրկում է 2016-ից մինչև 2022 ֆինանսական տարիների համակարգված բացահայտված տեղեկատվությունը արդյունահանման և արտահանման, զբաղվածության, հարկերի և վճարների վերաբերյալ, ի թիվս այլ տվյալների: Օգտվողները կարող են մուտք գործել տվյալներ՝ օգտագործելով տարբեր զտիչներ և վիզուալիզացիոն գործիքներ և, անհրաժեշտության դեպքում, արտահանել դրանք PDF և Excel ձևաչափերով: Կան պլաններ՝ ապահովելու համակարգված բացահայտումներին տվյալների բարելավված ինտեգրումը պետական և ընկերությունների համակարգերի միջոցով՝ որպես թվայնացման ընդհանուր ազգային ռազմավարության մաս: ԱՃԹՆ ամփոփ տվյալների ամենամյա ֆայլերը հրապարակվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում: Զգալի ջանքեր են գործադրվել նաև հրապարակելու իրական սեփականության մասին բացահայտումները Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց առցանց պետական ռեգիստրի, իսկ պայմանագրերը՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքի Օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունքների ռեգիստրում (ներառյալ բոլոր փոփոխություններն ու հավելվածները) հրապարեակելու ուղղությամբ: Որոշ բացեր, ինչպիսիք են փոխգործունակության պակասը և ԱՃԹՆ-ի որոշ տվյալների սահմանափակ մեքենայական ընթեռնելիությունը, ուղղորդել են ԲՇԽ-ին աշխատելու համապատասխան ծրագրային ապահովման մշակման և ԱՃԹՆ-ի տվյալների միասնական հարթակի գործարկման ուղղությամբ: ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտումն ապահովելու նպատակով առանձնացվել են հատուկ գործողություններ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրերում: Վավերացման ապագա գործընթացներում 7.2 Պահանջի համար «գերազանցված» գնահատական ստանալու նպատակով ԱՃԹՆ-ի Ստանդարտով պահանջվող և համակարգված կերպով բացահայտված բոլոր տվյալները պետք է հրապարակվեն բաց ձևաչափով:
ԱՃԹՆ-ի իրականացման առաջարկություններ (Պահանջ 7.3) *Լիովին բավարարված*	Համաձայն Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 7.3 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ վավերացման ժամանակ: Այս պահանջի նպատակն է ապահովել, որ ԱՃԹՆ-ի իրականացումը ուսուցման շարունակական գործընթաց է, որը նպաստում է քաղաքականությունների մշակմանը՝ հիմնվելով ԲՇԽ-ի՝ կանոնավոր կերպով ԱՃԹՆ-ի գործընթացի արդյունքներն ու առաջարկությունները հաշվի առնելու և առաջնահերթություն դիտարկվող առաջարկություններին համահունչ գործելու վրա: Հաշվի առնելով առկա ապացույցներն և շահառուների հետ խորհրդակցությունները՝ Քարտուղարությունը նպատակն իրագործված է համարում:

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

	Արդյունքների և ազդեցության հարցաթերթը ցույց է տալիս, որ ԲՇԽ-ն ակտիվորեն փորձել է անդրադառնալ նախորդ վավերացման, ԱՃԹՆ-ի զեկույցների և ուսումնասիրությունների առաջարկություններին: 2021-2022 և 2023-2024 թվականների աշխատանքային ծրագրերում ներառվել են այս բացերին ուղղված միջոցառումներ: Օրինակ, մետաղարդյունահանող ընկերությունների և պետական մարմինների կողմից ներկայացված ԱՃԹՆ-ի էլեկտրոնային հաշվետվությունների տեխնիկական և իրավական բարելավման վերաբերյալ առաջարկություններին ուղղված գործողությունները, որոնք Անկախ ադմինիստրատորի կողմից ներկայացվել էին 2020-2021 թվականների Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում, ներառվել են 2023-2024 թթ. աշխատանքային ծրագրում: ԱՃԹՆ-ի գործընթացը նպաստել է արդյունահանող ոլորտի քաղաքականության մշակմանը՝ ներառյալ բնապահպանական նպատակային ծրագրերին ուղղված հանրային խորհրդակցություններին մասնակցելը և հավաքագրված ռոյալթիներից ազդակիր համայնքներին հատկացումներ տրամադրելը: Սա հանգեցրել է օրենսդրության բարեփոխմանը՝ ապահովելու բնապահպանական նպատակային ծրագրերի իրականացումն ու հավաքագրված ռոյալթիներից ազդակիր համայնքներին հատկացումները: Սկսած 2021 թվականից՝ նպատակային բնապահպանական ծրագրեր կարող են իրականացվել մետաղարդյունահանող բոլոր ընկերությունների ազդակիր համայնքների կողմից: Բացի այդ, համայնքների համար սահմանվել են նաև բնապահպանական ծրագրերի թափանցիկության և հաշվետվողականության, ինչպես նաև դրանց կատարման իրավական պահանջներ: 2022 թվականին ընդունված իրավական ակտերում փոփոխությունների համաձայն՝ 2024 թվականից սկսած, ընկերությունների կողմից վճարվող ռոյալթիների 2%-ից մասհանումներ կկատարվեն ազդակիր համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերն ու միջոցառումները ֆինանսավորելու նպատակով: Աշխատանքային ծրագրերի վերանայման ժամանակ դիտարկվում են ԲՇԽ-ի կողմից քննարկված և հաստատված ԱՃԹՆ-ի ներդրման եռամսյակային և կիսամյակային հաշվետվությունները, որի արդյունքում վեր են հանվում բացերն ու մարտահրավերները: Այս հաշվետվություններից ստացված տեղեկատվության հիման վրա մշակվել է նաև 2023-2024 թվականների աշխատանքային ծրագիրը: Շահառուներն ընդգծել են, որ ներդրման հաշվետվությունների մշակման գործընթացը ծառայել է որպես արժեքավոր ուսուցման գործիք՝ հեշտացնելով դեռևս ուշադրություն և գործողություն պահանջող առաջնահերթությունները և առաջարկությունները դիտարկելու գործընթացը:

	Թեև կարծես թե չկա որևէ կոնկրետ պետական մեխանիզմ, որը հստակորեն կհետևի ԱՃԹՆ-ի իրականացումից և վավերացումից բխող բոլոր առաջարկություններին, կան ապացույցներ նախորդ Վավերացման և ԱՃԹՆ-ի հաշվետվությունների առաջարկությունների վերաբերյալ գործողություններին հետևելու մեխանիզմի մասին՝ նշված աշխատանքային ծրագրերում և առաջընթացի հաշվետվություններում, ինչպես նաև այս ուղղությամբ գործողությունները հստակորեն նշված են Արդյունքների և ազդեցության հարցաթերթում: Շահառուները նշել են, որ ԱՃԹՆ-ի իրականացումը գերազանցել է ԱՃԹՆ-ի Ստանդարտի նվազագույն պահանջները՝ արդյունահանող ոլորտից իրական սեփականության բացահայտումներն ընդլայնելով դեպի մյուս բոլոր ոլորտներ: Բացի այդ, Հայաստանը համարվում է աշխարհում առաջին երկրներից մեկը, որը կիրառել է Իրական շահառուների տվյալների միջազգային ստանդարտը իրական սեփականության տվյալների հավաքագրման համատեքստում: Արդյունահանող ոլորտի իրական սեփականության մասին բացահայտումներն այժմ հասանելի են «Open Ownership» ռեգիստրում՝ «Opening Extractives» ծրագրի աջակցության շնորհիվ: Ավելին, ԲՇԽ-ի համաձայնեցված ջանքերի շնորհիվ կառավարությունն այժմ հրապարակում է արդյունահանող բոլոր պայմանագրերը: Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում 2018 թվականից ի վեր հրապարակված հանքարդյունաբերական պայմանագրերից բացի 2021 թվականից հրապարակվում են նաև ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման պայմանագրերը: Արդյունքների և ազդեցության հարցաթերթում նաև ընդգծվում է, որ ԱՃԹՆ-ի հաշվետվությունների հարթակի վերլուծական գործիքների օգտագործման փորձից քաղված դասերը կարևոր դեր են ունեցել համակարգված բացահայտման հարթակի աշխատակարգի մշակման համար, որը համարվում է ԱՃԹՆ-ի ազգային առաջնահերթություն և պետք է մշակվի որպես 2023-2024 թթ. աշխատանքային ծրագրի մաս:
ԱՃԹՆ-ի ներդրման արդյունքների և ազդեցության մշտադիտարկում (Պահանջ 7.4) *Լիովին բավարարված*	Համաձայն Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 7.4 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ Վավերացման ժամանակ: Այս պահանջի նպատակն է ապահովել ԱՃԹՆ-ի իրագործման կանոնավոր հանրային մոնիթորինգ և գնահատում՝ ներառյալ ԱՃԹՆ-ի՝ իր նպատակների իրագործման գնահատումը՝ ապահովելու ԱՃԹՆ-ի հանրային հաշվետվողականությունը: Հիմնվելով առկա փաստաթղթերի և շահառուների հետ խորհրդակցությունների վրա՝ Քարտուղարությունը գտնում է, որ նպատակն իրագործվել է: Հայաստանի ԱՃԹՆ-ն չի թողարկել ներդրման տարեկան հաշվետվություններ ո՛չ 2021 և ո՛չ էլ 2022 թվականների համար: Նախկինում պատրաստվել են ներդրման տարեկան հաշվետվություններ

	2017-2020 թվականների համար: Այնուամենայնիվ, դիտարկվող ժամանակահատվածների համար հրապարակվել են ներդրման եռամսյակային և կիսամյակային հաշվետվությունները: Դրանք ներառում են ԱՃԹՆ-ի՝ հաշվետու ժամանակաշրջանում ձեռնարկված գործողությունների ամփոփագիրը և այդ գործողությունների արդյունքների հաշվետվությունը: Դրանք ներառում են նաև գործողություններ, որոնք ձեռնարկվել են լուծելու այն խնդիրները, որոնք ԲՇԽ-ն սահմանել է որպես ԱՃԹՆ-ի իրականացման առաջնահերթություններ: Թեև այս հաշվետվությունները չեն ներկայացնում ԱՃԹՆ-ի յուրաքանչյուր Պահանջի կատարման ուղղությամբ առաջընթացի հստակ գնահատում կամ պահանջները գերազանցելու համար ձեռնարկված քայլերը, շահառուներն ընդգծել են հաշվետվությունների մշակման ազդեցությունը աշխատանքային ծրագրի նկատմամբ առաջընթացը գնահատելու տեսանկյունից: Շահառուներն ընդգծել են, որ առաջընթացի/ներդրման հաշվետվությունների մշակման գործընթացը նպաստում է ԱՃԹՆ-ի իրականացման ազդեցության գնահատմանը: Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020-2021 թթ. հաշվետվությունը ներառում է ԱՃԹՆ-ի հաշվետվության գործընթացը բարելավելու առաջարկներ՝ ներառյալ շահառուների կողմից ներկայացված հաշվետվությունների ձևանմուշների/հարցաթերթերի, առցանց տվյալների հավաքագրման համակարգի և աշխատանքային ծրագրում ներառելու վերաբերյալ լայն առաջարկներ: Այնուամենայնիվ, այն չի մանրամասնում ԱՃԹՆ-ի յուրաքանչյուր Պահանջի կատարման ուղղությամբ առաջընթացի գնահատումը, ինչպես նաև նախորդ Վավերացման կամ ԱՃԹՆ-ի հաշվետվությունների առաջարկություններին ուղղված գործողությունները: Այն անդրադառնում է պատասխանատու հանքարդյունաբերության պրակտիկայի ուղղությամբ առաջընթացին՝ ներառյալ կարողությունների զարգացմանն ուղղված գործողություններին, իրական սեփականության բացահայտման բարելավմանը և 2022 թվականին հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության նախագծի մշակմանը: Ընդհանուր առմամբ, խորհրդակցություններին մասնակցած շահառուները մտահոգություններ չեն հայտնել ներդրման հաշվետվությունների պատրաստման գործընթացի կամ դրանց բովանդակության հետ կապված:
Նոր ուղղիչ գործողություններ և առաջարկություններ	
• 1.5 Պահանջի կատարումն ամրապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանն ապագա աշխատանքային ծրագրերում ներառի գործողություններ՝ ուղղված եկամուտների կառավարման և ծախսերի, սոցիալական ծախսերի, Տեղական ինքնակառավարման մարմիններ կատարվող փոխանցումների և պայմանագրերի հետ կապված տվյալների վերլուծությանը և օգտագործմանը:	

- 7.1 Պահանջի կատարումն ամրապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանը խթանի կարողությունների զարգացումը՝ ամրապնդելու շահառուների ֆինանսական տվյալների վերլուծությունը, ներգրավվածությունը հետազոտական կառույցների հետ և համագործակցելու խորհրդարանականների հետ՝ ապահովելու, որ ԱՃԹՆ-ի տվյալները նպաստում են նրանց իրազեկ որոշումների կայացմանը: Հայաստանը պետք է շարունակի խթանել հանրային բանավեճը իրազեկման և տեղեկատվության տարածման աշխատանքների միջոցով՝ ապահովելով գենդերային ասպեկտների դիտարկումը այս գործողությունների նախագծման և իրականացման ժամանակ:
- 7.2 Պահանջի կատարումն ամրապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանը շարունակի իր ջանքերը համակարգված բացահայտումների միասնական հարթակի ստեղծման ուղղությամբ, որոնք կարող են փոխգործակցելի լինել պետական այլ պորտալների հետ և հրապարակվել որպես բաց տվյալներ:
- 7.3 Պահանջի կատարումն ամրապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանը շարունակի հետևել առաջընթացին՝ ի դեմս գործողությունների, հետևողական լինի նախորդ վավերացման, ԱՃԹՆ-ի իրականացման համատեքստում ստեղծված ԱՃԹՆ-ի հաշվետվությունների և այլ ուսումնասիրությունների վերաբերյալ առաջարկների կատարման հարցում: Խրախուսվում է նաև, որ Հայաստանն ապահովի, որ ԲՇԽ-ի կողմից արված առաջարկությունների իրականացումը պարբերաբար մոնիթորինգի ենթարկվի:
- 7.4 Պահանջի կատարումն ամրապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանը մշակի ԱՃԹՆ-ի իրականացման ազդեցության մոնիթորինգի և գնահատման հստակ գործիքակազմ և ներառի այդ արդյունքները ԱՃԹՆ-ի տարեկան հաշվետվություններում և ազդեցության և արդյունքների տարեկան վերանայման զեկույցներում:

3. Շահառուների ներգրավվածությունը

Այս բաղադրիչով գնահատվում են ԱՃԹՆ-ի 1.1-1.4 Պահանջները, որոնք վերաբերում են ԱՃԹՆ-ի գործընթացին խմբակցությունների մասնակցությանը և Բազմաշահառու խմբի վերահսկողությանը:

Պահանջի կատարման առաջընթացը և ուղղիչ գործողությունները

ԱՃԹՆ-ի յուրաքանչյուր Պահանջի կամ ուղղիչ գործողությունների իրականացման առաջընթացի մանրամասն գնահատումը հասանելի է սույն հաշվետվության հավելվածում առկա տվյալների հավաքագրման հարցաթերթերում:

ԱՃԹՆԻ-ի Պահանջը / նախկին ուղղիչ գործողությունը և գնահատումը	ԱՃԹՆ-ի պահանջի բավարարման հարցում առաջընթացի նկարագիրը
Կառավարության ներգրավվածությունը (Պահանջ 1.1) *Լիովին բավարարված*	ԸստՄիջազգային քարտուղարության գնահատականի՝ 1.1 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ Վավերացման ժամանակ: Այս պահանջի նպատակն է ապահովել ԱՃԹՆ-ի իրականացման համար կառավարության լիարժեք, ակտիվ և արդյունավետ

	առաջնորդությունը՝ ինչպես բարձրաստիճան քաղաքական ղեկավարության, այնպես էլ գործառնական ներգրավվածության տեսանկյունից՝ որպես ԱՃԹՆ-ի իրականացման բոլոր ասպեկտները ֆասիլիտացնելու միջոց: Բոլոր խմբակցությունների շահառուները, որոնք մասնակցել են խորհրդակցություններին, նշել են, որ սույն նպատակը համարում են կատարված, ինչի մասին են վկայում առկա փաստաթղթերը և ինչը համապատասխանում է Քարտուղարության գնահատականին: Առկա փաստաթղթերը ցույց են տալիս, որ կառավարության խմբակցությունը հավատարիմ է մնացել ԱՃԹՆ-ին իր հանձնառությանը նախորդ վավերացումից ի վեր: ԱՃԹՆ-ի իրականացումը Հայաստանում նախագահում է փոխվարչապետը և ներառված է կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում: Կառավարության խմբակցությունն ընդգրկում է համապատասխան պետական գերատեսչությունների բարձրաստիճան պաշտոնյաներին (նախարարի տեղակալ կամ գլխավոր քարտուղար): ԲՇԽ-ի հանդիպման արձանագրությունները վկայում են, որ կառավարության ներկայացուցիչներն ակտիվ դերակատարում ունեն ԲՇԽ-ի քննարկումներում: Բոլոր խմբակցությունների՝ քննարկումներին մասնակցած շահառուները նշել են, որ ԿՈՎԻԴ-19 համաճարակի և աշխարհաքաղաքական տարածաշրջանային խնդիրների պես լայն մարտահրավերները էական ազդեցություն են ունեցել կառավարության առաջնահերթությունների և տարբեր, այդ թվում՝ արդյունահանող ճյուղի կառավարման ոլորտում աշխատելու կարողությունների վրա: Միևնույն ժամանակ, քննարկումներին մասնակցած շահառուները հաստատել են, որ համապատասխան պետական մարմինները և պաշտոնյաները էական աջակցություն են ցուցաբերել ԱՃԹՆ-ի իրականացմանը և ԱՃԹՆ-ի հաշվետվությունների համար տրամադրել համապատասխան տվյալներ: ԱՃԹՆ-ի գործընթացին հանձնառությունը պարբերաբար արտահայտվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի միջոցառումների ժամանակ, այդ թվում՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020-2021 թվականների զեկույցի ներկայացման ժամանակ: «Շահառուների ներգրավվածություն» հարցաթերթի համաձայն՝ Հայաստանի կառավարությունը շարունակական աջակցություն է ցուցաբերել ԱՃԹՆ-ի գործընթացի ֆինանսավորմանը: Օրինակ՝ Ազգային քարտուղարությունը շարունակել է լիովին ֆինանսավորվել պետական բյուջեից: Բացի այդ, հարցաթերթում նշվում է, որ համապատասխան պետական մարմինները վարչական աջակցություն են ցուցաբերել, օրինակ, համապատասխան տվյալների բազաների միջոցով: Կառավարության՝ ԱՃԹՆ-ի իրականացմանն ուղղված

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

	աջակցության մասին հստակորեն նշվում է Հայաստանի ԱՃԹՆ-ի Աշխատանքային ծրագրերում: «Շահառուների ներգրավվածություն» հարցաթերթում նաև նշվում է կառավարության ջանքերի մասին՝ ուղղված իրավական և կարգավորող դաշտի ամրապնդմանը, ներառյալ ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում պայմանագրային թափանցիկության ջանքերի ընդլայնումը, իրական սեփականության իրավունքի (ԻՍ) իրավական կարգավորումների բարելավմանը, բնապահպանական վճարների և ռոյալթիների բաշխման բարեփոխումների շրջանակի ընդլայնմանը: Հարցաթերթի արդյունքները և քննարկմանը մասնակցած շահառուները հաստատել են, որ կառավարության ներկայացուցիչները մասնակցել են իրազեկման և տեղեկատվության տարածման տարբեր միջոցառումներին՝ ներառյալ տեղական համայնքների համար բնապահպանական վճարումների և ռոյալթիներից մասհանումների վերաբերյալ դասընթացներին: Համաձայն «Շահառուների ներգրավվածություն» հարցաթերթի և շահառուների հետ խորհրդակցությունների՝ խմբակցությունների լայն շրջանակը ներգրավված է եղել համապատասխան, մասնավորապես ԱՃԹՆ-ի հաշվետվությունների և ԻՍ-ի թափանցիկության թեմաներով աշխատանքային խմբերում: Քննարկումներին մասնակցած շահառուները նշել են, որ պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խումբը ժամանակավորապես պասիվ է եղել մի շարք առավել լայն մարտահրավերների և շահառուների սահմանափակ կարողությունների պատճառով, սակայն նշել են, որ ակնկալվում է՝ առաջիկա տարիներին աշխատանքը այս ոլորտում կվերականգնվի:
Գործարար ոլորտի ներգրավվածությունը (Պահանջ 1.2) *Լիովին բավարարված*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 1.2 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ Վավերացման ժամանակ: Այս պահանջի նպատակն է ապահովել, որ արդյունահանող ընկերությունները լիովին, ակտիվ և արդյունավետ ներգրավված լինեն ԱՃԹՆ-ին, ինչպես բացահայտումների, այնպես էլ Բազմաշահառու խմբի աշխատանքներին մասնակցության առումով, և որ կառավարությունը ապահովում է դրա համար նպաստավոր միջավայր: Բոլոր խմբակցությունների՝ քննարկումներին մասնակցած շահառուները ընդգծել են, որ սույն նպատակն իրականացվել է՝ հաշվի առնելով ընկերությունների կանոնավոր հաշվետվությունները և ներգրավվածությունը ԱՃԹՆ-ի գործընթացին: Հասանելի փաստաթղթերը, ներառյալ «Շահառուների ներգրավման» հարցաթերթը, ցույց են տալիս, որ ընկերությունների խմբակցությունը ամբողջությամբ ներգրավված է եղել ԱՃԹՆ-ի գործընթացում նախորդ վավերացումից ի վեր: Ընկերությունների խմբակցությունը ներկայացված է Հայաստանում գործող վեց հանքարդյունաբերական

ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարություն

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

	ընկերություններով, որոնց՝ ԲՇԽ-ի ներկայացուցիչների շրջանում փոփոխությունները նկարագրված են «Շահառուների ներգրավման» հարցաթերթում: ԲՇԽ նիստի արձանագրությունները փաստում են ԲՇԽ քննարկումներին ընկերությունների խմբակցության անդամների կանոնավոր մասնակցության մասին: Ազգային քարտուղարության ներկայացուցիչները հաստատել են, որ ընկերությունները ժամանակին են ներկայացնում այն տվյալները, որոնք անհրաժեշտ են ԱՃԹՆ-ի հաշվետվությունների գործընթացի և նման հարցումների դեպքում ցանկացած պարզաբանում տրամադրելու արձագանքով հանդես գալու համար: Շահառուների հետ խորհրդակցությունները և առկա փաստաթղթերը վկայում են, որ դիտարկվող ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի իրականացման գործընթացին արդյունահանող ընկերությունների ներկայացուցիչների մասնակցության համար խոչընդոտներ չեն եղել: ԱՃԹՆ-ի հաշվետվությունը պարտադիր է դարձել ընկերությունների համար 2018 թվականից. խորհրդակցություններին մասնակցած շահառուները փաստել են պահանջվող տվյալների՝ ընկերությունների խմբակցության, ներառյալ ոչ մետաղական ընկերությունների կողմից այդ ժամանակվանից ի վեր հետևողական բացահայտման մասին:
Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը (Պահանջ 1.3) *Լիովին բավարարված*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 1.3 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ Վավերացման ժամանակ: Այս պահանջի նպատակն է ապահովել, որ քաղաքացիական հասարակությունը լիովին, ակտիվ և արդյունավետ ներգրավված լինի ԱՃԹՆ-ի գործընթացին, և որ սրա համար առկա է նպաստավոր միջավայր: Առկա փաստաթղթերը և շահառուների հետ խորհրդակցությունները վկայում են, որ սույն նպատակն իրագործվել է: Ըստ «CIVICUS» մոնիթորի՝ Հայաստանը շարունակում է մնալ դեղին գույնի տարբերանշանի ներքո և դասակարգվել որպես «խոչընդոտված» քաղաքացիական տարածք ունեցող երկիր: Սա համահունչ է «Freedom House»-ի «մասամբ ազատ» որակավորմանը՝ 54/100 վարկանիշով: Freedom House-ի վարկանիշային աղյուսակը հուշում է 2023 թվականին որոշ բարելավումների մասին, մասնավորապես՝ կապված քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների անկախության գնահատման հետ: 2018 թվականի Թավշյա հեղափոխությունից ի վեր կառավարությունը կենտրոնացել է տնտեսության տարբեր հատվածներում թափանցիկության և հաշվետվողականության ջանքերի ամրապնդման վրա՝ օրինակ՝ լրացնելով գործող օրենսդրությունը և ապահովելով համապատասխան տվյալների բաց լինելը: Հեղափոխությունից հետո ընտրված նոր (ներկայիս) կառավարությունը վայելում էր քաղաքացիական հասարակության ամուր և համակողմանի աջակցությունը: Այնուամենայնիվ, առկա վերլուծական

	ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քաղաքացիական հասարակության կարծիքները ներկայումս պառակտված են, և քաղաքացիական հասարակության որոշ անդամներ դժգոհություն կամ հիասթափություն են հայտնում բարեփոխումների տեմպերի և ազգային առաջնահերթություններին անդրադառնալու առկա կարողությունների վերաբերյալ: ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը բաղկացած է վեց ներկայացուցիչներից, որոնք ընտրվել են ՔՀԿ-ի խմբակցության ընթացակարգերի համաձայն: «Շահառուների ներգրավվածություն» հարցաթերթում նշվում է ընթացակարգերի՝ գործնականում պահպանվելու մասին՝ հստակորեն արձանագրելով անդամության վերաբերյալ փոփոխությունները դիտարկվող ժամանակահատվածում: Հարցաթերթում նշվում է, որ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը ներառում է ոչ պետական կազմակերպությունների և ակադեմիական շրջանակների ներկայացուցիչներ և բավականաչափ ներկայացնում է լայն համայնքը: Շահառուների հետ խորհրդակցությունները ցույց են տվել, որ մետաղական հանքարդյունաբերության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հետ մեկտեղ Ամուլսարի ոսկու հանքավայրը մնում է ամենաքննարկվող թեմաներից մեկը: Ինչպես նախորդ վավերացման դեպքում, ԱՃԹՆ-ի գործընթացը շարունակում է մարտահրավերների հանդիպել որոշ ՔՀԿ-ների արտահայտած խիստ հակահանքարդյունաբերական տեսակետների պատճառով: Միևնույն ժամանակ, կան նաև ապացույցներ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից իրականացվող իրազեկման միջոցառումների մասին, որոնք ուղղված են ԱՃԹՆ-ի դերի հստակեցմանը և բնական ռեսուրսների կառավարման վերաբերյալ քննարկումներին շահառուների լայն շրջանակ հրավիրելուն: Խոսքի ազատություն. ըստ «Freedom House»-ի՝ անկախ լրատվամիջոցները համեմատաբար ազատ են և ապահովում են տեղեկատվության լայն լուսաբանում: Պարզ է դառնում նաև, որ անհատներն ազատ են իրենց տեսակետները զգայուն թեմաների վերաբերյալ անկաշկանդ արտահայտելու հարցում: Սա բազմիցս հաստատվել է շահառուների հետ խորհրդակցությունների ժամանակ: Միևնույն ժամանակ, առկա փաստաթղթերում և շահառուների հետ խորհրդակցություններում նշվել են մի շարք օրենսդրական զարգացումներ, որոնք վիճարկում են խոսքի ազատությունը դիտարկվող ժամանակահատվածում, թեև նման բարեփոխումները հետագայում չեղյալ են հայտարարվել քաղաքացիական հասարակության շահերի պաշտպանության արդյունքում: Օրինակ՝ Քրեական օրենսգրքում լուրջ վիրավորանքների քրեականացման մասով կատարված լրացումները բացասական արձագանք են ստացել

	լրատվամիջոցների և հասարակության կողմից և այնուհետև հեռացվել 2022 թվականի ընթացքում: Խորհրդակցություններին մասնակցած շահառուներն ընդգծել են, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են բարձրացնել բնական ռեսուրսների կառավարման հետ կապված մտահոգիչ հարցեր՝ առանց սահմանափակման կամ հաշվեհարդարի: Այնուամենայնիվ, նշվել է, որ քաղաքացիական հասարակության ոչ բոլոր մեկնաբանություններն են հետևողականորեն հաշվի առնվում, մասնավորապես, ԲՇԽ-ից դուրս գտնվող գերատեսչությունների կողմից: «Շահառուների ներգրավվածություն» հարցաթերթում նաև ընդգծվում է, որ ԲՇԽ-ի հանդիպումների ընթացքում չեն քննարկվել որոշ թեմաներ, օրինակ՝ կառավարության հանքարդյունաբերության ռազմավարության մշակումը կամ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում պետական մասնակցության բարձրացումը: Շահառուների հետ խորհրդակցությունները ցույց են տվել, որ դա հիմնականում պայմանավորված է ԲՇԽ-ի տեսատեսակ հանդիպումների կազմակերպման հետ կապված մարտահրավերներով, և ոչ թե կոնկրետ թեմաներ օրակարգ մտցնելու սահմանափակմամբ: Խորհրդակցություններին մասնակցած շահառուները նշել են, որ դիտարկվող ժամանակահատվածում մի շարք վարչական վարույթներ են հարուցվել բնապահպանական ակտիվիստների դեմ, որոնցից շատերում շահել են քաղաքացիական հասարակության ակտիվիստները: Սույն վավերացման պահին կային մի շարք բաց զրպարտության գործեր, որոնք բողոքարկման փուլում էին, այդ թվում՝ մետաղական հանքարդյունաբերության նախագծերի հետ կապված (տե՛ս, օրինակ, այստեղ և այստեղ): Խորհրդակցություններին մասնակցած շահառուներն իրենց մտահոգություններն են հայտնել ազգային օրենսդրության՝ զրպարտության դրույթների կիրառման վերաբերյալ: Այնուամենայնիվ, նրանք ընդգծել են, որ դա չի ազդել ԱՃԹՆ-ի գործընթացում իրենց ներգրավվածության և ԱՃԹՆ-ի հարցերի վերաբերյալ հրապարակային կարծիքներն ազատորեն արտահայտելու, ինչպես նաև ԱՃԹՆ-ի գործընթացը հանրային որոշումների կայացման վրա ազդելու համար օգտագործելու իրենց ունակության վրա: Սա նաև հաստատվում է «Շահառուների ներգրավվածություն» հարցաթերթում, որը ներառում է հրապարակումների օրինակների համապարփակ ցանկ՝ ներառյալ ԱՃԹՆ-ի գործընթացում ներգրավված քաղաքացիական հասարակության կողմից պատրաստված քննադատական կարծիքները: Ավելի լայն խմբակցության ներկայացուցիչները, որոնք մասնակցել էին խորդհրդակցություններին, հաստատեցին նաև թեև որոշակի հրապարակումների հետ կապված մի շարք դատական վարույթներ են հարուցվել, քաղաքացիական հասարակությունը և

	լրատվամիջոցները դիտարկվող ժամանակահատվածում մնացել են ազատ քննադատական կարծիքներ արտահայտելու առումով: Խորհրդակցված շահառուները նաև իրենց մտահոգություններն են հայտնել Ընդերքի մասին օրենսգրքում կատարված վերջին փոփոխությունների վերաբերյալ, մասնավորապես՝ կապված համայնքի համաձայնության և հանքարդյունաբերության իրավունքների երկարաձգման հնարավորության հետ այն դեպքերում, երբ գործունեությունը սահմանափակվել է բոյկոտի պատճառով: Քաղաքացիական հասարակության՝ խորհրդակցություններին մասնակցած անդամներն ընդգծել են, որ նման փոփոխությունները մանրամասն չեն քննարկվել, և որ որոշ արձագանքներ ամբողջությամբ հաշվի չեն առնվել: Խորհրդակցություններին մասնակցած անդամները նշել են, որ կառավարության կողմից որևէ սահմանափակման կամ պատժի չեն ենթարկվել: Այնուամենայնիվ, նաև նշել են, որ կառավարությունը համեմատաբար պասիվ է եղել քաղաքացիական հասարակության՝ ընկերությունների հետ տարաձայնությունների հարցում: Բացի այդ, նշվել է, որ առավել լայն աշխարհաքաղաքական իրավիճակը բացասաբար է ազդել քաղաքացիական հասարակության լայն խմբակցության և լրատվական միջավայրի վրա, մասնավորապես՝ պայմանավորված ադրբեջանա-հայկական շարունակվող հակամարտությամբ և Հայաստանի ու ՀՀ քաղաքացիների դեմ հրապարակայնորեն հասանելի տեղեկատվության օգտագործման հնարավորությամբ: Օրինակ՝ հանքարդյունաբերության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հետևանքների հետ կապված հարցերը, ըստ երևույթին, ավելի ու ավելի են քաղաքականացվել երկու երկրների միջև հակամարտության համատեքստում, և լրատվամիջոցների այնպիսի հոդվածներում, ինչպիսին է 2023 թվականի փետրվարին «Politico»-ի սույն հոդվածը, նշվում է՝ Ադրբեջանը պնդում է, որ Հայաստանի կողմից արտոնագրված հանքարդյունաբերական գործունեությունը բնապահպանական բացասական ազդեցություն է ունեցել Լեռնային Ղարաբաղի մարզի վրա: Ընդհանուր առմամբ, ըստ երևույթին, բավարար ապացույցներ կան քաղաքացիական հասարակության՝ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի կառավարման խնդիրների մասին ազատ և քննադատաբար խոսելու կարողության մասին: Օրենսդրական փոփոխությունների, զրպարտության բաց գործերի և ավելի լայն աշխարհաքաղաքական իրավիճակի հետ կապված մտահոգությունները, ըստ երևույթին, էապես չեն սահմանափակել խոսքի ազատությունը, սակայն պահանջում են շարունակական մոնիթորինգ:

	Գործունեություն, հաղորդակցում, ներգրավվածություն, հասանելիություն հանրային որոշումների կայացմանը. «Շահառուների ներգրավվածություն» հարցաթերթը և շահառուների հետ խորհրդակցությունները ցույց են տվել, որ քաղաքացիական հասարակության՝ ԱՃԹՆ-ի գործընթացի և ԱՃԹՆ-ի հիմնական փաստաթղթերի վերաբերյալ հանրային որոշումների կայացմանը մասնակցելու, դրանց հաղորդակից լինելու և ներգարվվելու առումով որևէ հետընթաց չի գրանցվել, ինչպես նախորդ վավերացման դեպքում: Պետական և արտասահմանյան ֆինանսավորում ստանալու հնարավորության առումով քաղաքացիական հասարակության նկատմամբ պետական սահմանափակումներ չկան: Միևնույն ժամանակ, առկա փաստաթղթերը և շահառուների հետ խորհրդակցությունները վեր են հանել բարելավման մի քանի ոլորտներ, որոնք կարելի է դիտարկել քաղաքացիական հասարակության ձայնն ամրապնդելու տեսանկյունից: Մասնավորապես, նշվել է, որ օրենսդրական նախագծերի հանրային քննարկման համար մշակված «e-draft» հարթակում միշտ չէ, որ կարելի է գտնել բոլոր օրենսդրական նախագծերը, ինչը հանգեցնում է փոփոխություններին հետևելու դժվարությունների: Ավելին, մտահոգություններ են հնչել հանքարդյունաբերության ռազմավարության մշակման հետ կապված խորհրդակցությունների գործընթացի առնչությամբ: Եվ վերջապես, նշվել է ԲՇԽ-ի քննարկումների, ներառյալ պետական մասնակցության թեմաների շուրջ քննարկումների սահմանափակ շրջանակի մասին (տես Պահանջ 1.4): Այնուամենայնիվ, կան ապացույցներ, որ քաղաքացիական հասարակության լայն շրջանակն ի վիճակի է նպաստել ԱՃԹՆ-ի այնպիսի գործընթացներին, ինչպիսիք են Հայաստանի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրերի մշակումը, ԱՃԹՆ-ի հաշվետվության մեջ ներդրում ունենալը, ԱՃԹՆ-ի արդյունքների և ազդեցության տարեկան վերանայման վերաբերյալ տեսակետներ ներկայացնելու հնարավորությունը: Ընդհանուր առմամբ, կարծես թե քաղաքացիական հասարակության՝ ԱՃԹՆ-ի բոլոր գործընթացներին ներգրավվելու կարողությունների վերաբերյալ որևէ նոր սահմանափակում չի նկատվել, ինչը ենթադրում է, որ ԱՃԹՆ-ի արձանագրության խախտումներ չեն գրանցվել. դիտարկվող ժամանակահատվածում քաղաքացիական հասարակության մասնակցություն: Միևնույն ժամանակ, Քարտուղարությունն ընդունում է օրենսդրական փոփոխությունների հետագա մշտադիտարկման կարևորությունը՝ ապահովելու, որ քաղաքացիական հասարակության իրավունքները և ազատությունները շարունակեն պահպանվել ԱՃԹՆ-ի ամբողջ գործընթացում և արդյունահանող ոլորտի կառավարման շուրջ հանրային բանավեճերի առնչությամբ:

Բազմաշահառու խումբ (Պահանջ 1.4) *Լիովին բավարարված*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 1.4 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ վավերացման ժամանակ: Այս պահանջի նպատակն է ապահովել, որ քաղաքացիական հասարակությունը լիովին, ակտիվ և արդյունավետ ներգրավված լինի ԱՃԹՆ-ի գործընթացին, և որ սրա համար առկա է նպաստավոր միջավայր: Առկա փաստաթղթերը և շահառուների հետ խորհրդակցությունները վկայում են, որ սույն նպատակն իրագործվել է: Այս պահանջի նպատակն է ապահովել անկախ ԲՇԽ-ի առկայությունը, որը կարող է ակտիվ և բովանդակալից վերահսկողություն իրականացնել ԱՃԹՆ-ի ներդրման բոլոր հայեցակետերի նկատմամբ, և որը կոնսենսուսային եղանակով հավասարակշռում է երեք հիմնական խմբակցությունների (կառավարություն, ընկերություններ և քաղաքացիական հասարակություն) շահերը: Վավերացման թիմը նկատում է, որ ԲՇԽ-ի՝ պահանջի վերաբերյալ ինքնագնահատականը «գրեթե բավարարված» է եղել՝ հաշվի առնելով այս ժամանակահատվածում ԲՇԽ-ի տեսատեսակ հանդիպումների ցածր հաճախականությունը, այնուամենայնիվ գտնում է, որ 1.4 Պահանջի լայն նպատակը լիովին բավարարվել է՝ հաշվի առնելով ԲՇԽ-ի շարունակական վերահսկողությունը այլընտրանքային եղանակների, օրինակ՝ էլեկտրոնային հաստատման գործընթացի միջոցով՝ չնայած ազգային և աշխարհաքաղաքական հանգամանքներին, որոնք ազդել են տեսատեսակ հանդիպումների հնարավորության վրա: ԲՇԽ-ի ներկայիս կազմի մասին տեղեկատվությունը հասանելի է Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում, իսկ նախորդ վավերացումից հետո արված բոլոր փոփոխությունները զետեղված են «Շահառուների ներգրավվածություն» հարցաթերթում: ԲՇԽ-ի անդամակցության և գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը, որով յուրաքանչյուր շահագրգիռ խումբ առաջադրել է իր ներկայացուցիչներին, ևս նկարագրված է «Շահառուների ներգրավվածություն» հարցաթերթում: ԲՇԽ-ի ներկայացուցչության առաջադրման գործընթացի վերաբերյալ քաղաքացիական հասարակության և ընկերությունների խմբակցություններն ունեն իրենց ԲՇԽ-ի ներկայացուցչության առաջադրման գործընթացի սեփական ընթացակարգերը, որոնք հասանելի են հանրությանը: Բացի ԲՇԽ-ից, ստեղծվել են նաև աշխատանքային խմբեր հատուկ թեմատիկ ոլորտների և գործունեության համար: Օրինակ՝ աշխատանքային խմբերից մեկն աջակցում և վերահսկում է ԱՃԹՆ-ի հաշվետվությունների պատրաստումը, մեկ այլ խումբ դիտարկում է իրական սեփականության վերաբերյալ հաշվետվությունները: Աշխատանքային խմբերի անդամների ցանկը հասանելի է ԱՃԹՆ-ի հաշվետվությունների հավելվածներում:

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

	Հայաստանի ԲՇԽ-ի Աշխատակարգը (ԲՇԽ ԱԿ) հասանելի է Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում: «Շահառուների ներգրավվածություն» հարցաթերթում նշվում է 2023 թվականի հուլիսին ԱԿ-ում աննշան փոփոխությունների մասին: Հասանելի փաստաթղթերը և շահառուների հետ խորհրդակցությունները հաստատել են, որ ԲՇԽ-ի ԱԿ-ը գործնականում պահպանվել է, բացառությամբ ԲՇԽ-ի հանդիպումների պլանավորման ԿՈՎԻԴ-19 համաճարակի պատճառով: Բոլոր խմբակցությունների խորհրդակցված շահառուները հաստատել են, որ աշխատանքային ծրագրի գործողությունների և ԲՇԽ-ի որոշումների կայացման գործընթացի քննարկումները հիմնականում իրականացվել են հեռավար կարգով՝ վիրտուալ միջոցների և էլեկտրոնային հաղորդակցության միջոցով, ինչպես սահմանված է ԲՇԽ-ի ԱԿ-ում: ԲՇԽ նիստերի արձանագրությունները և էլեկտրոնային որոշումները փաստաթղթավորված են Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում: Խորհրդակցություններին մասնակակցած շահառուները հաստատել են, որ էլեկտրոնային հաստատման գործընթացն ապահովում է աշխատանքային ծրագրի հիմնական գործողությունների կատարումը, սակայն նաև նշել են, որ 2020 և 2021 թվականներին տետատետ հանդիպումների բացակայությունը ազդել է քննարկումների շրջանակի և իրականացվող գործողությունների վրա: Սահմանափակ տետատետ հանդիպումների՝ սույն պահանջի նպատակի կատարման վրա ազդեցության առումով խորհրդակցություններին մասնակակցած շահառուների տեսակետները տարբերվում են: «Շահառուների ներգրավվածություն» հարցաթերթում նույնպես անդրադարձ է արվում այս խնդրին՝ նշելով, որ ԲՇԽ-ը համաձայնել է առաջիկա տարում անցկացնել երեք տետատետ հանդիպում՝ հանքարդյունաբերության ոլորտի կառավարման վերաբերյալ լայն քննարկումների ավելի մեծ հնարավորություններ ապահովելու համար:
Նոր ուղղիչ գործողություններ և առաջարկություններ	
• 1.3 Պահանջի կատարումն ամրապնդելու նպատակով խրախուսվում է, որ Հայաստանը ապահովի շրջակա միջավայրին առնչվող ցանկացած օրենսդրական զարգացման վերաբերյալ ԲՇԽ-ի կողմից մշտադիտարկումը՝ ապահովելով քաղաքացիական հասարակության մասնակցությունը արդյունահանող ոլորտի կառավարման հանրային քննարկումներին և դրանց կիրարկմանը՝ նպատակ ունենալով պահպանելու քաղաքացիական հասարակության մասնակցության համար բարենպաստ միջավայրը՝ համաձայն ԱՃԹՆ-ի Քաղաքացիական հասարակության արձանագրության և համապատասխան օրենքների, կանոնակարգերի և վարչական կանոնների, ինչպես նաև Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման գործում առկա պրակտիկայի: • 1.4 Պահանջի կատարումն ամրապնդելու նպատակով խրախուսվում է, որ Հայաստանը մշտադիտարկի՝ արդյոք գործնականում պահպանվում է Աշխատակարգը, մասնավորապես ԲՇԽ-ի հանդիպումների պլանավորման մասով: Խրախուսվում է, որ բոլոր խմբակցությունները ներկայացնեն իրենց առաջարկները ԲՇԽ-ի նիստերի	

օրակարգերում լրացումներ կատարելու առումով, որպեսզի քննարկումների շրջանակը ներառի հետաքրքրությունների բոլոր համապատասխան թեմաները:

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

4. Թափանցիկությունը

Այս բաղադրիչով գնահատվում են ԱՃԹՆ-ի 2-ից 6-րդ Պահանջները, որոնք ԱՃԹՆ-ի Ստանդարտի՝ բացահայտմանը վերաբերող պահանջներն են:

Արդյունահանող ճյուղերի մոնիթորինգը (Պահանջներ 3.1, 6.3)

Մոդուլի շրջանակում առաջընթացի դիտարկում

Հայաստանը պետական տարբեր պորտալների միջոցով բացահայտում է երկրի արդյունահանող ոլորտի վերաբերյալ բավականաչափ տեղեկատվություն և ներկայացնում հետախուզման աշխատանքների հետ կապված վերջին միտումների ու զարգացումների, ինչպես նաև մետաղական հանքարդյունաբերության ոլորտի ունեցած տնտեսական ներդրումի վերլուծությունը: Համապատասխան տվյալները նաև բացահայտվում և վիզուալիզացվում են Հայաստանի ԱՃԹՆ-ի տվյալների պորտալի միջոցով, ինչը քաղաքացիների ձեռքում ծառայում է որպես օգտակար գործիք՝ հիմնական ցուցանիշները հասկանալու համար: Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի՝ ազգային տնտեսության մեջ ունեցած ներդրման մասին տվյալները հասանելի են նաև կառավարության համապատասխան կայքերի միջոցով:

Պահանջի կատարման առաջընթացը և ուղղիչ գործողությունները

ԱՃԹՆԻ-ի Պահանջը / նախկին ուղղիչ գործողությունը և գնահատումը	ԱՃԹՆ-ի պահանջի բավարարման հարցում առաջընթացի նկարագիրը
Հետախուզման աշխատանքների մասին տեղեկությունները (Պահանջ 3.1) *Լիովին բավարարված*	Համաձայն Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 3.1 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ Վավերացման դեպքում: Այս պահանջի նպատակն է ապահովել հանրության հասանելիությունը երկրի արդյունահանման ոլորտի և դրա ներուժի, այդ թվում՝ վերջին, ընթացիկ և պլանավորված նշանակալի հետախուզման գործողություններին: Հիմնվելով առկա բացահայտումների վրա՝ Քարտուղարությունը գտնում է, որ նպատակն ամբողջությամբ կատարվել է, սակայն դեռ չի գերազանցվել՝ ակնկալելով սույն տեղեկատվության ավելի համակարգված բացահայտումներ: Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020-2021 թվականների հաշվետվությունը ներկայացնում է արդյունահանող ոլորտի, ներառյալ համապատասխան հետախուզման գործողությունների նկարագիրը 2020 և 2021 թվականների համար: Հաշվետվությունում նշվում է, որ ֆինանսական այս տարիներին մետաղական հանքաքարի՝ որպես հիմնական հաստատված պաշարներ հանդիսացել են երկաթը, ոսկին, մագնեզիումը, պղնձը և քրոմիտը՝ ներառելով հիմնական արդյունահանող շրջաններում հայտնաբերված պաշարների նկարագիրը:

	Ինչ վերաբերում է այս պահանջի խրախուսելի կողմերին, Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020-2021 թթ. զեկույցն ընդգրկում է 2020 և 2021 թվականներին հայտնաբերված պաշարների համառոտ վերլուծությունը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ հանքարդյունաբերության ոլորտի և հանքարդյունաբերության գործունեության վերաբերյալ: Օրինակ՝ նշված են մի շարք հանքավայրեր, այդ թվում՝ հանքավայրերի հաշվարկման հետ կապված օրենսդրական փոփոխությունները: Ավելին, ԱՃԹՆ հաշվետվությունը հաստատում է, որ արհեստագործական և փոքրածավալ հանքարդյունաբերությունը կիրառելի չէ Հայաստանում: Նախորդ հաշվետվություններում ներառված է արդյունահանող ոլորտի համառոտ պատմությունը, ինչը հասանելի է Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում: Այնուամենայնիվ, պաշարների մասին տեղեկատվությունը և արդյունահանող ոլորտի համառոտ պատմությունը կարծես թե համակարգված չեն բացահայտվում և/կամ թարմացվում կառավարության համապատասխան (օրինակ՝ ՏԿԵՆ կայքում) և ընկերությունների պորտալներում:
Արդյունահանող ոլորտի տնտեսական ներդրումը (Պահանջ 6.3) *Լիովին բավարարված*	Համաձայն Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 6.3 Պահանջը լիովին բավարարված է: Սույն պահանջը նախորդ վավերացման ժամանակ գնահատվել էր որպես գերազանցված: Պահանջի նպատակն է ապահովել արդյունահանող ոլորտի՝ ազգային տնտեսության մեջ ներդրման և տնտեսության մեջ բնական ռեսուրսների կարևորության մակարդակի հանրային ըմբռնումը: Առկա փաստաթղթերը և շահառուների հետ խորհրդակցությունները ցույց են տալիս, որ սույն նպատակն ամբողջությամբ կատարվել է, սակայն դեռ չի գերազանցվել՝ ակնկալելով արդյունահանող ոլորտում զբաղվածության տվյալների ավելի ընդգրկուն, համակարգված բացահայտում: Մետաղական հանքարդյունաբերության ոլորտի՝ տնտեսության մեջ ներդրման մասին տվյալները բացահայտված են Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020-2021 թթ. հաշվետվությունում: Զեկույցը ներառում է տեղեկատվություն մետաղական հանքարդյունաբերության ոլորտի համախառն ավելացված արժեքի և Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) նկատմամբ դրա տոկոսային հարաբերակցության մասին, մետաղական հանքարդյունաբերության ոլորտից ստացվող պետական եկամուտների և ընդհանուր պետեկամուտների համատեքստում դրա տոկոսային հարաբերակցության մասին, մետաղական հանքարդյունաբերության ոլորտի արտահանման և Հայաստանի ընդհանուր արտահանման մեջ դրա տոկոսային հարաբերակցության մասին, մետաղական հանքարդյունաբերության ոլորտում աշխատող անձանց թվի վերաբերյալ՝ ըստ սեռի, և նրանց տոկոսային հարաբերակցությունը զբաղվածության ընդհանուր թվի մեջ, ինչպես նաև տեղեկատվություն այն առանցքային շրջանների/տարածքների մասին, որտեղ կենտրոնացված է արդյունահանումը:

	Տվյալները համապարփակ են, բավականաչափ տարանջատված և մանրամասն: Բացի այդ, հիմնական ցուցանիշների մասին տեղեկատվությունը (վիզուալիզացված տարբերակով) տրամադրվում է նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի տվյալների պորտալում: Տվյալների մեծ մասը հասանելի է նաև Վիճակագրական կոմիտեի կայքում: Այնուամենայնիվ, օգտագործվել են նաև լրացուցիչ աղբյուրներ և հավաքագրվել այլ տվյալներ առավել տարանջատված տվյալներ հավաքագրելու նպատակով, օրինակ՝ կապված զբաղվածության հետ: Բացի այդ, ԱՃԹՆ-ի հաշվետվությունը տրամադրում է զբաղվածության տարանջատված տվյալներ՝ ըստ հանքարդյունաբերության առաջատար տասը ընկերությունների և ըստ տարածաշրջանների, և ներառում վերջին միտումների և ազդեցության գործոնների վերլուծություն: Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020-2021 թթ. զեկույցում նշվում են Վիճակագրական կոմիտեի կողմից բացահայտված և ընկերությունների կողմից ներկայացված տվյալների միջև որոշ տարբերություններ, և պարզաբանվում են անհամապատասխանությունների հնարավոր պատճառները: ԱՃԹՆ-ի հաշվետվությունները, ըստ երևույթին, չեն ապահովում զբաղվածության տվյալների տարանջատումն՝ ըստ զբաղեցրած պաշտոնների մակարդակի:
Նոր ուղղիչ գործողություններ և առաջարկություններ	
• 3.1 Պահանջի կատարումն ամրապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանը խթանի արդյունահանող ոլորտի հետ կապված համապատասխան տեղեկատվության համակարգված բացահայտումը՝ ներառյալ պաշարների մասին տեղեկատվությունը, արդյունահանող ոլորտի պատմությունը և նշանակալի հետախուզման գործողությունների վերաբերյալ տեղեկատվությունը: • 6.3 Պահանջի կատարումն ամրապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանն օգտագործի ԱՃԹՆ-ն՝ խթանելու ազգային տնտեսության մեջ արդյունահանող ոլորտի ներդրման վերաբերյալ տեղեկատվության համակարգված բացահայտումը՝ այդ թվում զբաղվածության վերաբերյալ տարանջատված տվյալները՝ ըստ զբաղվածության մակարդակի և սեռի:	

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

Իրավական շրջանակը և ֆիսկալ ռեժիմը (2.1, 2.4, 6.4 Պահանջներ)

Մոդուլի շրջանակում առաջընթացի դիտարկում

Հայաստանը իրավական և հարկաբյուջետային դաշտի մասին բացահայտում է համակողմանի տեղեկատվություն՝ ներառյալ պայմանագրերի և արտոնագրերի ամբողջական տեքստը, ինչպես նաև արդյունահանող ոլորտի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության կառավարման կանոնները: Իրավական դաշտի և ֆիսկալ ռեժիմի մասին տեղեկատվության մեծ մասը համակարգված կերպով բացահայտվում է կառավարության կայքերի միջոցով, թեև այս կանոնավոր բացահայտումները հետագայում էլ ավելի խթանելու հնարավորություն կա:

Պահանջի կատարման առաջընթացը և ուղղիչ գործողությունները

ԱՃԹՆԻ-ի Պահանջը / նախկին ուղղիչ գործողությունը և գնահատումը	ԱՃԹՆ-ի պահանջի բավարարման հարցում առաջընթացի նկարագիրը
Իրավական շրջանակը և ֆիսկալ ռեժիմը (Պահանջ 2.1) *Լիովին բավարարված*	Միջազգային քարտուղարության գնահատականի համաձայն՝ 2.1 Պահանջը լիովին բավարարված է: Նախորդ վավերացման ժամանակ սույն պահանջի կատարումը գնահատվել էր «գերազանցված»: Պահանջի նպատակն է ապահովել արդյունահանող ոլորտի կարգավորող շրջանակի բոլոր հայեցակետերի հանրային ըմբռնումը՝ ներառյալ իրավական դաշտը, ֆիսկալ ռեժիմը, պետական մարմինների դերը և բարեփոխումները: Հիմնվելով առկա բացահայտումների վրա՝ Քարտուղարությունը գտնում է, որ նպատակը լիովին իրագործված է, սակայն դեռևս չգերազանցված՝ ակնկալելով արդյունահանող ոլորտի իրավական շրջանակի և ֆիսկալ ռեժիմի էական ընթացիկ և պլանավորված բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվության ավելի խորը, համակարգված բացահայտում, ինչպես նաև ակնկալելով ԱՃԹՆ-ի հաշվետվություններ, որոնք կարող են նպաստել արդյունահանող ոլորտի կարգավորող շրջանակի վերաբերյալ հանրային ընկալմանը: Հայաստանը համապարփակ կերպով հրապարակել է ֆիսկալ ռեժիմի հետ կապված և պահանջվող ամբողջ տեղեկատվությունը՝ ներառյալ ֆիսկալ ապակենտրոնացման մակարդակի, համապատասխան օրենքների և կանոնակարգերի նկարագրի, համապատասխան պետական մարմինների դերերի և պարտականությունների մասին տեղեկատվությունը: Համապատասխան օրենքներն ու կանոնակարգերը հասանելի են հայերենով առցանց իրավաբանական տեղեկատվական համակարգի՝ «ARLIS»-ի միջոցով: Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքը պարունակում է ոլորտի համապատասխան օրենսդրության նկարագիրը: Ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող կամ առնչվող հիմնական իրավական ակտերն ամփոփված են ԱՃԹՆ-ի

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

	2019թ. հաշվետվությունում: ԱՃԹՆ-ի 2020-2021 թթ. հաշվետվությունում պարունակվում է 2018 թվականից ի վեր օրենքներում և կանոնակարգերում արված հիմնական փոփոխությունները: Պետական գերատեսչությունների դերակատարման նկարագիրը հասանելի է ԱՃԹՆ-ի 2019 թ. հաշվետվությունում և տեղ է գտել համապատասխան գերատեսչությունների կայքերում: ԱՃԹՆ-ի 2016-2017, 2018 և 2019 թվականների հաշվետվություններն անդրադառնում են հանքարդյունաբերության իրավունքներ շնորհելու մեխանիզմներին: Օգտակար հանածոների իրավունքների ռեժիմի փոփոխությունները մանրամասն ներկայացվել են ԱՃԹՆ-ի 2019 և 2020-2021 թվականների հաշվետվություններում: Ֆիսկալ ռեժիմի մաս կազմող յուրաքանչյուր հարկատեսակի օրենսդրական կարգավորումների մանրամասն վերլուծությունը կարելի է գտնել ԱՃԹՆ-ի 2018 և 2016-2017 հաշվետվություններում: Իրավական ռեժիմի փոփոխությունները սահմանված են ԱՃԹՆ-ի 2020-2021 թ. հաշվետվությունում: Հաշվետու ժամանակահատվածում ֆիսկալ ռեժիմի փոփոխությունների մասին տեղեկություններն ամփոփված են ԱՃԹՆ-ի 2020-2021 թվականների հաշվետվությունում: Ինչպես նշված է 2019 թվականի վավերացման զեկույցում և ԱՃԹՆ-ի նախորդ հաշվետվություններում, Հայաստանում ֆիսկալ ռեժիմը բավականին կենտրոնացված է: Անմիջապես համայնքների կողմից հավաքագրվող եկամուտների հոսքերը նշված են 2020-2021 թ. հաշվետվությունում: Շահառուների հետ խորհրդակցությունները փաստում են, որ ԱՃԹՆ-ի առցանց փաստաթղթերը տեղեկատվության օգտակար աղբյուրներ են, որոնք ապահովում են իրավական շրջանակի համապարփակ նկարագիրը: Խորհրդակցությունների ընթացքում նաև նշվել է մի քանի շահառուների՝ վերջերս իրականացված և նախատեսվող բարեփոխումներում, այդ թվում՝ Ընդերքի մասին օրենքում, Ռոյալթիների մասին օրենքում և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման օրենքում փոփոխություններում ներգրավվածության մասին: Գոյություն ունի օրենսդրական նախագծերի վերաբերյալ մեկնաբանություններ տրամադրելու մեխանիզմ՝ «e-draft» հարթակ, սակայն խորհրդակցված շահառուները տարբեր կարծիքներ են հայտնել այս հարթակի արդյունավետության մասով:
Պայմանագրերը (Պահանջ 2.4) *Լիովին բավարարված*	Միջազգային քարտուղարության գնահատականի համաձայն՝ 2.4 Պահանջը լիովին բավարարված է: Նախորդ վավերացման ժամանակ սույն պահանջի կատարումը գնահատվել էր որպես «բավարար»: Պահանջի նպատակն է ապահովել արդյունահանման գործունեության հիմքում ընկած բոլոր արտոնագրերի և պայմանագրերի հանրային հասանելիությունը (առնվազն 2021 թվականից սկսած), որպես հանրության կողմից երկրի արդյունահանող ոլորտում գործող

	ընկերությունների պայմանագրային իրավունքների և պարտավորությունների ըմբռնման հիմք: Հիմնվելով շահառուների հետ խորհրդակցությունների և առկա փաստաթղթերի վրա՝ Քարտուղարությունը գտնում է, որ նպատակն իրականացվել է: Կառավարության քաղաքականությունը նպաստում է պայմանագրերի և լիցենզիաների բացահայտմանը: 2018 թվականի մարտին ընդունված «Ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-191-Ն օրենքը սահմանում է, որ լիազոր մարմինն իր պաշտոնական կայքում հրապարակում է ընդերքօգտագործման պայմանագրերը և օգտակար հանածոներ արդյունահանող ընդերքօգտագործողների վերաբերյալ փոփոխությունները: Այս քաղաքականությունը ներառում է արդյունահանման իրավունքները ինչպես մետաղական, այնպես էլ ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտներում: Օրենքների և կանոնակարգերի ամբողջական տեքստը կարելի է գտնել «ARLIS»-ում: Արդյունահանման բոլոր պայմանագրերը հասանելի են հայերենով և PDF ձևաչափով: Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում հասանելի բաց հանքարդյունաբերական պայմանագրերի հղումը նաև հնարավորություն է տալիս մուտք գործելու մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների բոլոր պայմանագրեր, այդ թվում՝ ՏԿԵՆ-ի կայքում հրապարակված դադարեցված թույլտվություններ: Կառավարության ներկայացուցիչների խոսքով՝ բոլոր հավելվածներն ու փոփոխությունները բացահայտվել են: Թույլտվությունների մասին տեղեկատվությունը համակարգված կերպով հրապարակվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) կայքում՝ բաց տվյալների ձևաչափով («xls»): Համաձայն 2020-2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցի՝ դիտարկվող ֆինանսական տարիներին պայմանագրերում կատարվել են որոշակի փոփոխություններ: Այս փոփոխությունները լայնորեն նկարագրված են ԱՃԹՆ-ի հաշվետվության մեջ և բացահայտված ՏԿԵՆ-ի կայքում: Բացի այդ, զեկույցում ներառված է ընկերությունների սոցիալական պարտավորությունների վերաբերյալ հավելվածների առկայության ակնարկ (*տես Գլուխ 6.1*): Խորհրդակցություններին մասնակցած շահառուները որևէ մտահոգություն չեն հայտնել ՏԿԵՆ-ի կայքում առկա պայմանագրերի բացահայտման առումով տեղեկատվության համապարփակության մասով: Քաղաքացիական հասարակության շահառուները պայմանագրերի թափանցիկությունը համարում են կարևոր ձեռքբերում և ընդգծում բացահայտման կարևորությունը՝ ընկերությունների կողմից իրենց պարտականությունների կատարումն ապահովելու համար: Քաղաքացիական հասարակության շահառուները նշում են, որ զգալի ջանքեր են գործադրվել այս տեղեկատվությունը տարածելու և նաև

	համայնքների կողմից այն օգտագործելի դարձնելու համար: Դեպք է գրանցվել, երբ ընկերության՝ պայմանագրում ներառված սոցիալական պատասխանատվության դրույթը չի համապատասխանել համայնքի կարիքներին, ինչը հետագայում հանգեցրել է պայմանագրի փոփոխության: Սա ընդգծում է սույն տեղեկատվության՝ հանրությանը հասանելի լինելու կարևորությունը:
Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը (Պահանջ 6.4) *Լիովին բավարարված*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 6.4 Պահանջը լիովին բավարարված է: Այս պահանջի նպատակն է շահառուների համար հիմք ստեղծել՝ գնահատելու արդյունահանող ոլորտի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կառավարելու համար կարգավորող շրջանակի և մոնիթորինգի ջանքերը, ինչպես նաև գնահատելու արդյունահանող ընկերությունների՝ բնապահպանական պարտավորությունների առումով հետևողական լինելը: Հիմնվելով շահառուների հետ խորհրդակցությունների և առկա փաստաթղթերի վրա՝ Քարտուղարությունը գտնում է, որ նպատակն ամբողջությամբ իրականացվել է: Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ համապատասխան օրենսդրությունը համակարգված կերպով հասանելի է «ARLIS»-ի միջոցով (տես այստեղ և այստեղ): «Թափոնների մասին», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», «Բնապահպանական վերահսկողության մասին» և «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքները, «ՀՀ Հարկային օրենսգիրքը» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը կարգավորում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պարտականությունները, բնապահպանական վճարներն ու հարկաբյուջետային հարաբերությունները: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» օրենքը ոլորտում հարաբերությունները կարգավորող առանցքային իրավական ակտերից է, որը սահմանում է մետաղական հանքաքարի, օգտակար հանածոների կամ հանքարդյունաբերության թափոնների վերամշակման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման իրավական ռեժիմը: Շրջակա միջավայրի վերահսկողության մասին օրենքում կատարված փոփոխությունները տեղ են գտել ԱՃԹՆ-ի 2020-2021 թ. զեկույցում: Մի շարք այլ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր էլ կարգավորում են մետաղների վերամշակման ոլորտը, որը պահանջում է համապատասխան թույլտվություններ օդային և ջրային արտանետումների համար: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների (ՇՄԱԳ) եզրակացությունները հասանելի են Շրջակա միջավայրի նախարարության կայքում: Ծրագրերի, եզրակացությունների և հանրային լսումների արձանագրությունների մասին տեղեկատվությունը հասանելի

	է Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում: Համաձայն ԱՃԹՆ-ի 2021-2022 թ. հաշվետվության՝ մոնիթորինգի արդյունքները Շրջակա միջավայրի նախարարություն ներկայացվում են եռամսյակային և տարեկան կտրվածքով: Շրջակա միջավայրի նախարարությունը տասն աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է հաշվետվությունները և ներկայացնում դրանք իր պաշտոնական կայքում: Տարեկան ամփոփ հաշվետվությունը պետք է ներկայացվի նաև արդյունահանող ընկերությունների կայքում: ԱՃԹՆ-ի 2020-2021 թ. հաշվետվությունը ներառում է 2014-ից մինչև 2022 թվականներին նախարարությունում առկա ՇՄԱԳ բոլոր փորձաքննությունների եզրակացությունների ամփոփ նկարագիրը՝ ընդգծելով, թե որոնք չեն հրապարակվել: Հաշվետվության մեջ նշվում է որոնման կոճակի միջոցով 2016 թվականին կամ դրանից առաջ հրապարակված եզրակացությունների հանրային հասանելիության հետ կապված խնդիրների մասին, քանի որ դրանք ներկայացված են արխիվացված փաստաթղթերի տեսքով: Զեկույցում ներկայացված է նաև 2020 և 2021 թվականներին շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատական ներկայացրած ընկերությունների վերլուծությունը: Դրանում նշվում է, որ 2020 թվականի ընթացքում ԱՃԹՆ-ի հաշվետվություն տրամադրող 26 ընկերություններից միայն 7-ը, իսկ 2021 թվականի ընթացքում ԱՃԹՆ 24 հաշվետու ընկերություններից միայն 6-ն են ներկայացրել շրջակա միջավայրի մոնիթորինգի հաշվետվություն: Կառավարության՝ խորհրդակցություններին մասնակցած ներկայացուցիչները ընդգծել են Շրջակա միջավայրի հսկողության մասին օրենքում կատարված փոփոխության կարևորությունը, որով ապահովվում է տեղական իշխանություններ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեկնարկի հավանությունը՝ սույնով ի սկզբանե գործընթացում ներգրավելով համայնքներին: Քաղաքացիական հասարակության շահառուները նշել են, որ ակտիվորեն ներգրավված են եղել փոփոխությունների վերաբերյալ խորհրդակցությունների գործընթացին՝ մասնակցելով հարցի շուրջ ավելի քան 30 քննարկումների՝ վրդովմունք հայտնելով, սակայն, որ այդպես էլ անհասկանալի է, թե փոփոխությունների նախագծի որ տարբերակն է ընդունվելու:
Նոր ուղղիչ գործողություններ և առաջարկություններ	
• 2.1 Պահանջի կատարումը խթանելու նպատակով խրախուսվում է, որ Հայաստանը արդյունահանող ոլորտի օրենսդրության հետ կապված տեղեկատվությունը կառուցվածքային տարբերակով ներկայացնի՝ ապահովելով գործող կանոնակարգերի և որոշումների հեշտ հասանելիությունը: • 2.4 Պահանջի կատարումը խթանելու նպատակով խրախուսվում է, որ Հայաստանը դիտարկի իրավական և պայմանագրային հայեցակետերի վերաբերյալ տարբեր մակարդակների ըմբռնում ունեցող շահառուների կարողությունների զարգացման հնարավորությունները՝ ամրապնդելու շահառուների կողմից՝ արդեն հրապարակված	

արդյունահանման պայմանագրերից և լիցենզիաներից օգտվելու կարողությունը: Խրախուսվում է, որ Հայաստանը պարբերաբար վերանայի հրապարակված պայմանագրերի և լիցենզիաների համակողմանիությունը՝ ներառյալ ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում: • 6.4 Պահանջի կատարումը խթանելու նպատակով խրախուսվում է, որ Հայաստանի ԱՃԹՆ-ը բացահայտի շրջակա միջավայրի վրա ազդեցության այն հաշվետվությունները, որոնք ստացվել են հաշվետու ընկերություններից:

Լիցենզիաները և սեփականության իրավունքները (2.2, 2.3 Պահանջներ)

Մոդուլի շրջանակում առաջընթացի դիտարկում

Հայաստանը պետական պորտալների միջոցով համակարգված կերպով բացահայտում է պայմանագրերի և թույլտվությունների շնորհման հետ կապված տեղեկատվության մեծ մասը, ինչպես պահանջվում է ԱՃԹՆ-ի Ստանդարտով՝ չնայած նկատվում է լիցենզիայի շնորհման և փոխանցման պրակտիկայի համակարգված բացահայտման ամրապնդման կարիք: ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) վերահսկում է հանքարդյունաբերության ոլորտը և ղեկավարում թույլտվությունների ռեգիստրը:

Պահանջի կատարման առաջընթացը և ուղղիչ գործողությունները

ԱՃԹՆԻ-ի Պահանջը / նախկին ուղղիչ գործողությունը և գնահատումը	ԱՃԹՆ-ի պահանջի բավարարման հարցում առաջընթացի նկարագիրը
Պայմանագրերի և լիցենզիաների տրամադրումը **(Պահանջ 2.2)** *Լիովին բավարարված*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 2.2 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ վավերացման դեպքում: Այս պահանջի նպատակն է հանրային պատկերացում ապահովել նավթի, գազի և հանքարդյունաբերության լիցենզիաների շնորհման և փոխանցման, լիցենզիաների շնորհման և փոխանցման կանոնադրական ընթացակարգերի և գործնականում այդ ընթացակարգերի պահպանման վերաբերյալ: Սա կարող է շահառուներին օգնել բացահայտել և լուծել լիցենզիայի տրամադրման գործընթացում հնարավոր թույլ կողմերը: Փաստաթղթերի և շահառուների հետ խորհրդակցությունների հիման վրա Քարտուղարությունը գտնում է, որ նպատակն ամբողջությամբ իրականացվել է: Թույլտվությունների տրամադրման գործընթացը հստակորեն ամրագրված է Ընդերքի մասին օրենսգրքում, ինչպես նաև ԱՃԹՆ-ի 2016-2017 և 2018

ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարություն

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

	թվականներն ընդգրկող հաշվետվություններում: Գործընթացի ցանկացած փոփոխություն կարելի է գտնել ԱՃԹՆ-ի 2019 և 2020-2021 թվականների հաշվետվություններում: Սա ներառում է երկու տեսակի թույլտվություններ՝ հետախուզման, որը վերաբերում է երկրաբանական ուսումնասիրություններին, և արտահանման՝ որպես օգտակար հանածոների արդյունահանում: Մրցակցային հիմունքներով թույլտվությունների տրամադրման վերաբերյալ դրույթներ չկան՝ ո՛չ օրենքով սահմանված, ո՛չ գործնականում: Հանքավայրի շահագործման իրավունք ստանալու համար առաջնահերթությունը տրվում է հետախուզման գործունեություն իրականացնելու իրավունք կրողին: Նման իրավունք ունեցող անձի բացակայության դեպքում թույլտվություն է ստանում առաջին դիմում ներկայացնողը: ԱՃԹՆ-ի 2020-2021 թ. զեկույցում այս գործընթացում փոփոխությունների մասին հիշատակումներ չկան: Տեխնիկական և ֆինանսական չափանիշները համակարգված կերպով բացահայտվում են Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում («ARLIS»)՝ վարչապետի կողմից հրապարակված N367-Ն որոշմամբ: Սա նաև ամրագրված է ԱՃԹՆ-ի 2016-2017 թ. զեկույցում: Ինչպես նշվում է վերևում, ընդերքի միևնույն տարածքի վերաբերյալ երկու կամ ավելի անձանց կողմից հայտ ներկայացնելու դեպքում առաջնահերթությունը տրվում է այն դիմորդին, որի հայտն առաջինն է գրանցվել, կամ ով ունի հետախուզման իրավունք: Եթե հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերը թերի են, կամ տրամադրված ուսումնասիրության նախագիծը, ինչպես նաև հայտատուի ֆինանսական և տեխնիկական հնարավորությունների և ռեսուրսների մասին տեղեկատվությունը չեն համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ՏԿԵՆ-ը 10-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում է դիմորդին: Ծանուցումը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում հայտատուն պետք է անդրադառնա վերհանված բացերին: Նշված բացերը սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում լիազոր մարմինն այս հիմքով մերժում է դիմումը: Թույլտվությունների փոխանցման գործընթացը ամրագրված է Ընդերքի մասին օրենսգրքում: ԱՃԹՆ-ի 2016-2017 թ. զեկույցում նաև մեկնաբանվում են ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը կարգավորող գործելակերպը, կանոնները և համապատասխան պետական մարմինները: ԱՃԹՆ-ի 2020-2021 թ. զեկույցում ընդգծվում են ընդերքի օգտագործման իրավունքների փոխանցման ընթացակարգի փոփոխությունները: Փոխանցումները կատարվում են սեփականության կամ մասնակցային շահերի փոխանցման միջոցով. շրջանակը թույլ չի տալիս մի ընկերությունից մյուսին փոխանցումը: Այնուամենայնիվ, հանքարդյունաբերության թույլտվություն ունեցողների սեփականության և վերահսկողության փոփոխությունների կանոններն ու հետևանքները կարելի է հետագա մշակման ենթարկել:

	Դիտարկվող ժամանակահատվածում մետաղական օգտակար հանածոների հետախուզման կամ շահագործման թույլտվություններ չեն շնորհվել կամ փոխանցվել, և, հետևաբար, ԱՃԹՆ-ի վերջին զեկույցում շեղումների մասին հիշատակումներ չկան: Այդ մասին հաստատել են կառավարության ներկայացուցիչների հետ խորհրդակցությունները: Հայաստանի ԱՃԹՆ-ն նաև հաստատել է, որ ԱՃԹՆ-ի գործընթացը չի ներառում ոչ մետաղական սեկտորը, և որ ԲՇԽ-ն հատուկ չի դիտարկել ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտին առնչվող լիցենզավորման կանոններն ու գործելակերպը՝ հաշվի առնելով սույն ենթոլորտից վճարումների ցածր էականությունը: ՏԿԵՆ-ը հայտարարել է, որ 2020-2021 թվականների ընթացքում եղել է յոթ մերժված թույլտվություն, հինգը՝ հետախուզման և երկուսը՝ արդյունահանման մասով: Այս մերժումները, ի թիվս այլոց, վերաբերում էին օրենքով սահմանված տեխնիկական կամ ֆինանսական չափանիշներին չբավարարելուն, օրինակ՝ ֆինանսական միջոցների անբավարարությունը կամ նախատեսված ժամկետներում լրացուցիչ տեղեկատվություն չտրամադրելը: Բոլոր խմբակցությունների ներկայացուցիչները հաստատել են, որ ընդհանուր պատկերացում ունեն հետախուզման և արդյունահանման թույլտվության հայտերի և շնորհման գործընթացի ֆինանսական և տեխնիկական չափանիշների վերաբերյալ: Քաղաքացիական հասարակության շահառուների հետ խորհրդակցությունները հաստատել են բնապահպանական օրենսդրության վերջին փոփոխություններով թույլտվությունների տրամադրման փուլում հանրությանը ներգրավելու գործընթացի փոփոխությունը: Շահառուները նշել են, որ փոփոխությունների արդյունքում թույլտվության/պայմանագրի տրամադրման սկզբնական փուլում լսումների քանակը նվազեցվել է չորսից երկուսի, որոնցից մեկն անցկացվում է մինչև տեղեկատվական փաթեթը հանրությանը տրամադրելը: Կառավարության ներկայացուցիչները հաստատել են, որ փոփոխություններն ուղղված են արդյունավետության բարձրացմանը և կրկնություններից խուսափելուն, քանի որ լսումները սովորաբար մեկը մյուսին կրկնում էին՝ պահանջելով էական ջանքեր և հազվադեպ ապահովելով համապատասխան ազդեցությամբ: Քաղաքացիական հասարակության շահառուները նույնպես մտահոգություն են հայտնել թույլտվությունների տրամադրման որոշումների վերաբերյալ՝ նշելով, որ որոշումների կայացման գործընթացում բացակայել է հանրային ներգրավվածությունը: Շահառուները նշել են մի դեպքի մասին, երբ տարիներ շարունակ ոչ պատասխանատու գործունեություն իրականացնելուց և սնանկ ճանաչվելուց հետո «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ին թույլտվություն է շնորհվել: Թեև Միջազգային քարտուղարությունը նշում է, որ Հայաստանի ԱՃԹՆ-ն դեռ չի ընդլայնել իր՝ ԱՃԹՆ-ի իրականացման շրջանակը՝ ընդգրկելու ոչ

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

	մետաղական հանքարդյունաբերության ոլորտը՝ հաշվի առնելով այս ենթոլորտից կառավարությանն ուղղված վճարումների արժեքի ցածր էականությունը: Հայաստանի ԱՃԹՆ-ն չի դիտարկում ոչ մետաղական հանքարդյունաբերության լիցենզիաների տրամադրման և փոխանցումների լուսաբանման էական բացը Հայաստանի ԱՃԹՆ-ի 2.2 Պահանջի կատարման համատեքստում՝ հաշվի առնելով այս հատվածից վճարումների ցածր էականությունը և այն փաստը, որ ոչ մետաղական հանքարդյունաբերության լիցենզիաներն ու պայմանագրերը համապարփակ բացահայտված են (տես 2.4 Պահանջը):
Լիցենզիաների գրանցումը (Պահանջ 2.3) *Լիովին բավարարված*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 2.3 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ վավերացման դեպքում: Այս պահանջի նպատակն է ապահովել հանրության հասանելիությունը արդյունահանող հանքավայրերի և նախագծերի հետ կապված սեփականության իրավունքների վերաբերյալ համապարփակ տեղեկատվությանը: Համաձայն Քարտուղարության գնահատականի՝ սույն նպատակը կատարվել է՝ հաշվի առնելով թույլտվությունների մասին համապարփակ տեղեկատվությունը, որը հանրությանը հասանելի է ՏԿԵՆ ռեգիստրի միջոցով: Թույլտվությունների վերաբերյալ տեղեկատվությունը համակարգված կերպով բացահայտվում է ՏԿԵՆ-ի կայքում՝ բաց տվյալների ձևաչափով (xls)՝ ընդգրկելով թե՛ հետախուզման, թե՛ արդյունահանման թույլտվությունները: Թույլտվությունների ռեգիստրը, ըստ երևույթին, համապարփակ է և տրամադրում է համապատասխան ամբողջ տեղեկատվությունը, ինչպես պահանջվում է ԱՃԹՆ-ի Ստանդարտով՝ ժամանակագրական հերթականությամբ՝ սկսած 2012թ.-ից: . Շահառուների հետ խորհրդակցությունները հաստատել են, որ մինչև 2012 թվականը գործող թույլտվություններ չկան: Ռեգիստրի վերջին թարմացումները ներառում են ութ հետախուզման և 24 արդյունահանման թույլտվություններ: ԱՃԹՆ-ի 2020-2021 թ. հաշվետվության մեջ անդրադարձ է արվում լիցենզիաների ռեգիստրի ամբողջականությանը: Կայքում հրապարակված տեղեկատվությունը ամբողջությամբ ներառում է ԱՃԹՆ-ի պահանջները (արտոնագիր ունեցողի անվանումը, կոորդինատները, կիրառման ժամկետները, շնորհման ժամկետը և ժամկետի ավարտը, ընդգրկված արտադրատեսակները)՝ այդ թվում տվյալների հետևյալ կատեգորիաները՝ • Թույլտվություն ստացած իրավաբանական անձի անվանումը, • Թույլտվություն ստանալու համար ներկայացրած դիմումի ամսաթիվը, • Թույլտվության համարը, տրման ամսաթիվը և ժամկետը, • Հանքավայրի անվանումը (ոլորտը), • Ընդերքի տարածքի վերջնակետերի կոորդինատները, • Հատվածի ընդհանուր մակերեսը,

	• Հանքանյութի անվանումը, • Տրամադրվող օգտակար հանածոների պաշարների քանակը, հիմնական և ուղեկցող բաղադրիչները և դրանց քանակը, • Հանքավայրի տարեկան արտադրողականությունը, • Ընդերքօգտագործման պայմանագրի համարը և կնքման ամսաթիվը, • Ընդերքօգտագործման պայմանագրերում կատարված փոփոխությունների թիվը և կնքման ամսաթիվը, • Թույլտվությունների երկարաձգման համարները, ամսաթիվը և երկարաձգման ժամկետը: Կառավարության՝ խորհրդակցություններին մասնակցած շահառուները հաստատել են, որ թույլտվությունների ռեգիստրը պարունակում է տեղեկատվություն բոլոր կազմակերպություններին տրամադրվող թույլտվությունների մասին: Ռեգիստրում առկա տեղեկատվության վերաբերյալ որևէ մտահոգություն չի առաջացել: Կառավարության շահառուները հաստատել են, որ ռեգիստրը թարմացվում է երեք ամիսը մեկ, և ցանկացած փոփոխություն ամրագրվում է հաստատվելուն պես:
Նոր ուղղիչ գործողություններ և առաջարկություններ	
• 2.2 Պահանջի կատարումն ամրապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանը ավելի մանրամասն տեղեկատվություն տրամադրի հետախուզման և արդյունահանման թույլտվությունների հայտերի մերժման վերաբերյալ: Պետք է ավելի շատ ջանքեր գործադրվեն մետաղական հանքարդյունաբերության թույլտվություն ունեցողների նկատմամբ վերահսկողության կամ սեփականության իրավունքի փոփոխության կանոններն ու հետևանքները հստակեցնելու ուղղությամբ: Խրախուսվում է, որ Հայաստանն ընդլայնի ԱՃԹՆ-ի իր բացահայտումները՝ նկարագրելու ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում լիցենզավորման հետ կապված կանոններն ու գործելակերպը: • 2.3 Պահանջի կատարումն ամրապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանը դիտարկի շահառուների կարողությունների զարգացման հնարավորությունները՝ նպաստելով շահառուների՝ ռեգիստրում առկա տեղեկատվությունից ակտիվորեն օգտվելուն:	

Իրական սեփականությունը (Պահանջ 2.5)

Մոդուլի շրջանակում առաջընթացի դիտարկում

Վավերացման համատեքստում իրական սեփականության վերաբերյալ 2.5 Պահանջի համապատասխանությունը ամբողջությամբ գնահատվում է 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ համաձայն Խորհրդի կողմից 2019 թվականի հունիսին համաձայնեցված

շրջանակի: [1] Գնահատումը բաղկացած է տեխնիկական և արդյունավետության գնահատումներից:

Տեխնիկական գնահատում

Տեխնիկական գնահատումը ներառված է «Թափանցիկություն» հարցաթերթում՝ 2.5 Պահանջի ներդիրում: Համաձայն գնահատման արդյունքների՝ Հայաստանը իրական սեփականության մասին տեղեկատվության հավաքագրման և հրապարակայնության համար հիմնել է իրավական և կարգավորող շրջանակ: Ստեղծվել է առցանց ռեգիստր, որը հանրությանն ապահովում է տեղեկատվության անվճար մուտքով: Ներկայումս Հայաստանի բոլոր հանքարդյունաբերական ընկերությունները ռեգիստրում հայտարարագրում են իրական սեփականության մասին իրենց տեղեկատվությունը, ինչը համապարփակ կերպով բացահայտվում է նաև ԱՃԹՆ-ի 2020-2021 թ. հաշվետվությունում: Օրենսդրական փոփոխությունների 2021 թ. փաթեթը ներդաշնակեցրել է իրական սեփականության սահմանումը, որը համահունչ է ԱՃԹՆ-ի Ստանդարտին: Այս սահմանումը ներառում է սեփականության շեմերը և սահմանում է քաղաքական ազդեցություն ունեցող անձանց համար հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունները: Իրական սեփականության մասին տեղեկատվությունը համակարգված կերպով բացահայտվում է բոլոր այն ընկերությունների կողմից, որոնք առցանց ռեգիստրի և ԱՃԹՆ-ի հաշվետվությունների միջոցով դիմում են կամ հետաքրքրված են հանքարդյունաբերության ոլորտով, և ջանքեր են գործադրվել՝ պահպանելու Իրական շահառուների տվյալների միջազգային ստանդարտը՝ խթանելու կառուցվածքային և բաց տվյալները: Հայաստանը այն սակավաթիվ երկրներից մեկն է, որոնց ընդհանուր առմամբ սա հաջողվել է: Այս տեղեկատվությունը հասանելի է նաև «Open Ownership»-ի ռեգիստրում, որտեղ այն հնարավոր է՝ կապված լինի մյուս երկրների տվյալների հետ:

Իրական սեփականության մասին պահանջվող տեղեկատվությունը ներառում է ԱՃԹՆ-ի Ստանդարտով պահանջվող և խրախուսվող բոլոր կատեգորիաները: Հանքարդյունաբերական ընկերությունների իրավական սեփականության մասին տեղեկատվությունը հասանելի է նաև հանրությանը: Կառավարության քաղաքականությունը հստակորեն շարադրված է ինչպես իր իրավական պորտալի, այնպես էլ ԱՃԹՆ-ի հաշվետվությունների միջոցով: Պատժամիջոցներ են սահմանվել չկատարման համար: Հաշվետվության մեխանիզմները հասանելի են այնպես, որն ապահովում է հրապարակային ցուցակված ընկերությունների դուստր ձեռնարկություններին համապատասխանությունը, ներկայումս, այդուհանդերձ, Հայաստանում այդպիսի կազմակերպություններ չկան:

[1] https://eiti.org/document/assessing-implementation-of-eitis-beneficial-ownership-requirement.

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

Արդյունավետության գնահատում

Տեխնիկական գնահատման արդյունքները, փորձագիտական շրջանակային հաշվետվությունները և շահառուների հետ խորհրդակցությունները հաստատում են, որ Հայաստանը բավարար միջոցներ է ձեռնարկել՝ ապահովելու, որ հանքարդյունաբերության ոլորտի բոլոր ընկերությունների իրական սեփականատերերը բացահայտվեն, և որ այդ ընկերությունները կատարեն բացահայտման սույն պահանջը: Հանքարդյունաբերության ոլորտում իրական սեփականատերերի բացահայտման շեմը համապատասխանում է և համահունչ է միջազգային լավագույն փորձին:
Հանքարդյունաբերության ոլորտի տվյալների մեջ անհամապատասխանություններ հայտնաբերելիս Պետական ռեգիստրը և ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարությունը դրանք ուղղում են ՏԿԵՆ-ին: Սա ներկայումս կատարվում է մանուալ կերպով: Հետագա աշխատանք է սկսվում տվյալների ստուգման համակարգված մեխանիզմների բարելավման ուղղությամբ: Հայաստանը 2021 թ. միացել է “Opening Extractives” նախագծին և ստացել է տեխնիկական աջակցություն՝ առանձնացնելու ստուգման տարբերակներ, որոնք կարող են բարելավել տվյալների հավաստիությունը: Խորհրդակցություններին մասնակցած շահառուները նույնպես հաստատել են տվյալների ստուգումը և փոխգործունակությունը բարելավելու առաջիկա աշխատանքները:
Մասնավորապես, կառավարության շահառուները կարևորել են Համաշխարհային բանկի աջակցությամբ էլեկտրոնային կառավարման համակարգի առաջիկա բարելավումները, որոնք ներառում են պետական գերատեսչությունների միջև փոխադարձ հարթակ՝ կարմիր դրոշի գործիքակազմով, որով կբացահայտվեն տվյալների անհամապատասխանությունները: Նախատեսվում են նաև օրենսդրական փոփոխություններ՝ տվյալների օգտագործման գործակալությունների համար նոր հնարավորություններ ապահովելու համար:
Թեև ԲՇԽ-ի կողմից վերհանված բացերի և թույլ կողմերի վերաբերյալ փաստաթղթեր չկան, շահառուները հաստատել են, որ ԻՍ-ի աշխատանքային խմբի և համապատասխան շահառուների կատարած աշխատանքը բաղկացած է եղել օրենսդրության և համակարգերի մոնիթորինգի և գնահատման մի քանի փուլերից՝ բարելավելու 2020-ից մինչև 2023 թվականների միջև իրական սեփականության բացահայտումները:

«Open Ownership» և «Opening Extractives» ծրագրերի կողմից իրականացված 2020 և 2022 թվականների շրջանակային զեկույցներում բարձր են գնահատվել Հայաստանի ձեռքբերումները իրական շահառուների սեփականության հանրային բացահայտումների շրջանակի և համակարգի ստեղծման առումով, ինչպես նաև արվել են վերհանված մարտահրավերներին դիմակայելու առաջարկություններ: Հիմնական առաջարկությունները վերաբերում են ստուգման մեխանիզմների կատարելագործմանը՝ հուսալի տվյալներ ապահովելու համար: Ներկայումս ստուգման մեխանիզմները

հիմնականում կենտրոնանում են չներկայացնելու կամ ներկայացման ժամանակ թույլ տրված պատահական սխալների վրա:

Պահանջի կատարման առաջընթացը և ուղղիչ գործողությունները

ԱՃԹՆԻ-ի Պահանջը / նախկին ուղղիչ գործողությունը և գնահատումը	ԱՃԹՆ-ի պահանջի բավարարման հարցում առաջընթացի նկարագիրը
Իրական սեփականություն (Պահանջ 2.5) *Գերազանցված*	Համաձայն Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 2.5 Պահանջը գերազանցված է: Սույն պահանջի նպատակն է հանրությանը հնարավորություն տալ իմանալու, թե ում է, ի վերջո, պատկանում և ով է ղեկավարում երկրի արդյունահանող ոլորտում գործող ընկերությունները, հատկապես այն ընկերությունները, որոնք ԲՇԽ-ի կողմից ճանաչվել են որպես բարձր ռիսկային՝ նպաստելով արդյունահանող ռեսուրսների կառավարման ոչ պատշաճ գործելաոճի կանխարգելմանը: Ըստ Քարտուղարության գնահատականի՝ այս նպատակը գերազանցված է՝ հաշվի առնելով հանքարդյունաբերության ոլորտում իրական սեփականության մասին տեղեկատվության հանրային բացահայտումն արդյունավետ իրականացնելու և իրական սեփականատերերի՝ միջազգային չափանիշներին համապատասխան հանրային ռեգիստր ստեղծելու զգալի ջանքերը: Հայաստանում առկա է իրական սեփականության բացահայտմանը նպաստող իրավական դաշտ: Օրենքներն ու կանոնակարգերը համակարգված կերպով բացահայտվում են «ARLIS»-ի միջոցով, այդ թվում՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում և «Ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները: 2020 թվականից ի վեր հանքարդյունաբերության իրավունքի համար հայտ ներկայացնող կամ իրավունք ունեցող բոլոր ընկերությունները պարտավոր են Արդարադատության նախարարությանն առընթեր Իրավաբանական անձանց պետական ռեգիստր ներկայացնել իրենց իրական սեփականության մասին տեղեկատվությունը: Իրական սեփականատիրոջ սահմանումը փոփոխվել է 2021 թվականի հունիսին ընդունված մի շարք նոր օրենքների արդյունքում և փոփոխությունները նշված են Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020-2021թ. զեկույցում: Սահմանումը համապատասխանեցնելու նպատակով փոփոխության է ենթարկվել նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը: Այժմ գոյություն ունի մեկ միասնական սահմանում՝ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից պահանջվող բացահայտումներին

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

	համապատասխանելու համար: Այնուամենայնիվ, կառավարության շահառուները հաստատել են, որ դեռևս նկատվում են այլ իրավասու մարմինների, օրինակ՝ հարկային մարմնի սահմանման աննշան տարբերություններ, որոնք հետագայում կվերանայվեն: Սահմանումը համահունչ է ԱՃԹՆ-ի Ստանդարտին: «Opening Extractives» ծրագրի կողմից մշակված 2022 թ. շրջանակային զեկույցում նշվում է նաև, որ շեմերը սահմանվել են ռիսկահեն մոտեցմամբ՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան՝ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի համար 10% ցածր շեմ, իսկ տնտեսության մնացած հատվածների համար՝ 20%: Շահերի բախման հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց (քաղաքական ազդեցություն ունեցող անձանց) համար նվազագույն շեմ չի սահմանվել: Իրական սեփականության մասին տեղեկատվությունը համակարգված կերպով բացահայտվում է Արդարադատության նախարարությանն առընթեր Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի՝ իրական սեփականության էլեկտրոնային ռեգիստրում: 2021 թվականին ընդունված փոփոխությունների շարքը ներառել է նաև իրական սեփականության հայտարարագրի ձևի և լրացման և հաստատման կարգի փոփոխությունները՝ թիվ 416-Ն15 հրամանով: Հայտարարագրի ձևերը կարելի է ներբեռնել էլեկտրոնային ռեգիստրից: Մետաղարդյունահանող 26 ընկերությունների իրական սեփականության բոլոր հայտարարագրերի հղումները հասանելի են Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020-2021թ. զեկույցում: Ռեգիստրի վերաբերյալ տեղեկատվությունը այժմ բաց է բոլորի համար, ինչը փաստում է հասանելիության զգալի բարելավման մասին: Նախկինում իրական սեփականության մասին տեղեկատվությունը սահմանափակվում էր բացառապես այն ֆիզիկական անձանցով, ովքեր մուտք են գործում ռեգիստր հայկական IP հասցեից: Հայաստանն Իրական շահառուների տվյալների միջազգային ստանդարտը (ԻՇՏՍ) կիրառող սակավաթիվ երկրներից է, որոնք ապահովում են տվյալների կառուցվածքային ձևաչափ՝ իրական սեփականության մասին տեղեկատվության փոխանակումն ու օգտագործումը պարզեցնելու համար: 2021 թվականին ծրագրային ապահովման գործարկումից ի վեր ընդամենը 35 ընկերություն պետք է հայտարարագիր ներկայացներ: 2022 թվականին, սակայն, հայտարարագրերի թիվը զգալիորեն ավելացել է՝ 2023 թվականի օգոստոսի դրությամբ հասնելով գրեթե 50,000-ի, քանի որ բացահայտումներն այժմ ընդգրկում են տնտեսության բոլոր ոլորտները: Հայաստանը նաև իր ռեգիստրում ուղղակիորեն ինտեգրել է Իրական շահառուների տվյալների միջազգային ստանդարտի տվյալների վիզուալիզատորը՝ հնարավորություն տալով օգտվողներին տվյալների հիման վրա հեշտությամբ ստեղծել սեփականության գծապատկերներ և դյուրացնելով ընկերությունների կառուցվածքների վերաբերյալ ըմբռնումն

	ու վերլուծությունը: Տեխնիկական գործընկերոջ վերջին վերլուծությունը ցույց է տվել, որ էլեկտրոնային ռեգիստրում առկա մի քանի տվյալներ դեռևս ներառված չեն ԻՇՏՍ տվյալների մեջ:[2] Պահանջ 2.5.դ-ում թվարկված բոլոր տվյալների կետերը պահանջվում են որպես ԻՍ հաշվետվության հարցաթերթի մաս: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից պահանջվող քաղաքական ազդեցության և շահերի բախման բացահայտումները նույնպես պահանջում են տեղեկություններ սեփականության վերաբերյալ: Իրական սեփականության հայտարարագրերով պահանջվում է նաև հղումներ տրամադրել հանրային ցուցակված ընկերություններին ամբողջությամբ պատկանող դուստր ձեռնարկությունների մայր ընկերության ֆոնդային բորսայի փաստաթղթերին, սակայն շահառուների հետ խորհրդակցությունները հաստատել են, որ նման կազմակերպություններ Հայաստանում չկան: 2021 թվականին 2.5 Պահանջի վավերացման արդյունքում բացահայտվեց փակ բաժնետիրական ընկերությունների (ՓԲԸ) իրական սեփականատերերի հետ կապված խնդիր: Ազգային քարտուղարությունը հաստատել է, որ այս ընկերություններից պահանջվել և ստացվել է իրական սեփականության մասին տեղեկատվությունը, և որ ԱՃԹՆ-ի 2020-2021 թվականների զեկույցում ներառվել են այդ բացահայտումները: Շահառուների հետ խորհրդակցությունները ցույց են տվել, որ ԲՇԽ-ն այժմ քննարկում է, թե ինչպես այս տեղեկատվությունը համակարգված կերպով հասանելի դարձնել: Իսկ իրավական սեփականատերերի մասին տեղեկատվությունը բացահայտվում է իրական սեփականության հայտարարագրի միջոցով: Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքը պարունակում է նաև տեղեկատվություն հանքարդյունաբերական ընկերությունների իրավական սեփականատերերի մասին: Նախորդ վավերացումից ի վեր սա կարևոր քայլ է սույն Պահանջին համապատասխանելու ուղղությամբ: ԱՃԹՆ-ի 2020-2021 թ. զեկույցում նշվում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (2021 թ.) ներառում է պատժամիջոցներ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման կանոնները խախտելու համար, որոնք վերաբերում են հայտարարատու անձին և հայտարարագիրը ներկայացնելու համար պատասխանատու անձին: Դրանք ներառում են վարչական պատասխանատվություն՝ տեղեկատվությունը չներկայացնելու, սխալ կամ թերի ներկայացնելու և պատշաճ ուսումնասիրություն չկատարելու համար: Լրացուցիչ տույժեր են

[2] Այդ թվում՝ ընկերությունների պետական գրանցման համարը և գրանցման ամսաթիվը, իրական սեփականատերերի ծննդյան ամսաթվերը: Այս տվյալներն ավելացնելով ԻՇՏՍ-ի տվյալներին՝ հնարավոր կլինի օժանդակել պետական ռեգիստրի հետագա աշխատանքին՝ ստուգելու և վերլուծելու ներկայացված տվյալները:

	նախատեսվում արդյունահանող ճյուղերում, մասնավորապես՝ շահագործման թույլտվությունների կասեցում կամ դադարեցում, եթե ԻՍ տվյալները վերջնաժամկետից հետո 120 օրում չեն ներկայացվում: Համապատասխան մարմիններին հասանելի ստուգման մեխանիզմների՝ ստուգումներ իրականացնելու սկզբնական տեսակը կենտրոնանում էր ներկայացման հետ կապված ասպեկտների, և ոչ թե տվյալների կանխամտածված կեղծիքի վրա: Խորհրդակցություններին մասնակցած քաղաքացիական հասարակության շահառուները մտահոգություն են հայտնել գործող պատժամիջոցների վերաբերյալ՝ նշելով, որ տուգանքները չափազանց ցածր են: Զգալի ջանքեր են գործադրվել փոքր ընկերությունների միջև համապատասխանությունը խթանելու ուղղությամբ, որտեղ ամենամեծ մարտահրավերներն են, քանի որ հայեցակարգի և հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ տեղեկացվածության պակաս կա: ԲՇԽ-ի կողմից իրական սեփականության բացահայտումների համապարփակության և հավաստիության գնահատում չի իրականացվել: Այնուամենայնիվ, խորհրդակցությունները հաստատել են, որ բոլոր խմբակցությունները մանրակրկիտ ներգրավված են եղել բարեփոխումներին, որոնք հանգեցրել են բացահայտումների, ինչպես նաև ռեգիստրի կատարելագործմանը և դրա մեկնարկին: Շահառուները նշել են, որ վերջին երեք տարիներին բոլոր խմբակցությունների համատեղ ջանքերը հանգեցրել են օրենսդրության և համակարգերի բարելավման մի շարք փուլերի: ՀՀ օրենսդրության համաձայն գրանցումների ճշգրտության ստուգման համար պատասխանատվություն է կրում Պետական ռեգիստրը: Եղել են իրական սեփականության մասին տեղեկատվության օգտագործման հստակ օրինակներ, հիմնականում լրագրողների կողմից, որոշները Opening Extractives ծրագրի աջակցությամբ: Օրինակ, վերջերս հրապարակված հոդվածում օգտագործվել են իրական սեփականության և ԻՇՏՍ-ի տվյալների վիզուալիզացված տարբերակները՝ Լոռու մարզում ոսկու հետախուզման ուսումնասիրության համար՝ ներգրավված ընկերություններում հայտնաբերելով ռուսական և չեխական շահեր: Մեկ այլ հետաքննություն է անցկացվել այն բնակավայրերի վերաբերյալ, որոնք ներառված չեն եղել «ազդակիրների» ցանկում և, հետևաբար, արդյունահանող նախագծերից ռոյալթիներ չեն ստացել: Իրական սեփականության մասին տվյալները կիրառվել են՝ պարզելու, թե արդյոք սույն որոշումների վրա ազդեցություն ունեցող քաղաքական գործիչների մեջ կան անձնական շահեր ունեցողներ: Շահառուները հաստատել են, որ հետաքննությունները բարելավելու և տեղեկատվությանը նպաստելու տեսանկյունից ԱՃԹՆ-ի Ազգային քարտուղարությունը կարևոր դերակատարում ունի քաղաքացիական հասարակությունը կառավարության շահառուների հետ կապելու գործում:

	Համապատասխան օրենսդրության մի շարք փոփոխություններ հաստատվել են 2021 թվականին՝ հաշվետվության շրջանակը հանքարդյունաբերությունից ընդլայնելով դեպի մյուս բոլոր ոլորտներ: Շահառուների հետ խորհրդակցությունները հաստատել են, որ սա կարևոր ձեռքբերում էր ԱՃԹՆ-ի գործընթացի համար, քանի որ հանքարդյունաբերության ոլորտում նախաձեռնված բարեփոխումները հետզհետե հանգեցրել են ամբողջ տնտեսության բարեփոխումներին: Կառավարության, ընկերությունների և քաղաքացիական հասարակության շահառուների հետ խորհրդակցությունների ընթացքում հնչեցվել են միասնական տեսակետներ՝ հաստատելով, որ այս բարեփոխումը հանդիսանում է ԱՃԹՆ-ի իրականացման առանցքային ձեռքբերումը: Կառավարության ներկայացուցիչները նաև հաստատել են, որ զգալի ջանքեր են գործադրվել՝ աջակցելու մասնավոր հատվածի բացահայտումներին համապատասխանությանը՝ այդ թվում ազգային կարողությունների զարգացման արշավը: Ընկերությունների խմբակցությունը հաստատել է, որ իրական սեփականության բարեփոխման շուրջ զարգացումները թույլ են տվել հանքարդյունաբերության ոլորտում ավելի մեծ վստահություն վայելել: 2023 թվականի օգոստոսի դրությամբ Արդարադատության նախարարությունը հաստատել է, որ ստացել է 49,247 հայտարարագիր, որը կազմում է Հայաստանում գրանցված բոլոր ընկերությունների մոտավորապես 50%-ը՝ ներառյալ չգործող ընկերությունները: 2023-2026 թվականների Հակակոռուպցիոն նոր ծրագիրը ներառում է կարողությունների հետագա զարգացման միջոցառումներ՝ ամրապնդելու իրական սեփականության ռեգիստրը և ներդաշնակեցնելու օրենսդրությունը իրական սեփականության վերաբերյալ մեկ սահմանում ունենալու նպատակով, ինչպես նաև ստուգումը խթանելու աշխատանքներ, մասնավոր հատվածի (ՓՄՁ) համար դասընթացներ՝ պահանջներին համապատասխանելու համար:
Նոր ուղղիչ գործողություններ և առաջարկություններ	
• 2.5 Պահանջի իրականացումը խթանելուու համար խրախուսվում է, որ Հայաստանն ապահովի, որ կառավարությունը կամ ԲՇԽ-ն հրապարակայնորեն փաստաթղթավորված ջանքեր են գործադրում՝ շտկելու հրապարակայնորեն բացահայտված իրական սեփականության տվյալների համապարփակության և հավաստիության բացերն ու թույլ կողմերը, ինչպես նաև սույն վերլուծության հիման վրա ամրապնդելու հաշվետվությունների և բացահայտման համակարգերը: Խրախուսվում է նաև, որ Հայաստանն ապահովի տվյալների ստուգման մեխանիզմների առկայությունը, և որ պատժամիջոցները բավականաչափ խիստ են՝ խուսափելու իրականությանը չհամապատասխանող տեղեկատվությունից:	

Պետության մասնակցությունը (2.6, 4.2, 4.5, 6.2 Պահանջներ)

Մոդուլի շրջանակում առաջընթացի դիտարկում

Դիտարկվող ֆինանսական տարիներին հայաստանյան մետաղական հանքարդյունաբերության ոլորտում պետական մասնակցությունը շարունակում է կիրառելի չլինել:

Պահանջի կատարման առաջընթացը և ուղղիչ գործողությունները

ԱՃԹՆԻ-ի Պահանջը / նախկին ուղղիչ գործողությունը և գնահատումը	ԱՃԹՆ-ի պահանջի բավարարման հարցում առաջընթացի նկարագիրը
Պետության մասնակցությունը (Պահանջ 2.6) *Կիրառելի չէ*	Համաձայն Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 2.6 Պահանջը կիրառելի չէ: Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020-2021 թթ. զեկույցը հաստատում է, որ 2020 և 2021 թվականներին պետական մասնակցությամբ մետաղարդյունահանող ընկերություններ չեն եղել: Միևնույն ժամանակ նշվում է, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 25%-ը նվիրաբերվել է ՀՀ կառավարությանը: Հայաստանը 2021 թվականի սեպտեմբերին (Կառավարության որոշմամբ): ԱՃԹՆ-ի հաշվետվությունները և շահառուների հետ խորհրդակցությունները հաստատել են, որ նույնիսկ բաժնետոմսերի փոխանցումից հետո «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն չի համարվել պետական ձեռնարկություն (ՊՁ), քանի որ այն չի հանդիսացել պետության մեծամասնական սեփականություն: Միևնույն ժամանակ, ԱՃԹՆ-ի հաշվետվությունները և շահառուների հետ խորհրդակցությունները հաստատել են, որ պետությանը «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի 25%-ի բաժնետոմսերի փոխանցման (նվիրատվության) գործընթացի և գործարքի մանրամասները հանրային հետաքրքրություն են ներկայացնում: ԲՇԽ-ն կարող է տրամադրել ավելի մանրամասն տեղեկատվություն և դիտարկել ապագա հաշվետվությունների համար կիրառելի շեմը:
Պետության՝ բնաիրային տեսքով եկամուտների վաճառք (Պահանջ 4.2) *Կիրառելի չէ*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 4.2 Պահանջը կիրառելի չէ: Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020-2021 թթ. զեկույցը հաստատում է, որ 2020 և 2021 թվականներին պետության մեծամասնական սեփականություն հանդիսացող մետաղարդյունահանող ընկերություններ չեն եղել: Հետևաբար, 4.2 Պահանջը շարունակում է լինել ոչ կիրառելի:
ՊՁ-ի գործարքները (Պահանջ #4.5) *Կիրառելի չէ*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 4.5 Պահանջը կիրառելի չէ:

	Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020-2021 թթ. զեկույցը հաստատում է, որ 2020 և 2021 թվականներին պետության մեծամասնական սեփականություն հանդիսացող մետաղարդյունահանող ընկերություններ չեն եղել: Հետևաբար, 4.5 Պահանջը շարունակում է լինել ոչ կիրառելի:
ՊՁ-ի քվազի-ֆիսկալ ծախսերը (Պահանջ 6.2) *Կիրառելի չէ*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 6.2 Պահանջը կիրառելի չէ: Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020-2021 թթ. զեկույցը հաստատում է, որ 2020 և 2021 թվականներին պետության մեծամասնական սեփականություն հանդիսացող մետաղարդյունահանող ընկերություններ չեն եղել: Հետևաբար, 6.2 Պահանջը շարունակում է լինել ոչ կիրառելի:
Նոր ուղղիչ գործողություններ և առաջարկություններ	
• 2.6 Պահանջի կատարումը խթանելու համար խրախուսվում է, որ Հայաստանը տարեկան կտրվածքով դիտարկի, թե արդյոք արդյունահանող ոլորտում կան պետական ձեռնարկություններ, և արդյոք սույն ոլորտում պետական մասնակցությունը դիտարկվող ժամանակահատվածում էական եկամուտների է հանգեցնում: Էականության դեպքում ակնկալվում է, որ համապատասխան բացահայտումների մասին պետք է նշվի ԱՃԹՆ-ի հաշվետվություններում՝ համաձայն 2.6 Պահանջի: • 4.2-ի Պահանջի կատարումն ամրապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանը տարեկան կտրվածքով դիտարկի, թե արդյոք պետությունը դիտարկվող ժամանակահատվածում ստանում է որևէ բնաիրային տեսքով եկամուտ՝ ուղղակիորեն կամ ՊՁ-ների միջոցով: Էականության դեպքում ակնկալվում է, որ համապատասխան բացահայտումների մասին պետք է նշվի ԱՃԹՆ-ի հաշվետվություններում՝ համաձայն 4.2 պահանջի: • 4.5-ի Պահանջի կատարումը խթանելու համար խրախուսվում է, որ Հայաստանը տարեկան կտրվածքով դիտարկի, թե արդյոք դիտարկվող ժամանակահատվածում էական ՊՁ-ներից որևէ մեկը վճարումներ հավաքագրել է արդյունահանող ընկերություններից դիտարկվող ժամանակահատվածում, և արդյոք նյութական ՊՁ-ներից որևէ մեկը դիտարկվող ժամանակահատվածում վճարումներ է կատարել կառավարությանը կամ ստացել փոխանցումներ կառավարությունից: Էականության դեպքում ակնկալվում է, որ համապատասխան բացահայտումների մասին պետք է նշվի ԱՃԹՆ-ի հաշվետվություններում՝ համաձայն 4.5 պահանջի: • 6.2 Պահանջի կատարումն ամրապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանը տարեկան կտրվածքով դիտարկի, թե արդյոք դիտարկվող ժամանակահատվածում արդյունահանող ՊՁ-ներն անեւմ են քվազի ֆիսկալ ծախսեր: Էականության դեպքում ակնկալվում է, որ համապատասխան բացահայտումների մասին պետք է նշվի ԱՃԹՆ-ի հաշվետվություններում՝ համաձայն 6.2 պահանջի:	

Արդյունահանումը և արտահանումը (3.2, 3.3 Պահանջներ)

Մոդուլի շրջանակում առաջընթացի դիտարկում

Հայաստանում արդյունահանվող և արտահանվող հիմնական ապրանքները շարունակում են մնալ պղինձը, մոլիբդենը, ֆերո համաձուլվածքները, ցինկը և ոսկին: 2020-2021 թ. ԱՃԹՆ-ի զեկույցում ներկայացվում է 2020 և 2021 թվականներին շահագործվող հանքերի նկարագիրը՝ ներառելով արդյունահանման և արտահանման տվյալների մանրամասն բացահայտումը՝ ըստ արտադրատեսակների և ընկերությունների: Արդյունահանման և արտահանման տվյալները, ըստ երևույթին, փաստացի բացահայտվել են նախագծի միջոցով՝ հաշվի առնելով, որ մետաղարդյունահանող յուրաքանչյուր ընկերություն ունեցել է միայն մեկ արտոնագիր 2020 և 2021 թվականներին:
Բացի այդ, ԱՃԹՆ-ի հաշվետվությունը ներկայացնում է մետաղական հանքարդյունաբերական ապրանքների արդյունահանման և արտահանման հետ կապված վերջին զարգացումների և միտումների վերլուծությունը՝ ԱՃԹՆ-ի բացահայտումները համեմատելով պետական և միջազգային տվյալների բազաների միջոցով բացահայտված տվյալների հետ: Այնուամենայնիվ, թվում է, որ տեղեկատվությունը, մասնավորապես, արդյունահանման տվյալները, հավաքագրվում և բացահայտվում են՝ ըստ տարբեր դասակարգման համակարգերի և տարանջատման մակարդակների, ինչը կարող է հանգեցնել տվյալների համեմատության բարդությունների: Թանկարժեք մետաղների մասին տարանջատված տեղեկատվությունը շարունակում է դասակարգված լինել որպես պետական գաղտնիք, ուստի տարանջատված տվյալները հասանելի են միայն ընկերությունների և միջազգային տվյալների բազաների բացահայտումների միջոցով: Թվում է, թե տվյալների դասակարգման և բացահայտման կիրառելի մոտեցումները հստակեցնելու հնարավորություն կա՝ տվյալների համակարգված բացահայտումն ամրապնդելու նպատակով:

Պահանջի կատարման առաջընթացը և ուղղիչ գործողությունները

ԱՃԹՆԻ-ի Պահանջը / նախկին ուղղիչ գործողությունը և գնահատումը	ԱՃԹՆ-ի պահանջի բավարարման հարցում առաջընթացի նկարագիրը
Արդյունահանման մասին տվյալները (Պահանջ 3.2)	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 3.2 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ վավերացման ժամանակ: Այս պահանջի նպատակն է ապահովել արդյունահանվող արտադրատեսակ(ներ)ի արտադրության ծավալների և արժեքների

Լիովին բավարարված	հանրային ըմբռնումը՝ որպես արդյունահանող ոլորտում արդյունահանման հետ կապված խնդիրներին անդրադառնալու հիմք: Առկա փաստաթղթերը և շահառուների հետ խորհրդակցությունները ցույց են տալիս, որ այս նպատակը լիովին իրագործվել է՝ նշելով առկա տվյալների համակարգման և դասակարգման հետագա հստակեցման և համակարգված բացահայտումների ամրապնդման հնարավորությունները: Ինչպես հաղորդում են ընկերությունները, 2020-2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում մանրամասն ներկայացվում են մետաղական հանքարդյունաբերության ոլորտում 2020 և 2021 թվականներին արդյունահանման վերաբերյալ տվյալները: Զեկույցը համապարփակ տեղեկատվություն է տրամադրում պղնձի խտանյութի, մոլիբդենի և ֆերոմոլիբդենի խտանյութի, ցինկի խտանյութի և ոսկու արտադրության ծավալների և արժեքների մասին՝ ըստ ընկերության և արտադրության տարածաշրջանի: Արտադրության մասին տեղեկատվությունը հասանելի է նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի տվյալների պորտալում և 2020 և 2021 թվականների տվյալների ֆայլերում: Արդյունահանման տվյալները, ըստ երևույթին, փաստացի բացահայտվել են նախագծի միջոցով՝ հաշվի առնելով, որ արդյունահանող յուրաքանչյուր ընկերություն ունեցել է միայն մեկ արտոնագիր դիտարկվող ժամանակահատվածում և որ ԱՃԹՆ-ի հաշվետվություններում տրամադրվում են տվյալներ՝ բացահայտված ըստ ընկերությունների և արտադրատեսակների: Կիրառվող դասակարգման համակարգերի պատճառով տվյալները շարունակում են մնալ չտարանջատված ըստ հանքաքարերի և խտանյութերի: 2020-2021 թվականների Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում ընդգծվում է, որ թանկարժեք մետաղների մասին տարանջատված տեղեկատվությունը դասակարգվում է որպես պետական գաղտնիք, սակայն նշվում է, որ համապատասխան տվյալներ են հավաքագրվել և բացահայտվել ոսկու և արծաթի համաձուլվածքների (ձուլակտորների) և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութերի վերաբերյալ ընկերությունների հաշվետվությունների միջոցով, որոնք 2020 և 2021 թվականներին Հայաստանում արտադրված ոսկու միակ արտադրատեսակներն են եղել: 2020-2021 թվականների Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում և նույն ֆինանսական տարիների ամփոփ տվյալների ֆայլերում բացահայտված տեղեկատվության միջև նկատվում են որոշ տարբերություններ: Խորհրդակցված շահառուները նշել են, որ տարբերությունները հիմնականում կապված են չափման տարբեր միավորների (տոննա, թաց մետրիկ տոննա (թմտ), չոր մետրիկ տոննա (չմտ)) օգտագործման, ինչպես նաև դասակարգման տարբեր մոտեցումների հետ: Ամփոփ տվյալների ֆայլերում, ըստ երևույթին, բոլոր համապատասխան արտադրատեսակները ներկայացվում են չտարանջատված՝ մեկ ընդհանուր կատեգորիայի ներքո: Օրինակ՝ ոսկու և արծաթի համաձուլվածքը

	(ձուլակտոր) և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութը միասին՝ չտարանջատված ներկայացվում են «ոսկի» կատեգորիայի ներքո: Խորհրդակցված շահառուները պարզաբանել են, որ Հայաստանի ԱՃԹՆ-ի տվյալների պորտալը հավաքագրում է ավելի տարանջատված տեղեկատվություն՝ համաձայն Եվրասիական տնտեսական միության Միասնական մաքսային սակագների: Շահառուները որևէ մտահոգություն չեն հայտնել՝ կապված արդյունահանման տվյալների հավաստիության կամ համապարփակության հետ՝ այնուամենայնիվ, նշելով տեղեկատվության դասակարգման և ներկայացման հետագա բարելավման հնարավորությունների մասին:
Արտահանման մասին տվյալները (Պահանջ 3.3) *Լիովին բավարարված*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 3.3 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ վավերացման ժամանակ: Այս պահանջի նպատակն է ապահովել արդյունահանվող արտադրատեսակ(ներ)ի արտահանման ծավալների և արժեքների հանրային ըմբռնումը՝ որպես արդյունահանող ոլորտում արդյունահանման հետ կապված խնդիրներին անդրադառնալու հիմք: Առկա փաստաթղթերը և շահառուների հետ խորհրդակցությունները ցույց են տալիս, որ այս նպատակը լիովին իրագործվել է՝ նշելով առկա տվյալների համակարգման և դասակարգման հետագա հստակեցման և համակարգված բացահայտումների ամրապնդման հնարավորությունները: Ըստ ԱՃԹՆ-ի հաշվետվության՝ մետաղի արդյունահանման արտահանումը կազմել է երկրի ընդհանուր արտահանման զգալի մասնաբաժինը՝ 2021 թվականին կազմելով ՀՆԱ-ի գրեթե 27%-ը: 2020-2021 թվականների Հայաստանի ԱՃԹՆ-ի հաշվետվության մեջ մանրամասն նկարագրվում է մետաղների արդյունահանման ոլորտի արտահանումը 2020 և 2021 թվականների համար, ինչպես հաղորդում են ընկերությունները՝ նշելով, որ պղնձի խտանյութը շարունակում է մնալ մետաղի արդյունահանման ոլորտից արտահանվող հիմնական արտադրատեսակը: Արտահանման ծավալները և արժեքները տարանջատված են՝ ըստ ընկերության, ծագման տարածաշրջանի և արտահանման հասցեի: Արտահանման մասին տեղեկատվությունը հասանելի է նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի տվյալների պորտալում և 2020 և 2021 թվականների ամփոփ տվյալների ֆայլերում: Արդյունահանման տվյալները, ըստ երևույթին, փաստացի բացահայտվել են նախագծի միջոցով՝ հաշվի առնելով, որ արդյունահանող յուրաքանչյուր ընկերություն ունեցել է միայն մեկ արտոնագիր դիտարկվող ժամանակահատվածում և որ ԱՃԹՆ-ի հաշվետվություններում տրամադրվում են տվյալներ՝ բացահայտված ըստ ընկերությունների և արտադրատեսակների: 2020-2021 թվականների Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում ընդգծվում է, որ թանկարժեք մետաղների մասին տարանջատված տեղեկատվությունը դասակարգվում է որպես պետական գաղտնիք, սակայն նշվում է, որ

	համապատասխան տվյալներ են հավաքագրվել և բացահայտվել ոսկու և արծաթի համաձուլվածքների (ձուլակտորների) և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութերի վերաբերյալ ընկերությունների հաշվետվությունների միջոցով, որոնք 2020 և 2021 թվականներին Հայաստանում արտադրված ոսկու միակ արտադրատեսակներն են եղել: 2020-2021 թվականների Հայաստանի EITI զեկույցը ընդգծում է, որ թանկարժեք մետաղների մասին տարանջատված տեղեկատվությունը դասակարգվում է որպես պետական գաղտնիք, սակայն նշվում է, որ համապատասխան տվյալներ են հավաքվել և բացահայտվել ոսկու և արծաթի համաձուլվածքների (ձուլակտորների) և ոսկի պարունակող թանկարժեք մետաղների խտանյութերի վերաբերյալ ընկերությունների հաշվետվությունների միջոցով: 2020 և 2021 թվականներին եղել են Հայաստանից արտահանված ոսկու արտադրանքի միակ տեսակները: 2020-2021 թվականների Հայաստանի ԱՃԹՆ-ի հաշվետվությունը ներկայացնում է ԱՃԹՆ-ի հաշվետվության և ՄԱԿ-ի «Comtrade» տվյալների պորտալի միջոցով բացահայտված արտահանման տվյալների համեմատությունը՝ ներառյալ տարբերությունների և անհամապատասխանությունների պատճառները: Վիճակագրության կոմիտեն, ըստ երևույթին, հրապարակում է արտահանման տվյալները (այստեղ), սակայն ԱՃԹՆ-ի հաշվետվության մեջ կարծես թե չեն համեմատվում ընկերությունների և կառավարության արտահանման տվյալները: Խորհրդակցություններին մասնակցած շահառուները արտահանման տվյալների հավաստիության կամ համապարփակության հետ կապված որևէ մտահոգություն չեն հայտնել: 2020-2021 թվականների Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցը ներառում է տեղեկատվություն 2020 և 2021 թվականներին մետաղական հանքաքարերի և խտանյութերի ներքին վաճառքի վերաբերյալ: Զեկույցում նաև մեկնաբանվում է, որ արհեստագործական և փոքրածավալ հանքարդյունաբերական գործունեություն չի ծավալվում/կիրառելի չէ Հայաստանի մետաղական արդյունաբերության ոլորտում: Առկա փաստաթղթերում, ըստ երևույթին, սահմանափակ տեղեկատվություն է տրամադրվում 3.3 Պահանջի խրախուսելի ասպեկտների վերաբերյալ, այն է՝ ինչպես են հաշվարկվում արտահանման տվյալները, մասնավորապես՝ արտահանման արժեքները, և արդյոք գնահատումները համապատասխանում են միջազգային տվյալների ստանդարտներին և արդյունահանվող ապրանքների արտահանման տվյալների հաշվարկման մեթոդաբանությանը:
Նոր ուղղիչ գործողություններ և առաջարկություններ	

- 3.2 Պահանջի կատարումն ամրապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանը տեղեկատվություն տրամադրի այն մասին, թե ինչպես են հաշվարկվում արդյունահանման տվյալները, մասնավորապես արդյունահանման արժեքները, և արդյոք գնահատումները համապատասխանում են միջազգային տվյալների ստանդարտներին և արդյունահանվող ապրանքների արտադրության տվյալների հաշվարկման մեթոդաբանությանը: Ավելին, ԲՇԽ-ն կարող է քննարկել արդյունահանման տվյալների համար կիրառելի դասակարգման համակարգերը՝ ամրապնդելու տարբեր աղբյուրներում տվյալների ներկայացման և համեմատելիության հնարավորությունները: Եվ ի վերջո, խրախուսվում է, որ ԲՇԽ-ն շարունակի գործադրել իր ջանքերը՝ ուղղված արդյունահանման տվյալների համակարգված բացահայտմանը կառավարության և ընկերությունների պորտալների միջոցով:
- 3.3 Պահանջի կատարումն ամրապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանը տեղեկատվություն տրամադրի այն մասին, թե ինչպես են հաշվարկվում արտահանման տվյալները, մասնավորապես արտահանման արժեքները, և արդյոք գնահատումները համապատասխանում են միջազգային տվյալների ստանդարտներին և արդյունահանվող ապրանքների արտահանման տվյալների հաշվարկման մեթոդաբանությանը: Խրախուսվում է, որ ԲՇԽ-ն շարունակի գործադրել իր ջանքերը՝ ուղղված արտահանման տվյալների համակարգված բացահայտմանը կառավարության և ընկերությունների պորտալների միջոցով՝ ներառյալ ԱՃԹՆ-ի հաշվետվությունների միջոցով հավաքագրված տվյալների հետ համեմատությունը:

Եկամուտների հավաքագրումը (4.1, 4.3, 4.4, 4.7, 4.8, 4.9 Պահանջներ)

Մոդուլի շրջանակում առաջընթացի դիտարկում

Նախորդ վավերացումից ի վեր, նկատվել է էական համարվող եկամուտների հոսքերի կրճատում, ինչը ԲՇԽ-ն վերագրում է բաց թողնված եկամուտների հոսքերի տվյալների բարելավված հուսալիությանը և ԱՃԹՆ-ի հաշվետվությունների պատրաստման գործում «ֆինանսական արդյունավետության» կարևորությանը: Դիտարկվող ժամանակահատվածում բոլոր էական պետական եկամուտների հոսքերը գանձվել են ընկերության մակարդակով և որպես այդպիսին հրապարակվել են առցանց, ինչը նշանակում է, որ էական պետական եկամուտներից և ոչ մեկը չի պահանջվում հրապարակել ծրագրի մակարդակով: Թեև համադրված ֆինանսական տվյալների համապարփակության և արժանահավատության վերաբերյալ ԱԱ-ի կողմից գնահատման որևէ փաստաթուղթ չկա, բոլոր խմբակցությունների շահառուները համաձայնել են, որ ընկերությունների և կառավարության տվյալները համապարփակ են և հավաստի: Ընկերությունների վճարումները և պետական եկամուտները ժամանակին բացահայտելուց զատ հուսադրող է, որ Հայաստանը նախաձեռնողական մոտեցում է ցուցաբերում սույն

տվյալների, ինչպես նաև որոշ ոչ ֆինանսական տվյալների համակարգված բացահայտումը բարելավելու համար:

Պահանջի կատարման առաջընթացը և ուղղիչ գործողությունները

ԱՃԹՆԻ-ի Պահանջը / նախկին ուղղիչ գործողությունը և գնահատումը	ԱՃԹՆ-ի պահանջի բավարարման հարցում առաջընթացի նկարագիրը
Հարկերի և եկամուտների համակողմանի բացահայտումը (Պահանջ 4.1) *Լիովին բավարարված*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 4.1 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ վավերացման դեպքում: Այս պահանջի նպատակն է ապահովել ընկերությունների վճարումների, ինչպես նաև նավթից, գազից և հանքարդյունաբերությունից ստացված պետական եկամուտների համապարփակ բացահայտումը՝ որպես հանրության՝ պետական եկամուտների մեջ արդյունահանող ոլորտի ունեցած ներդրման խորը ըմբռնման հիմք: Առկա փաստաթղթերում նշվում է, որ մետաղների արդյունահանումը երկրում միակ էական արդյունահանման գործունեությունն է և ամբողջությամբ թվարկվում են ոլորտից ստացված պետական եկամուտներն ու ընկերությունների վճարումները, ինչը ծառայում է սույն նպատակին: Խորհրդակցությունների ընթացքում Ազգային քարտուղարության աշխատակիցները 4.1 Պահանջի նպատակը համարել են կատարված՝ հաշվի առնելով, որ ընկերությունների բոլոր վճարումները հավաքագրվում են պետական եկամուտների համակարգերի միջոցով և հրապարակվում առցանց: Դիտարկվող տարիների համար ընկերությունների վճարումները ամբողջությամբ ներկայացված են, նույնիսկ այն ընկերությունների համար, որոնց էականության շեմը ցածր է, իսկ ընկերությունների վճարումները և պետական եկամուտները ամբողջությամբ տարանջատված են, նույնիսկ այն եկամուտների հոսքերի դեպքում, որոնք էական չեն համարվում: Դիտարկվող ժամանակահատվածում եկամուտների հոսքերի և ընկերությունների համար կիրառվել է ԱՃԹՆ-ի նախորդ զեկույցներում օգտագործված էականության նույն շեմը՝ 150 մլն դրամ (0,3 մլն ԱՄՆ դոլար): Դիտարկվել են 4.1.գ դրույթում թվարկված բոլոր եկամտային հոսքերը՝ չնայած 2020-2021 թվականների Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցի վերանայման ժամանակ պարզ չէր, թե ինչու եկամտային որոշակի հոսքեր (շահութահարկ, պետական արտահանման տուրքեր և

	եկամտահարկ) չեն ներառվել համադրման մեջ՝ հաշվի առնելով, որ համադրման ծածկույթը կազմել է 47,88%: Խորհրդակցություններին մասնակցած կառավարության շահառուները տրամադրեցին եկամտային այս հոսքերը չընդգրկելու բացակայությունը՝ մեջբերելով ԲՇԽ-ի նիստի արձանագրությունը, որի շրջանակում համաձայնություն է ձեռք բերվել՝ ներառելու ավելի ռիսկային համարվող եկամուտների հոսքերը (ընկերությունների և կառավարության թվերի տարբերությունները՝ 4%-ից ավելի, սակայն ոչ պակաս, քան 1 մլն դրամ): Հաշվի առնելով, որ ընկերությունների և պետական կառույցների կողմից ներկայացված շահութահարկի, պետական արտահանման տուրքերի և եկամտահարկի տարբերությունները ցածր են եղել նշված շեմից՝ ԲՇԽ-ն և ԱԱ-ն համաձայնել են, որ եկամտային սույն հոսքերը չպետք է ներառվեն համադրման շրջանակում: 2020 թ. ԱՃԹՆ-ի զեկույցում այս եկամուտների հոսքերի հետ կապված ավելի ցածր ռիսկը վերագրվում է պետական գերատեսչությունների և ընկերությունների ամրապնդված հաշվետվական կարողություններին, որոնց շնորհիվ նվազեցվել են վերջին տարիներին կառավարության և ընկերությունների կողմից այս տվյալների բացահայտման անհամապատասխանությունները: Մետաղական հանքարդյունաբերության բոլոր ընկերություններից, նույնիսկ այն ընկերություններից, որոնք էական վճարումներ չեն կատարում, պահանջվում է զեկուցել ԱՃԹՆ-ին և ներկայացնել հաշվետվությունների հարցաթերթերը՝ ըստ եկամտի հոսքի, ինչը հեշտացրել է կառավարությանը էական վճարումներ կատարող ընկերությունների՝ ԲՇԽ-ի կողմից վերհանումը: Այս տեղեկատվությունը հասանելի է նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի էլեկտրոնային հաշվետվությունների պորտալում: Հաշվետվական շրջանակում ներառվելու համար դիտարկվել են նաև արդյունահանող այլ ոլորտներ, օրինակ՝ ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտը (Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018 թվականի շրջանակային ուսումնասիրության մեջ) և ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական օգտակար հանածոների վերամշակման ոլորտները (2021 թ. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակային ուսումնասիրության մեջ): Ինչ վերաբերում է ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտին, 2018 թ.-ի շրջանակային ուսումնասիրությամբ եզրակացվեց, որ չնայած հանքարդյունաբերության լայնածավալ գործողություններին (ավելի քան 400 թույլտվություն)՝ դրանց մեծ մասը վերաբերում էր

	փոքրամասշտաբ քարհանքի շահագործմանը, ինչը ԱՃԹՆ-ի հաշվետվություններում ներառելու համար նպատակահարմար չէր: Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանումը և մետաղական օգտակար հանածոների վերամշակումը էականորեն չեն նպաստում կառավարության եկամուտներին, և 2021 թվականի շրջանակային ուսումնասիրության մեջ նշվում է, որ պայմանագրերը և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումներն արդեն հասանելի են եղել ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման ոլորտում: 2021 թվականի շրջանակային ուսումնասիրության մեջ նաև նշվում է, որ մետաղական օգտակար հանածոների վերամշակման ոլորտում գործող որոշ ընկերություններ նույնպես ունեցել են հանքարդյունաբերության թույլտվություններ, և որ այդ ընկերությունները ներառվել են ԱՃԹՆ-ի հաշվետվության շրջանակում, ինչը վեր է հանել ամբողջ ոլորտը հաշվետվության շրջանակում ներառելու անհրաժեշտությունը: Նույն կերպ, էական եկամուտներ ստացող պետական սուբյեկտները բացահայտվել են և ամբողջությամբ զեկուցել իրենց բոլոր մուտքերի մասին՝ համաձայն էականության սահմանման: Կառավարությունը լիովին ներկայացրել է բոլոր՝ այդ թում և էականության շեմից ցածր եկամուտները, և այս եկամուտները նույնպես բաշխվել են՝ ըստ եկամտային հոսքերի: Խորհրդակցությունների ընթացքում Անկախ ադմինիստրատորը հաստատել է, որ կառավարությանը էական վճարումներ կատարող ոչ մի ընկերություն դուրս չի մնացել բացահայտման գործընթացից: Հաշվի առնելով, որ Հայաստանում արդյունահանող բոլոր ընկերությունները զեկուցել են կառավարությանը իրենց վճարումների մասին՝ պարզ է դառնում, որ ԱՃԹՆ-ի բացահայտումները համապարփակ են, անհասկանալի է, սակայն, թե ԱԱ-ի՝ այս առնչությամբ հաշվետվությունը որն է: Ազգային քարտուղարության՝ խորհրդակցություններին մասնակցած աշխատակիցները նշել են, որ ԱԱ-ը չի կարողացել նման հաշվետվություն տրամադրել, սակայն դրա բացակայությունը չեն համարել տվյալների համապարփակության հետ կապված խնդիր: Թեև 4.1 Պահանջով ընդամենը խրախուսվում է, սակայն երեք էական արդյունահանող ընկերություններ (Լիճքվազ ՓԲԸ, Ախթալայի արդյունահանման և վերամշակման ձեռնարկություն ՓԲԸ և Մեղրաձոր Գոլդ ՍՊԸ) չեն բացահայտել իրենց՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները, ինչը թույլ չի տալիս 4.1 Պահանջը համարվել գերազանցված: Խորհրդակցությունների ժամանակ ԲՇԽ-ի ընկերությունների խմբակցությունը նշել է, որ «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ-ն գտնվում է

	աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գործընթացում: Կառավարության շահառուները նշել են, որ վարչական երեք գործեր կան հարուցված այն ընկերությունների դեմ, որոնք չեն ներկայացրել իրենց՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները, սակայն չկան իրավական պատժամիջոցներ այն ընկերությունների նկատմամբ, որոնք չեն ներկայացնում սույն հաշվետվությունները, ինչը բավականին դժվարացնում է 4.1 Պահանջի այս խրախուսվող կողմին լիարժեք համապատասխանության ապահովումը:
Ենթակառուցվածքների դրույթները և ապրանքափոխանակության կարգավորումները (Պահանջ 4.3) *Կիրառելի չէ*	Համաձայն Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 4.3 Պահանջը կիրառելի չէ, ինչը համապատասխանում է ԲՇԽ-ի՝ 2022 թվականի ապրիլի 27-ի նիստի արձանագրության արդյունքներին: 2020-2021 թվականների Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցը և «Թափանցիկության» հարցաթերթը հաստատում են, որ գոյություն չունեն այնպիսի կանոնակարգեր, համաձայնագրեր կամ համաձայնագրերի փաթեթներ, որոնք նախատեսում են ապրանքների և ծառայությունների ամբողջությամբ կամ մասնակի մատուցում՝ հետախուզման կամ արդյունահանման արտոնությունների կամ այդպիսի ապրանքների ֆիզիկական մատակարարման դիմաց:
Փոխադրումներից ստացվող եկամուտները (Պահանջ 4.4) *Կիրառելի չէ*	Համաձայն Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 4.3 Պահանջը կիրառելի չէ, ինչը համապատասխանում է ԲՇԽ-ի՝ 2022 թվականի ապրիլի 27-ի նիստի արձանագրության արդյունքներին: 2020-2021 թվականների Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցը և Թափանցիկության հարցաթերթը հաստատում են, որ հանքանյութերի փոխադրումից պետություն կամ ՊՁ-ներ ստացվող եկամուտներ չկան: Սա արտացոլում է նախկին գնահատականը, երբ սույն պահանջը նույնպես համարվում էր ոչ կիրառելի: Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020-2021 թվականների զեկույցում Անկախ ադմինիստրատորը նշում է, որ փոխադրումներից ստացվող եկամուտները կարելի է ավելի մանրամասն ուսումնասիրել՝ որոշ շահառուների կողմից ավելի մեծ տեղեկատվության պահանջը բավարարելու, ինչպես նաև առևտրային գաղտնիության պատճառով փոխադրումներից ստացվող եկամուտների տվյալների բացահայտման հնարավոր սահմանափակումներն ուսումնասիրելու համար:
Ապաագրեգացման աստիճանը (Պահանջ 4.7) *Լիովին բավարարված*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 4.7 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ վավերացման դեպքում: Ընկերությունների վճարումների և հանքարդյունաբերությունից ստացված պետական եկամուտների հանրային բացահայտումների տարանջատման ապահովման նպատակն

ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարություն

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

	իրականացվել է՝ հաշվի առնելով, որ բոլոր էական եկամուտների հոսքերը, բացի բնապահպանական որոշ վճարներից, գանձվում են ընկերությունների մակարդակով, և կառավարությունը կարող է վերահսկել իր եկամուտների մուտքերը, ինչպես սահմանված է իրավական և հարկաբյուջետային շրջանակով: Ֆինանսական բոլոր տվյալները տարանջատված են՝ ըստ ընկերությունների, պետական սուբյեկտի և եկամտային հոսքի: ԱՃԹՆ-ի հաշվետվության մեջ նշվում է, որ ռոյալթիների տվյալները հաշվարկվում են մատակարարված խտանյութի իրացման շրջանառության և ոչ թե համաձայնության կամ հատուկ թույլտվության աստիճանի հիման վրա, որը ցույց է տալիս, որ ռոյալթիների տվյալները, ինչպես նաև մյուս բոլոր էական եկամտային հոսքերը, բացի բնապահպանական որոշակի վճարներից, գանձվում են ընկերության մակարդակով: Անկախ ադմինիստրատորի, Ազգային քարտուղարության աշխատակիցների և արդյունահանող ընկերությունների հետ խորհրդակցությունները հաստատել են Միջազգային քարտուղարության ըմբռնումն այն մասին, որ ռոյալթիների տվյալները, ինչպես նաև մյուս բոլոր էական եկամտային հոսքերը, զեկուցվում են ընկերությունների մակարդակով: ԲՇԽ-ն հանգել է այս եզրակացությանը՝ հաշվի առնելով ծրագրի սահմանումը, որը ներկայացված է Ուղեցույցի 29-րդ նշման մեջ, ինչն ամփոփում է Եվրոպական Միության Հաշվապահական Հրահանգը և Կանադայի արդյունահանող ոլորտի թափանցիկության միջոցառումների մասին ակտի սահմանումները:
Տվյալների արդիականությունը (Պահանջ 4.8) *Լիովին բավարարված*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 4.8 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ վավերացման դեպքում: Այս պահանջի նպատակն է ապահովել, որ ընկերությունների վճարումների և հանքարդյունաբերությունից ստացված պետական եկամուտների հրապարակային բացահայտումներն արվում են ճիշտ ժամանակին, որպեսզի համապատասխանաբար ազդեն հանրային քննարկումների և քաղաքականության մշակման վրա: Քարտուղարության կարծիքով՝ այս նպատակն իրականացվել է՝ հաշվի առնելով, որ 2020-2021 թվականների Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցը ներկայացվել և հրապարակվել է վերջին ավարտված հաշվետու ժամանակաշրջանից հետո մեկ տարվա ընթացքում: Հետագա աշխատանքներ են տարվում Ազգային աուդիտի գրասենյակի գործընթացները բարելավելու և Արդարադատության նախարարության՝ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում իրական սեփականության մասին

	տեղեկատվությունը համակարգված կերպով հրապարակելու ուղղությամբ:
Տվյալների որակը և ապահովումը (Պահանջ 4.9) *Գրեթե բավարարված*	Համաձայն Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 4.9 Պահանջը գրեթե բավարարված է, ինչը նախորդ վավերացումից ի վեր հետընթացի արձանագրում է: Վերլուծված փաստաթղթերը ցույց են տալիս, որ ընկերությունների վճարումների և հանքարդյունաբերությունից ստացված պետական եկամուտների բացահայտումների հավաստիությունն ապահովելու նպատակն իրագործվել է՝ հաշվի առնելով, որ տվյալների որակի և ապահովման ընթացակարգերը համաձայնեցվել են ԲՇԽ-ի կողմից և լիովին իրականացվել: Բացահայտված վճարումները և եկամուտները ենթակա են արժանահավատ, անկախ աուդիտի՝ կիրառելով աուդիտի միջազգային ստանդարտները, և 2020-2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի հաշվետվության մեջ ներկայացվում է, թե հրապարակման պահին որ ընկերություններն են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններ ներկայացրել: Այնուամենայնիվ, ԱՃԹՆ-ի հաշվետվության մեջ բացահայտված ֆինանսական տվյալների համապարփակության և հավաստիության վերաբերյալ կոնկրետ տողի/հայտարարության բացակայությունը պայմանավորում է 4.9 պահանջի՝ «գրեթե բավարարված» գնահատականը: Ազգային քարտուղարության՝ խորհրդակցություններին մասնակցած աշխատակիցների կարծիքով այն, որ երեք էական արդյունահանող ընկերություն չի ներկայացրել իր՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները, ինչը հանդիսանում է 4.9 Պահանջի խրախուսվող կետ, չի ազդել համադրման համար ներկայացված տվյալների հավաստիության կամ որակի վրա: 2020-2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում հավաստի տվյալների ապահովման մեթոդաբանությունը հստակ է, և ընդունված ընթացակարգերից շեղումների վերաբերյալ որևէ ապացույց չկա: Ընթացակարգերը համաձայնեցվել են Աշխատակարգով և քննարկվել ԲՇԽ-ի նիստի ժամանակ: ԲՇԽ-ի այս քննարկումների հանդիպման արձանագրությունը ներկայացված է Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում: 2020-2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի հաշվետվությունը պատրաստվել է Էռնստ և Յանգ ՍՊԸ-ի կողմից՝ հիմնվելով ԲՇԽ-ի կողմից հաստատված Անկախ ադմինիստրատորի (ԱԱ) աշխատակարգի (ԱԿ) վրա, և ընդհանուր առմամբ, համապատասխանում է ԱՃԹՆ-ի խորհրդի կողմից հաստատված ստանդարտ ԱԿ-ին և ԱԱ-ին: Առկա փաստաթղթերը վկայում են, որ բոլոր ընկերությունները և պետական կառույցները

ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարություն

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

	ներկայացրել են պահանջվող տվյալները: Ազգային քարտուղարության՝ խորհրդակցություններին մասնակցած աշխատակիցները հաստատել են, որ բոլոր կազմակերպությունները պահպանել են տվյալների որակի և ապահովման մեխանիզմները, որոնք ներառում են բարձրաստիճան պաշտոնյաների և գլխավոր հաշվապահների ստորագրությունները՝ համապատասխանաբար կառավարության և ընկերության ներկայացման դեպքում: ԱՃԹՆ-ի հաշվետվության մեջ բացատրվում է, որ որակի և տվյալների ապահովումը բխում է տվյալներ ներկայացնող կառույցներից, սակայն համադրված ֆինանսական տվյալների համապարփակության և հավաստիության վերաբերյալ ԱԱ-ի կողմից չի ներկայացվել որևէ հաշվետվություն: Այնուամենայնիվ, զեկույցում նշվում է, որ 2020 և 2021 թվականներին պետական գերատեսչությունների և ընկերությունների կողմից ներկայացված տվյալների միջև արձանագրվել է համապատասխանաբար 1,79% և 0,54% շեղում: 2020-2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում ներառված են հստակ հղումներ և ոչ ֆինանսական (համատեքստային) տեղեկատվության հստակ աղբյուրները: Նշվում է, որ ԲՇԽ-ի նիստերում ընթացել են գաղտնի տեղեկատվության պահպանման վերաբերյալ քննարկումներ, և Անկախ ադմինիստրատորի աշխատանքն իրականացվել է Միջազգային առնչվող ծառայությունների ստանդարտի («ISRS 4400») հիման վրա, որը ներառում է տեղեկատվության գաղտնիությունը մինչև համադրումը և հաշվետվության հրապարակումը պահպանելու համապատասխան դրույթներ: Վավերացման հաշվետվության աշխատանքային տարբերակի վերաբերյալ ԲՇԽ-ի մեկնաբանությունները պարզաբանում են, թե որ կազմակերպությունները/ձեռանարկություններն են ենթակա պարտադիր աուդիտի և նշվում է, որ բոլոր կազմակերպությունները/ձեռանարկություններն, բացառությամբ փոքրերի, պարտավոր են հրապարակել տարեկան ֆինանսական հաշվետվություններ: Այս տեղեկատվությունը, ներառյալ՝ գործող կանոնակարգերին չհետևելու դեպքում կիրառելի տույժերը, սահմանված են «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքով և «Վարչական իրավախախտումների մասին» օրենսգրքով: Տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակվում են կա՛մ հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում, կա՛մ Հայաստանում գրանցված լրատվամիջոցի պաշտոնական կայքում: Քարտուղարությունը ողջունում է այս մեկնաբանությունները, որոնցում շեշտադրվում են աուդիտի և

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

	ֆինանսական հաշվետվությունների կանոնները: Թեև կիրառելի օրենսդրությունը և ընթացակարգերը լայնորեն անդրադառնում են տվյալների որակի և հավաստիության նկատառումներին, Քարտուղարությունը գտնում է, որ 4.9 պահանջի գնահատականը մնում է գրեթե բավարարված ԱՃԹՆ հաշվետվություններում բացահայտված ֆինանսական տվյալների համապարփակության և հավաստիության վերաբերյալ ԱԱ-ի կամ ԲՇԽ-ի կողմից հստակ տողի/հայտարարության բացակայության պատճառով:
Նոր ուղղիչ գործողություններ և առաջարկություններ	
• 4.1 Պահանջի կատարումն արմապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանն ապահովի, որ կառավարությանը էական վճարումներ կատարող բոլոր ընկերությունները հրապարակայնորեն բացահայտեն աուդիտի ենթարկված իրենց ֆինանսական հաշվետվությունները կամ ֆինանսական գլխավոր տարրերը (այսինքն՝ հաշվեկշիռները, շահույթի/վնասի մասին հաշվետվությունը, կանխիկ դրամական միջոցների հոսքերը), եթե ֆինանսական հաշվետվություններ առկա չեն: • 4.7 Պահանջի կատարումն արմապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանը վերանայի՝ արդյոք եկամտային բոլոր հոսքերը գանձվում են ընկերության մակարդակով, թե նոր էական եկամտային հոսքերը գանձվում են նախագծի մակարդակով ինչպես հետախուզման, այնպես էլ արդյունահանման լիցենզիաների համար: • 4.8 Պահանջի կատարումն արմապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանը շարունակի իր ջանքերը՝ Ազգային աուդիտի գրասենյակի գործընթացները բարելավելու, ինչպես նաև իրական սեփականության մասին տեղեկատվությունը Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում համակարգված կերպով բացահայտելու ուղղությամբ: • Համաձայն 4.9 Պահանջի, Հայաստանից պահանջվում է տրամադրել հաշվետվություն, որը կհաստատի այն փաստը, որ տվյալների հավաքագրման և համադրման գործընթացում չեն հայտնաբերվել այնպիսի տարրեր, որոնք կվիճարկեն համադրված ֆինանսական տվյալների համապարփակությունն ու հավաստիությունը:	

Եկամուտների կառավարում (5.1, 5.3 Պահանջներ)

Մոդուլի շրջանակում առաջընթացի դիտարկում

Ֆինանսների նախարարությունը համակարգված կերպով հրապարակում է բյուջեների և ծախսերի մասին տեղեկատվությունը, որը նաև հասանելի է Հայաստանի էլեկտրոնային հաշվետվությունների համակարգում: 2020-2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցն ամփոփում և ամբողջացնում է կառավարության կայքերում առկա տեղեկատվությունը:

Հավելյալ տեղեկատվությունը ներառում է հիմնադրամներին, ոչ առևտրային իրավաբանական և ֆիզիկական անձանց նվիրատվությունների տվյալները: Հայաստանը կարող է օգտագործել ԱՃԹՆ-ի հաշվետվությունը՝ արդյունահանման և արտադրատեսակների գների ենթադրությունների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակայնորեն բացահայտելու համար՝ խթանելով եկամուտների կայունությունը:

Պահանջի կատարման առաջընթացը և ուղղիչ գործողությունները

ԱՃԹՆԻ-ի Պահանջը / նախկին ուղղիչ գործողությունը և գնահատումը	ԱՃԹՆ-ի պահանջի բավարարման հարցում առաջընթացի նկարագիրը
Արդյունահանող ոլորտի եկամուտների բաշխումը (Պահանջ 5.1) *Լիովին բավարարված*	Համաձայն Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 5.1 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ վավերացման դեպքում: Այս պահանջի նպատակն է ապահովել արդյունահանման եկամուտների հետագծելիությունը դեպի պետական բյուջե, ինչպես նաև արդյունահանման՝ պետական բյուջեում չգրանցվող եկամուտների միևնույն մակարդակի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Հանրային բացահայտումները ցույց են տալիս, որ սույն նպատակը իրականացվել է: Պետության՝ արդյունահանումից ստացված բոլոր եկամուտները, որոնք 2021 թվականին կազմել են պետական ընդհանուր եկամուտների 8,7%-ը, գրանցվում են կա՛մ պետական, կա՛մ համայնքային բյուջեներում: Առկա են հիմնադրամներին, ոչ առևտրային իրավաբանական և ֆիզիկական անձանց նվիրատվությունների վերաբերյալ մանրամասն հաշվետվություններ՝ ըստ ընկերությունների՝ ներկայացված 2020-2021 թ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում: Պետական և համայնքային բյուջեների ֆինանսական հաշվետվությունները կարելի է գտնել Հայաստանի ԱՃԹՆ-ի էլեկտրոնային հաշվետվության համակարգում: 2020-2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում նկարագրվում է պետական ֆինանսների կառավարումը՝ հաստատելով, որ Հայաստանը հավատարիմ է եկամուտների դասակարգման միջազգային չափանիշներին: Կարելի է ներառել ավելի շատ հողումներ դեպի ազգային և համայնքային բյուջեներ, որոնք համակարգված կերպով բացահայտվում են պետական կայքերում, այլ ոչ թե այս թվերը հրապարակելու համար հիմնվել ԱՃԹՆ-ի հաշվետվությունների և Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքի վրա:
Եկամուտների կառավարումը և ծախսերը (Պահանջ 5.3)	Միջազգային քարտուղարության գնահատականն այն է, որ 5.3 Պահանջը մնում է չգնահատված՝ հաշվի առնելով պահանջի խրախուսվող կողմերը: Այս պահանջի նպատակն է ամրապնդել արդյունահանման եկամուտների կառավարման հանրային վերահսկողությունը, արդյունահանումից

Չգնահատվող	ստացվող եկամուտների օգտագործումը կոնկրետ պետական ծախսերի և բյուջետային գործընթացի հիմքում ընկած ենթադրությունները ֆինանսավորելու համար: Թեև այս տեղեկատվության մեծ մասը սիստեմատիկորեն բացահայտվում է, թվում է, որ որոշ խրախուսվող կողմեր բացակայում են, ինչն ապահովում է սույն նպատակի մասամբ իրագործումը: Ինչ վերաբերում է պետական բյուջեից բխող ծախսային որոշումներին, ապա պատասխանատու պետական մարմինը համարվում է Ֆինանսների նախարարությունը, որն էլ համակարգված կերպով բացահայտում է տվյալ թեմային առնչվող տեղեկատվությունը: Արդյունահանող բոլոր եկամտային հոսքերը հստակորեն ներառված են պետական բյուջեում, և բյուջեից նախատեսված մուտքեր չկան կոնկրետ ծրագրերի և աշխարհագրական տարածքների համար, բացառությամբ բնապահպանական հարկերի: «ARLIS»-ում տրամադրվում են պետական բյուջեների և դրանց աուդիտի և հաշվառման ընթացակարգերի վերաբերյալ կանոններն ու կանոնակարգերը: Թեև աուդիտի և հաշվապահական հաշվառման ընթացակարգերն ամփոփվում են ԱՃԹՆ-ի հաշվետվության միջոցով և համակարգված կերպով ներկայացվում են կառավարության կայքերում, պարզ չէ, թե որտեղ կարելի է գտնել արդյունահանման և արտադրատեսակների գների ենթադրությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որը լույս կսփռի եկամուտների կայունության, ռեսուրսների կախյալության և եկամուտների կանխատեսման վրա: Պարզ չէ նաև, թե կառավարության կայքերում որտեղ են հրապարակվում պետական և համայնքային բյուջեների աուդիտի հաշվետվությունները:
Նոր ուղղիչ գործողություններ և առաջարկություններ	
• 5.1 Պահանջի կատարումն ամրապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանը շարունակի իր՝ կառավարության կայքերում ազգային և համայնքային բյուջեի տվյալների համակարգված բացահայտումը խթանելու ջանքերը՝ ի հակադրություն ԱՃԹՆ-ի հաշվետվությունների և Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքի միջոցով այս տվյալների հրապարակմանը: • 5.3 Պահանջի կատարումն ամրապնդելու համար խրախուսվում է, որ Հայաստանը հրապարակի արդյունահանման և արտադրատեսակների գների ենթադրությունների վերաբերյալ տեղեկատվությունը՝ խթանելու եկամուտների կայունությունը: Նույն կերպ, խրախուսվում է, որ Հայաստանը տրամադրի հղումներ, որտեղ կարելի է գտնել կառավարության կայքերում հրապարակված ազգային և համայնքային բյուջեների աուդիտի հաշվետվությունները:	

Տեղական ինքնակառավարման մարմիններին կատարվող վճարումները (4.6, 5.2, 6.1 Պահանջներ)

Մոդուլի շրջանակում առաջընթացի դիտարկում

Հայաստանի արդյունահանման ոլորտում գործում է թե՛ տեղական ինքնակառավարման մարմիններին (համայնքների բյուջեներ) ուղղակիորեն կատարվող վճարումների և թե՛ փոխանցումների պրակտիկան՝ հանդիսանալով հանրային հետաքրքրություն ներկայացնող խնդիր և դառնալով վերջին օրենսդրական փոփոխությունների առարկան: Այս փոփոխությունների նպատակն է մեծացնել համայնքների եկամուտները, պարզեցնել նախագծերի առաջարկների գործընթացը, որով համայնքները դիմում են համայնքների բյուջեներ կատարվող փոխանցումների համար, ինչպես նաև խթանել սոցիալական ծախսեր կատարող ընկերությունների թափանցիկությունն ու շրջանակը: Տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղակիորեն կատարվող վճարումները չեն կազմում համայնքային բյուջեների մեծ մասը, սակայն փոխանցումները կարևոր դերակատարում ունեն բնապահպանական և առողջապահական ծրագրերի ֆինանսավորման հարցում:
Հայաստանում առկա են ինչպես պարտադիր սոցիալական ծախսերը, այնպես էլ հավելյալ կամավոր սոցիալական ծախսումները և բնապահպանական վճարները՝ մեծ հետաքրքրություն ներկայացնելով քաղաքացիական հասարակության համար: Սոցիալական ծախսերը համաձայնեցվում են համայնքների և ընկերությունների միջև և ամրագրվում ընկերությունների հանքարդյունաբերության թույլտվություններում, մինչդեռ բնապահպանական վճարները սահմանվում են օրենքով՝ ընկերության գործունեության բացասական բնապահպանական ազդեցությանը հակազդելու նպատակով: Այս ոլորտում կատարված վերջին փոփոխությունների արդյունքում ընդլայնվել է բնապահպանական վճարումներ կատարող ընկերությունների շրջանակը և նաև հստակեցվել են բնապահպանական հարկի դրույքաչափերը:
Քաղաքացիական հասարակությունը գնահատում է ԱՃԹՆ-ի հաշվետվության դերը հատկապես սոցիալական ծախսումների տեսանելիությունը բարելավելու հարցում, և խմբակցության՝ խորհրդակցություններին մասնակցած անդամները ընդգծում են համայնքային մակարդակում սոցիալական ծախսումների բաշխման և իրացման փաստաթղթավորման շարունակական առաջընթացի անհրաժեշտությունը: Սոցիալական ծախսերի և բնապահպանական վճարների հետ կապված հետագա առաջընթացի կարևորության ֆոնին բոլոր խմբակցությունները համաձայն են, որ սույն ներդրումները համայնքների տնտեսական զարգացմանն աջակցելու անբաժանելի մասն են կազմում, նույնիսկ այն բանից հետո, երբ արդյունահանող ընկերություններն այլևս ակտիվ չեն տվյալ տարածքում: Ըստ Քարտուղարության գնահատականի՝ 4.6 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ վավերացման դեպքում: Այս պահանջի նպատակն է շահառուներին համայնքներ ստացվող օգուտների մասին պատկերացում կազմելու

հնարավորություն ընձեռել՝ ընկերությունների կողմից համայնքների բյուջեներ ուղղակիորեն կատարվող վճարումների թափանցիկության, ինչպես նաև համայնքների կողմից ներքին արդյունահանող եկամուտների կառավարման նկատմամբ պետական վերահսկողության ամրապնդման միջոցով: Սույն նպատակն իրականացվել է՝ հաշվի առնելով ԲՇԽ-ի քննարկումները, որոնց համաձայն տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղակիորեն կատարվող վճարումները (վարձավճարները) հաշվետվության համար համարվում են էական:

Պահանջի կատարման առաջընթացը և ուղղիչ գործողությունները

ԱՃԹՆԻ-ի Պահանջը / նախկին ուղղիչ գործողությունը և գնահատումը	ԱՃԹՆ-ի պահանջի բավարարման հարցում առաջընթացի նկարագիրը
Տեղական ինքնակառավարման մարմիններին կատարվող վճարումները (Պահանջ 4.6) *Լիովին բավարարված*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 4.6 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ վավերացման դեպքում: Այս պահանջի նպատակն է շահառուներին տեղական ինքնակառավարման մարմիններ ստացվող օգուտների մասին պատկերացում կազմելու հնարավորություն ընձեռել՝ ընկերությունների կողմից համայնքային բյուջեներին ուղղակիորեն կատարվող վճարումների թափանցիկության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներքին արդյունահանող եկամուտների կառավարման նկատմամբ պետական վերահսկողության ամրապնդման միջոցով: Սույն նպատակն իրականացվել է՝ հաշվի առնելով ԲՇԽ-ի քննարկումները, որոնց համաձայն տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղակիորեն կատարվող վճարումները (վարձավճարները) հաշվետվության համար համարվում են էական: Խորհրդակցությունների ընթացքում Ազգային քարտուղարության աշխատակիցները նշել են, որ համայնքային բյուջեներ ուղղակիորեն կատարվող վարձակալության վճարները սահմանվում են համայնքների և արդյունահանող ընկերությունների միջև կնքված պայմանագրերում, մինչդեռ հողի և անշարժ գույքի հարկերը սահմանվում են Հարկային օրենսգրքում: Այս վճարումները գործնականում գնահատվում են 2020-2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում, որում ներառված են նաև ԲՇԽ-ի՝ համայնքային բյուջեներ ուղղակիորեն կատարվող էական վճարումների քննարկումները: Վարձակալության վճարները համայնքային բյուջեներ ուղղակիորեն կատարվող միակ վճարներն էին, որոնք հաշվետու ժամանակաշրջանում համարվել են էական՝ հաշվի առնելով, որ հողի և անշարժ գույքի հարկերը սահմանված էականության շեմից ցածր են եղել, և եկամտային այս հոսքը լիովին բացահայտվել և

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկայա 26 • www.eiti.org

	համադրվել է տվյալների որակի նկատմամբ պատշաճ ուշադրությամբ՝ համաձայն 4.9 Պահանջի. հաշվետվության հարցաթերթերը հաստատվել են ԲՇԽ-ի կողմից, իսկ ընկերությունների հաշվետվությունների համար պահանջվել են բարձրաստիճան ղեկավարության և գլխավոր հաշվապահների ստորագրությունները: Համայնքային բյուջեներ ուղղակիորեն կատարվող էական վճարումները բացահայտվում են հանքարդյունաբերող ընկերությունների և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից՝ համակարգված բացահայտումների միջոցով, թեև համակարգված կերպով բացահայտվող տվյալների հավաստիությունն ապահովելու ոչ հստակ դրույթներով:
Տեղական ինքնակառավարման մարմիններին կատարվող փոխանցումները (Պահանջ 5.2) *Լիովին բավարարված*	Ըստ Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 5.2 Պահանջը լիովին բավարարված է, ինչպես նախորդ վավերացման դեպքում: Այս պահանջի նպատակն է ՏԻՄ մակարդակում շահառուներին հնարավորություն ընձեռել՝ գնահատելու, թե արդյոք արդյունահանումից ստացվող եկամուտների՝ համայնքային բյուջեներ արվող փոխանցումները և դրանց կառավարումը համահունչ են օրենքին, և սույն նպատակը իրականացվել է: Խորհրդակցություններին մասնակցած պետական պաշտոնյաները 5.2 Պահանջի նպատակը համարել են կատարված: Կառավարության՝ խորհրդակցություններին մասնակցած ներկայացուցիչները նշել են, որ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում կատարված վերջին փոփոխությունները (այստեղ և այստեղ) ուղղված են բնապահպանական և առողջապահական ծրագրերի համար համայնքային բյուջեներ արվող փոխանցումների միջոցով համայնքներ ստացված դրամական միջոցների ավելացմանը: Այս շահառուները հաստատել են, որ փոփոխություններն ընդլայնել են այն ընկերությունների թիվը, որոնցից պահանջվում է բնապահպանական հարկ վճարել պետական բյուջե, որոնք այնուհետև օգտագործվում են համայնքային բնապահպանական և առողջապահական ծրագրերը ֆինանսավորելու նպատակով: Հայաստանի ԱՃԹՆ-ի մատնանշմամբ հանքարդյունաբերության ոլորտում առկա են արդյունահանումից ստացվող եկամուտների՝ համայնքային բյուջեներ կատարավող փոխանցումներ: Համայնքների և այլ ՏԻՄ կառույցների բյուջեներ փոխանցված եկամուտները բացահայտվում են պետական բյուջեի, ԱՃԹՆ-ի հաշվետվության և Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքի միջոցով: ԱՃԹՆ-ի հաշվետվության մեջ և Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում ներկայացված փաստաթղթերում բացատրվում են համայնքային մակարդակով բնապահպանական և առողջապահական ծրագրերի ֆինանսավորման նպատակով համայնքային բյուջեներ արվող փոխանցումների հաշվարկման բանաձևերը, իսկ 2020-2021 թ.

	Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում բացահայտվում են օրենքով սահմանված կարգով փոխանցումների և փաստացի կատարված փոխանցումների միջև անհամապատասխանությունները՝ ըստ շահառու ՏԻՄ ստորաբաժանման: Կառավարության՝ խորհրդակցություններին մասնակցած ներկայացուցիչները բացատրել են, որ տվյալ տարում չփոխանցված միջոցները մնում են պետական բյուջեում: Համայնքային բյուջեներ արվող փոխանցումները սահմանվում և ղեկավարվում են «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով, որում վերջերս փոփոխություններ են կատարվել, որոնք Ազգային ժողովն ընդունել է 2020 թվականի մայիսի 6-ին: Այս փոփոխություններն ուժի մեջ են մտել 2021 թվականի հունվարի 1-ից: Դրանց շարքում գլխավոր փոփոխությունը վերաբերում է բնապահպանական հարկեր վճարող ընկերությունների թվի ընդլայնմանը՝ հինգ արդյունահանող ընկերությունից սույն պահանջը տարածելով բոլոր ընկերությունների (և ոչ միայն արդյունահանող ընկերությունների) վրա, որոնք գործում են համայնքում և կարող են բացասական բնապահպանական հետևանքներ ունենալ: Այն համայնքները, որոնք ցանկանում են դրամական միջոցներ ստանալ, պետք է տարեսկզբին լրացնեն և ներկայացնեն նախագծերի առաջարկները: Կառավարության՝ խորհրդակցություններին մասնակցած ներկայացուցիչները նշել են, որ վերջին փոփոխությունները պարզեցրել են դիմում-հայտի գործընթացը, որպեսզի համայնքները կարողանան ավելի հեշտ ու արդյունավետ կերպով դիմել և ստանալ դրամական միջոցներ: Փոփոխությունների համատեքստում վերանայվել են նաև այն ուղեցույցները, որոնք սահմանում են, թե ինչպես պետք է ներկայացնել նախագծի առաջարկները: Ըստ երևույթին, համայնքային բյուջեներ արվող փոխանցումներին վերաբերող տվյալների որակին և ապահովմանն անդրադարձ է արվել 2020 թվականի մայիսի 6-ին հաստատված փոփոխություններում: Բոլոր փոխանցումները փաստաթղթավորված են տվյալ տարվա պետական բյուջեում: 2020-2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում նշվում է, որ 2020 թվականին փոփոխությունների գործընթացի իրականացման ժամանակահատվածում համայնքային բյուջե արված որևէ փոխանցում չի եղել: 2021 թվականին կատարված փոխանցումները փաստաթղթավորված և համադրված են 2020-2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում և պետական բյուջեի Հավելված 12-ում: Ըստ երևույթին, եկամուտների և նախագծերի կառավարման վերաբերյալ տեղեկատվությունը կարելի է գտնել նախագծերի առաջարկների փաստաթղթերում, որոնք համայնքները պետք է ներկայացնեն դրամական միջոցներ ստանալու համար: Այս առաջարկները կարելի է գտնել այն ՏԻՄ կայքերում, որոնք դիմում են դրամական միջոցներ ստանալու համար, ինչպես նաև մանրամասն ներկայացված են 2020-

	2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում: Հաշվի առնելով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում վերջերս արված փոփոխությունները՝ պարզ է դառնում, որ Հայաստանն ակտիվորեն աշխատում է համայնքային բյուջեներ կատարվող փոխանցումների համակարգի բարելավման և ընդլայնման ուղղությամբ, և բարեփոխումներին ուղղված այս աշխատանքները լիովին փաստաթղթավորված են 2020-2021թթ. ԱՃԹՆ-ի հաշվետվության մեջ: Համայնքային բյուջեներ կատարվող փոխանցումների հետ կապված հավելյալ բարեփոխումները փաստաթղթավորված են Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում, և կիրառության մեջ են մտել 2023 թվականի հունվարի 1-ից, ուստի կիրառելի չեն Հայաստանի ԱՃԹՆ-ի վերջին զեկույցով վերանայված ժամանակահատվածում: Սույն բարեփոխումներն իրականացվել են «ՀՀ բյուջետային համակարգի» և «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» օրենքներում լրացումներ կատարելու մասին օրենքներով, որոնցով արդյունահանող յուրաքանչյուր ընկերության կողմից վճարված ռոյալթիի 2%-ից մասհանումներ կկատարվեն համայնքային բյուջեներ: Ըստ երևույթին, համայնքային բյուջեներ փոխանցումների համար էականության շեմ չի սահմանվել, ինչը նշանակում է, որ համայնքային բյուջեներ արված բոլոր փոխանցումները համարվել են էական:
Սոցիալական և բնապահպանական ծախսերը (Պահանջ 6.1) *Գրեթե բավարարված*	Համաձայն Միջազգային քարտուղարության գնահատականի՝ 6.1 Պահանջը գրեթե բավարարված է, ինչը նախորդ վավերացումից ի վեր հետընթացի արձանագրում է: Այս պահանջի նպատակն է ապահովել արդյունահանող ընկերությունների սոցիալական և բնապահպանական ներդրումների հանրային ընկալումը, ինչպես նաև գնահատել, թե սոցիալական և բնապահպանական ծախսումների համատեքստում որքանով են ընկերությունները կատարում իրենց իրավական և պայմանագրային պարտավորությունները: Քարտուղարության գնահատմամբ՝ նպատակը գրեթե իրականացվել է՝ հաշվի առնելով, որ պարտադիր սոցիալական ծախսերի՝ կառավարման օղակ չհանդիսացող շահառուների ինքնությունը համապարփակ կերպով չի բացահայտվել: ԲՇԽ-ի կողմից ԱՃԹՆ-ի հաշվետվության համար էական պարտադիր սոցիալական և բնապահպանական վճարների ընտրության էականության հատուկ շեմ սահմանելու որևէ ապացույց չկա: Այնուամենայնիվ, սոցիալական ծախսերը ներառվել են համադրման շրջանակում: Ինչ վերաբերում է սոցիալական ծախսերին, ապա 2020-2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցը հաստատում է, որ հանքարդյունաբերության ոլորտում կան ինչպես պայմանագրային, այնպես էլ կամավոր սոցիալական ծախսումներ: Կառավարության՝ խորհրդակցություններին մասնակցած ներկայացուցիչները նշել են, որ ԲՇԽ-ն շարունակական ջանքեր է գործադրում պարտադիր սոցիալական ծախսերի էականության շեմ սահմանելու ուղղությամբ: Դիտարկվող

	ժամանակահատվածում պարտադիր սոցիալական վճարումների մեծ մասը կատարվել է կանխիկ եղանակով, կառավարման օղակ հանդիսացող շահառուներին: Կանխիկ վճարումների համար պարտադիր սոցիալական ծախսերը տարանջատվել են ըստ ընկերությունների և կառավարման օղակ հանդիսացող շահառուների: 2020-2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցում նշվում է, որ բնաիրային տեսքով միայն մեկ պարտադիր սոցիալական ծախս է կատարվել՝ տրամադրելով ծախսի արժեքի ու բնույթի վերաբերյալ մանրամասներ: Ստացվում է, որ սոցիալական որոշ վճարումներ են կատարվել կառավարման օղակ չհանդիսացող շահառուներին: Սոցիալական պարտավորությունների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը հասանելի է հանքարդյունաբերության թույլտվությունների հավելվածներում: Այնուամենայնիվ, 2020-2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցի վերլուծությունից պարզ է դառնում, որ ոչ բոլոր հավելվածներն են առկա: Պարտադիր սոցիալական ծախսերի մասին զեկուցում են կառավարությունը և ընկերությունները, և դրանք ներառվել են համադրման շրջանակում, որի արդյունքում պարզվել է, որ արդյունահանող մեկ ընկերություն չի կատարել պարտադիր սոցիալական ծախսեր կատարելու իր պահանջները: Ազգային քարտուղարության՝ խորհրդակցություններին մասնակցած աշխատակիցները բացատրեցին, որ սույն՝ «Վայք Գոլդ» ընկերության պայմանագիրը խզվել է 2020 թ., ինչով էլ պարզ է դառնում, թե ինչու ընկերությունը 2020 թ. նման վճարումներ չի կատարել: 2020-2021 թթ. Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցը նաև տեղեկատվություն է տրամադրում կամավոր սոցիալական ծախսերի մասին, որոնք կատարվում են կանխիկ և բնաիրային տեսքով՝ ներառելով արդյունահանող ընկերությունների կողմից ֆինանսավորվող կամ իրականացվող նախագծերի նկարագրությունը: Վավերացման հաշվետվության աշխատանքային տարբերակի վերաբերյալ ԲՇԽ-ի մեկնաբանությունները ընդգծում են սոցիալական ծախսերի հետ կապված նախատեսվող օրենսդրական փոփոխությունները: Մասնավորապես, ակնկալվում է, որ համապատասխան օրենսդրությամբ կհստակեցվի, որ հանքարդյունաբերության թույլտվություն ունեցող բոլոր անձանցից պահանջվում է սոցիալական վճարումներ կատարել համայնքների բյուջեներին և կոդավորել տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացվող հաշվետվությունների պահանջները: Քարտուղարությունը ողջունում է սույն մեկնաբանությունները և նախատեսվող բարեփոխումները, սակայն գտնում է, որ հանրության՝ արդյունահանող ընկերությունների սոցիալական և բնապահպանական ներդրումների վերաբերյալ ըմբռնման ամրապնդման նպատակը շարունակում է գրեթե բավարարված լինել 2020 և 2021 ֆինանսական տարիների համար՝ հաշվի առնելով, որ պարտադիր սոցիալական ծախսումների ոչ պետական շահառուների ինքնության բացահայտումը

	դիտարկվող ժամանակաշրջանում համապարփակ կերպով չի իրականացվել: ԱՃԹՆ-ի հաշվետվությունը բացահայտում է կառավարությանը կատարվող օրենքով սահմանված պարտադիր բնապահպանական վճարները՝ ներառյալ բնապահպանական հարկերը (*տես Պահանջ 5.2*) և բնօգտագործման վճարները՝ մատնանշելով, սակայն, որ չկան կամավոր բնապահպանական ծախսեր: Կառավարությանը բոլոր պարտադիր բնապահպանական վճարները կատարվել են, ինչը հաստատվել է ԱԱ-ի կողմից խորհրդակցությունների ընթացքում: Ըստ երևույթին, ոչ մի բնապահպանական վճար չի ներառվել համադրման շրջանակում: Բնապահպանական վճարների մասին տեղեկատվությունը բացահայտվում է կառավարության կողմից՝ Հայաստանի Էլեկտրոնային հաշվետվության պորտալում, ինչպես նաև ներառված է ընկերությունների հաշվետվության հարցաթերթերում, որոնք ներառվել են Հավելված 6-ում: Հաշվետվության այս երկու մեթոդների միջոցով ըստ եկամտային հոսքի, ընկերության և պետական մարմնի տարանջատումը հասանելի է հանրությանը: Կամավոր բնապահպանական ծախսեր չեն բացահայտվել:
Նոր ուղղիչ գործողություններ և առաջարկություններ	
• 4.6 Պահանջի կատարումը խթանելու նպատակով խրախուսվում է, որ Հայաստանն ամրապնդի արդյունահանող ընկերությունների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղակիորեն կատարվող վճարումների վերաբերյալ տվյալների հավաստիությունն ապահովելու դրույթները՝ կառավարության և արդյունահանող ընկերությունների կողմից այս տվյալների համակարգված բացահայտման գործընթացում: • 5.2 Պահանջի կատարումը խթանելու նպատակով խրախուսվում է, որ Հայաստանը շարունակի համայնքային բյուջեներ արվող փոխանցումների վերաբերյալ վերջին բարեփոխումների իրականացումը և ապահովի այդ տեղեկատվության համակարգված հրապարակումը կառավարության կայքերում: • 6.1 Պահանջի համաձայն՝ Հայաստանից պահանջվում է մատնանշել պարտադիր սոցիալական ծախսերի՝ կառավարման օղակ չհանդիսացող բոլոր շահառուներին: Պահանջի կատարումը խթանելու նպատակով խրախուսվում է, որ Հայաստանն աշխատի համապատասխան պետական մարմինների և արդյունահանող ընկերությունների հետ՝ ամրապնդելու կառավարությանն արված սոցիալական ծախսերի և բնապահպանական վճարների, ինչպես նաև երրորդ կողմերի օգտին կատարված ծախսերի համակարգված բացահայտումները:	

Նախապատմություն

Արդյունահանող ոլորտի նկարագիրը

Արդյունահանող ոլորտի ամփոփ նկարագիրը հասանելի է ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքէջում:

ԱՃԹՆ-ի ներդրման պատմությունը

ԱՃԹՆ-ի ներդրման պատմությունը հասանելի է ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքէջում:

Վավերացման գործընթացի բացատրությունը

Վավերացման գործընթացի նկարագիրը հասանելի է ԱՃԹՆ-ի կայքում:[3] Վավերացման ուղեցույցում առկա է մանրամասն տեղեկատվություն, թե ինչպես պետք է գնահատել ԱՃԹՆ-ի պահանջները, մինչդեռ ավելի մանրամասն Վավերացման ընթացակարգը ներառում է ԱՃԹՆ-ի Միջազգային քարտուղարության կողմից Վավերացման տիպային ընթացակարգը:

Միջազգային քարտուղարության՝ Հայաստանի վավերացման գործընթացի իրականացման աջակցման թիմում էին Մարկ Բերնեթը և Լիզա Սվիլանդը, մինչդեռ Վավերացման թիմը բաղկացած էր Օլեսիա Տոլոչկոյից, Ռայլի Զեկկայից և Լյուսիա Կիրիմելյոյից: Որակի ապահովման ներքին ստուգումն իրականացվել է Գեյ Օրդենեսի, Գիլբերթ Մակորեի, Ալեքս Գորդիի և Մարկ Ռոբինսոնի կողմից:

Գաղտնիություն

Տվյալների հավաքագրման և գնահատման մանրամասն հարցաթերթերը հանրությանը հասանելի են Վավերացման հանձնաժողովի ներքին էջում՝ այստեղ:

ԱՃԹՆ-ի վավերացման հաշվետվություններում շահառուների մեկնաբանությունների մեջբերման պրակտիկան իրականացվում է ըստ խմբակցության՝ առանց շահառուի կամ շահառուի կազմակերպության անունը հիշատակելու: Անհրաժեշտության դեպքում շահառուի ինքնության գաղտնիությունը պահպանվում է, և մեկնաբանությունները մեջբերելիս խմբակցությունը չի նշվում: Զեկույցի այս աշխատանքային տարբերակը կիսվում է շահառուների հետ խորհրդակցական նպատակներով և շարունակում է մնալ որպես գաղտնի աշխատանքային փաստաթուղթ, քանի դեռ Խորհուրդը որոշում չի կայացրել սույն հարցի վերաբերյալ:

[3] Տես՝ https://eiti.org/validation

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org

Վավերացման ժամանակացույցը

Հայաստանի վավերացման գործընթացը մեկնարկել է 2023 թվականի հուլիսի 1-ին: Շահառուների կարծիքների հավաքագրման հանրային հայտը բացվել է 2023 թվականի ապրիլի 1-ին: Շահառուների հետ խորհրդակցություններն անցկացվել են առցանց տարբերակով 2023 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Հաշվետվության աշխատանքային տարբերակը վերջնական տեսքի է բերվել՝ 2024 թվականի հունվարի 15-ին: Հիմնվելով ԲՇԽ-ի կողմից 2024 թվականի փետրվարի 12-ին ակնկալվող մեկնաբանությունների վրա՝ Վավերացման հաշվետվությունը վերջնական տեսքի է բերվել, որպեսզի ներկայացվի ԱՃԹՆ-ի խորհրդի դիտարկմանը:

Նյութեր

- Վավերացման տվյալների հավաքագրման ֆայլ – Շահառուների ներգրավվածություն
- Վավերացման տվյալների հավաքագրման ֆայլ – Թափանցիկություն
- Վավերացման տվյալների հավաքագրման ֆայլ – Արդյունքներ և ազդեցություն

Հեռ՝ +47 222 00 800 • Էլ. հասցե՝ secretariat@eiti.org • Թվիթեր՝ @EITIorg
Հասցե՝ Նորվեգիա, Օսլո 0151, Ռոդհուսկաթա 26 • www.eiti.org